

ԴԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ  
ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԵՎ  
ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿՈՐՈՒՄՏԵՐԸ  
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ  
ԵՎ ԴՐԱՆ ՀԱՏՈՒՅՄԱՆ  
ԴԻՄԱԽՆԴԻՐՆԵՐԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹ-ՑՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
Մ. ՔՈԹԱՅԱՄԻ ԱՆՎԱՐ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

հ2

**ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ  
ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿՈՐՈՒՏՆԵՐԸ  
ԺԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅՁՈՒՄ  
ԵՎ ԴՐԱՆ ՀԱՏՈՒՅՄԱՆ ՀԻՄԱԽԱՆԴՐՆԵՐԸ**

Գիտական հոդվածների ժողովածու – 2015

Ժողովածուն նվիրված է հայոց ցեղասպանության  
100-րդ փարելիցին (1915-2015)

ԵՐԵՎԱՆ  
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹ-ՑՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹ-ՑՈՒՆ  
2015

ՀՏԴ 94 (479.25)  
ԳՄԴ 63.3 (52)  
Հ 241

Երաշխավորված է հրատարակության ՀՀ ԳԱԱ  
Մ. Քորանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Գիտական խմբագիր՝  
պարմ. գիտ. թեկնածու, դոցենտ

## Ա. Մարության

Հեղինակներ՝ Վ. Հարությունյան, Գ. Կիրակոսյան, Ա. Թամազյան,  
Ա. Աստոյան, Ա. Մակարյան, Թ. Մանասերյան,  
Թ. Հարությունյան, Ա. Քերոբյան, Ա. Բաղդասարյան,  
Ս. Լազարյան

Հ 241 Հայ ժողովրդի ժողովրդագրական և նյութական կորուստները  
ցեղասպանության լճաքցրում և դրանց հատուցման հիմնա-  
խնդիրները / Ա. Մարությանի խմբագրությամբ - Եր.: ՀՀ ԳԱԱ  
«Գիտություն» հրատ., 2015. - 184 էջ:

Ժողովածուն նվիրված է հայոց ցեղասպանության 100-րդ տա-  
րելիցին (1915-2015):

Գրքում ընդգրկված հոդվածները պատկերացնում են տախի  
հայոց ցեղասպանության պատճառած ժողովրդագրական, նյու-  
թական ու ֆինանսական կորուստների և դրանց հնարավոր հա-  
տուցման ուղիների վերաբերյալ: Այն պատրաստել է ՀՀ ԳԱԱ  
տնտեսագիտության ինստիտուտը՝ ներգրավելով տարբեր ոլորտի  
մասնագետների:

ՀՏԴ 94 (479.25)  
ԳՄԴ 63.3 (52)

ISBN 978-5-8080-1169-4

© ՀՀ ԳԱԱ Մ. Քորանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 2015թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
1. ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ	
ՃԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՄՍԱՆԻՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆ ԲՆՈՐՈՇ ՀԱՏՎԱՆԻԵՑԵՐԸ	5
2. ԱՐԹՈՒՐ ԹԱՄԱԶՅԱՆ	
ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ, ՆՅՈՒԹԱԿԱՆ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՈՐՈՒՏՆԵՐԻ ՄԵԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	45
3. ԱՆԱՐԴԻՏ ԱՍՏՈՅՅԱՆ	
ՀԱՅԵՐԻ ՈՒՆԵՐԵՐԿՈՒՄ ՈՐՊԵՍ ՀԱՅՈՒ ՄԵԾՈՒՆ ԴՐԴԱՊԱՏԽԱՆ	66
4. ԱՆՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ	
ԹՈՒՐՔԻԱՅԻ ԿՈՂՄԻՒՅԻ ԵՍՊՐՈՊՐԻԱՅՎԱԾ ՀԱՅԵՐԻ ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԴՐԱՆ ԴԻՄԱՑ ՏՐՎՈՂ ՓՈԽՀԱՏՈՒՅԹԱՆ ՀԻՄՆԱՆԴԻՐՆԵՐԸ ՄԱՐԲՈՒՄ ՓԱՏԱՐԿՆԵՐԻ ՀՐԱՄԱ ՎՐԱ	95
5. ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ	
ԹԱՄԱՅՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵԿԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ ՃԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ	121
6. ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	
ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ ԱՐՄԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ	
ՃԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿՈՐՈՒՏՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՆ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎՈՒՄ ՊԱՀՎՈՂ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ	144
7. ԱՐՄԵՆ ԲԱՐԴԱՍԱՐՅԱՆ	
ՀԱՅՈՒ ՃԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՏՈՒՄԱՆ ՀՆԱՐՎՈՐ ՁԵՎԵՐԻ ՀԻՄՆԱՆԴԻՐՆԵՐԻ ԾՈՒՐԾ	154
8. ՄԵՐԳԵՅ ԱԱԶԱՐՅԱՆ	
ՃԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՍՏԵՂԾՈՒՄ. ՀԱՏՈՒՄԱՆ ՓԱԹԵԹԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ	171
ՄԵՐ ՀԵՊԻՆԱԿՆԵՐԸ	183

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ ՀՀ ԳԱԱ Մ. Քորանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտը, ակադեմիկոս Յուրի Սուվարյանի առաջարկությամբ և Վկաղիմիր Հարությունյանի զիսավորությամբ ձեռնամուխ եղավ «Հայ ժողովրդի ժողովրդագրական և նյութական կորուստները ցեղասպանության ընթացքում և դրանց հատուցման հիմնախնդիրները» խորագրով զիտական թեմայի կատարմանը: Անշուշտ նման պատասխանատու ուսումնասիրությունը միայն տնտեսագետ հետազոտողների խնդիր լինել չի կարող: Ուստի ինստիտուտը պայմանագրային հիմունքներով սկսում է ներգրավել նաև մասնագետներ այլ գերատեսչություններից (ՀՀ Ազգային ժողով, ՀՀ վարչապետի աշխատակազմ, զիտական կենտրոններ), ինչպես նաև այլ մասնագետներ (պատմաբաններ՝ ԵՊՀ-ից, իրավաբաններ): Խոկ կատարված զիտական հետազոտությունը խմբագրել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի վարիչ, պատմական զիտությունների թեկնածու, դոցենտ Արմեն Մարությանը:

**Վկաղիմիր Հարությունյան**  
Ինստիտուտի գնորդներ  
դաստիարակության դոկտոր, պրոֆեսոր

## ԺԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՊՐԱՆՅԱ ԲՆՈՐԻԾ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Համաշխարհային նորագույն պատմության մեջ ուսայական, ազգային, էթնիկական կամ կրոնական հատկանիշներից ելնելով մարդկանց ոչնչացումը որպես ցեղասպանություն իր իրավական գնահատականը ստացել է: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան Թուրքիայի կողմից հայերի զանգվածային ոչնչացման հետևանքով<sup>1</sup>: Ինչպես նշում է ամերիկյան հետազոտող Մ. Ադալբերգը, 20-րդ դարում Եվրոպայում ցեղասպանությունների հիմնական պատճառը որոշ՝ մասնավորապես գերմանացի և բուրք ժողովուրդների կողմից բացառիկության զգացողությունն էր, ինչը հանգեցրեց ազգային և ուսայական ուազմական բախումների<sup>2</sup>:

Պետք է նշել, որ միայն Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո ցեղասպանությունը պաշտմապես որպես մարդկության դեմ կատարված ծանրագույն հանցագործություն, որը չունի վաղեմության ժամկետներ: Ցեղասպանության մասին իրավական ակտերի հիմքում դրվեցին հիտլերյան Գերմանիայի ուազմական հանցագործներին դատապարտած Նյուրնբերգի միջազգային զինվորական տրիբունայի կողմից մշակված հիմնական սկզբունքները: Հատկանշական է, որ Նյուրնբերգյան գործընթացում ցեղասպանու-

<sup>1</sup> Николаева Ю.В. Преступления против мира и безопасности человечества. М., 1999г. стр. 29, Панов В. П. Международное уголовное право. М., 1997г. стр. 59-60.

<sup>2</sup> Adalberg M. A. Races at War: Nationalism and Genocide in Twentieth Century Europe. Abstract of Thesis degree of M.L. Naval Postgraduate School, California, 2005.

թյունը բնութագրվեց որպես քաղաքացիական բնակչության ազգային կամ ռասայական խմբերի կանխամտածված և համակարգված ոչնչացում՝ դրանց վերացման նպատակով։ Այսպիսով, առաջ քաշվեց այն գաղափարը, որ ցեղասպանությունը միակողմանի զանգվածային սպանություններ է, որի ժամանակ պետությունը կամ այլ գերիշխող ուժը նպատակ ունի ոչնչացնել ազգային, էթնիկական և կրոնական խմբերի զգալի մասին, շատ հաճախ այդ խմբերի պատկանելությունը ինքնուրույն որոշելով<sup>3</sup>։

ՄԱԿ-ի գիսավոր ասամբլեայի 3-րդ նստաշրջանում ընդունվեց ցեղասպանության մասին կոնվենցիան, որն ուժի մեջ մտավ 1951 թվականին։ Ծառ հեղինակների կարծիքով, նշված կոնվենցիայի ընդունմամբ սկիզբ դրվեց ցեղասպանության վերաբերյալ ժամանակակից միջազգային իրավունքի ձևավորմանը։ Համաձայն նշված կոնվենցիայի գաղափարախոսության, ցեղասպանությունը հանցագործությունների հանցագործությունն է<sup>4</sup>։

Ընդհանուր առմամբ, «ցեղասպանություն» հասկացությունը 1944 թվականին շրջանառության մեջ է դրել քրեական և միջազգային իրավունքի մասնագետ, փաստարան Ռաֆայել Լեմկինը։ Ցեղասպանություն՝ «գենոցիդ», հասկացությունն առաջացել է հունարեն «ռասա» կամ «ցեղախումբ» և լատիներեն «սպանել» բառերի համակցումից։ Այդ հասկացությունը նաև առաջարկեց իրենքների նկատմամբ նացիստական Գերմանիայի կողմից իրականացված բարբարոսական գործողությունների դասակարգման նպատակով։ Մասնավորապես, դրա վերաբերյալ Ռ. Լեմկինը նշում է. «Ցեղասպանության

տակ մենք նկատի ենք առնում ազգի կամ էթնիկական խմբի ոչնչացումը... ցեղասպանությունն ուղղված է ազգային խմբի՝ որպես ամբողջության, դեմ, իսկ ձեռնարկվող քայլերն ուղղված են մարդկանց՝ ոչ թե առանձին անհատների, այլ որպես ազգային խմբի անդամների դեմ»<sup>5</sup>։ Սակայն, նրա կարծիքով, ցեղասպանությունը կարող է դրսորվել ոչ միայն ֆիզիկական, այլև «մշակութային ոչնչացման» միջոցով<sup>6</sup>։ «Ամբողջությամբ ցեղասպանությունը պարտադիր չէ, որ նշանակի ազգի ակնքարբային ոչնչացում....։ Այն, ավելի շուտ, ենթադրում է գործողությունների կոորդինացված պլան՝ ուղղված ազգային խմբավորումների գոյության հիմքերի ոչնչացմանը՝ այդ խմբերի բնաշնչման նպատակով։ Նման պլանի բաղկացուցիչ մասերն են քաղաքական և հասարակական ինստիտուտների, մշակույթի, լեզվի, ազգային ինքնազիտակցության, կրոնի, տնտեսական իմքերի ոչնչացումը, ինչպես նաև անձնական ազտությունից, անվտանգությունից, առողջությունից, արժանապատվությունից գրկումը»<sup>7</sup>։ Այս կապակցությամբ պետք է նշել, որպես ցեղասպանության առանձին տեսակներ գրականության մեջ տարբերակվում են լինզվողիդը և էթնոցիդը<sup>8</sup>։ Հատկանշական է այն, որ դեռևս 1933 թվականի հոկտեմբերին միջազգային քրեական իրավունքի ունիֆիկացման հիմքերորդ կոնֆերանսում Ռ. Լեմկինն առաջարկեց ժողովուրդների իրավունքների դեմ հանցագործությունները լրացնել մի շարք արարքներով, մասնավորապես, բարբարոսու-

<sup>5</sup> Lemkin Raphael. Axis Rule in Occupied Europe. Washington. Carnegie Endowment for International Peace.1944, p. 79-95.

<sup>6</sup> Бем М. В. Эволюция концепции геноцида Р. Лемкина//Российский юридический журнал. 2013 г., № 6//СПС «КонсультантПлюс»

<sup>7</sup> Lemkin Raphael. Axis Rule in Occupied Europe. Washington. Carnegie Endowment for International Peace.1944, p. 79-95.

<sup>8</sup> Додонов В. Н., Капикус О. С., Щерба С. П. Сравнительное уголовное право. Особенная часть. Монография/Под ред. С. П. Щербы. - М.: Юрлитинформ. 2010. С. 516).

<sup>3</sup> Кибальник А.Г., Соломоненко И.Г. Преступления против мира и безопасности человечества. СПб., 2004г. стр. 84.

<sup>4</sup> Cassese A. International Criminal Law.Oxford, 2003. P. 96.

թյան և վաճակիզմի ակտերով: Առաջիններին նա վերագրում էր «Քրծիկական, կրոնական կամ սոցիալական խմբերի» ոչնչացմանն ուղղված գործողությունները, անկախ դրանց շարժադրիներից (քաղաքական, կրոնական և այլն), իսկ երկրորդներին՝ «գեղարվեստական և մշակութային ժառանգության համակարգված և կազմակերպված ոչնչացումը»:

1946 թվականին, երբ Նյուրմերգի միջազգային ուղղմական տրիբունալը նացիստական դեկապարությանը դատապարտեց մարդկության դեմ իրազործված հանցագործությունների մեջ, «ցեղասպանություն» բառը ներառվեց դատավճռում, սակայն որպես նկարագրական, այլ ոչ թե իրավական եզրույթ<sup>9</sup>: 1946 թվականի դեկտեմբերի 11-ին Միացյալ ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեան առաջին նատաշրջանում ընդունեց քանաձև, որում մասնավորապես նշված էր. «Ցեղասպանությունը նշանակում է իրաժարվել մարդկանց խմբերի գոյության իրավունքը ճանաչելուց: Դա մարդկային արժանապատվության վիրավորանք է, հանգեցնում է մարդկության համար մեծ կորուստների, զրկում նրանց մշակութային ու այլ արժեքներից և հակասում է Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին, ոգուն և քարոյական օրենքներին»<sup>10</sup>: Պետք է նշել, որ նշված քանաձևը որոշակիորեն տարբերվում էր մի շարք պետությունների (Կուրա, Պանամա, Հնդկաստան) կողմից առաջարկվածից: Վերջինս նպատակ էր հետապնդում ցեղասպանությունը ճանաչել որպես հանցագործություն, որը կարող է իրականացվել ոչ միայն պատերազմական, այլ նաև խաղաղ ժամանակներում:

<sup>9</sup> Приговор Международного военного трибунала [Электронный ресурс]. URL: <http://historic.ru/books/item/f00/s00/z0000021/st048.shtml> (дата обращения: 03.04.2014).

<sup>10</sup> Генеральная Ассамблея ООН. Резолюции 1-й сессии (1946 г.) [Электронный ресурс]. URL: <http://www.un.org/ru/ga/1/docs/1res.shtml> (дата обращения: 04.04.2014).

Այդ նույն նատաշրջանում գլխավոր ասամբլեան առաջարկեց ՍԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդին «գրադպել հարցի անհրաժեշտ ուսումնասիրությամբ՝ ցեղասպանության մասին կոնվենցիայի նախագծի կազմնան համար և այն ներկայացնել հաջորդ նատաշրջանի քննարկմանը»:

1948 թվականի ապրիլի 5-ին ցեղասպանության դեմ պայքարի միջազգային կոնվենցիայի մշակման նպատակով ստեղծված կոմիտեն սկսեց քննարկել ՍԱԿ-ի գլխավոր քարտուղարի կողմից նախապատրաստված կոնվենցիայի նախագիծը, որը պաշտպանության չարժանացավ ԽՍՀՄ պատվիրակության կողմից մի քանի պատճառներով:

Առաջին, որպես ցեղասպանության օրյեկտ, ուսայական և ազգային խմբերին գուգահեռ, առաջարկվում էր դիտարկել նաև «քաղաքական խմբերին»<sup>11</sup>: Խորհրդային պատվիրակության կարծիքով, դրա ընդգրկումը կիակասեր «ցեղասպանություն» հասկացության բովանդակությանը: Բացի այդ, կար նաև մտավախություն, որ այդ դեպքում որպես ցեղասպանություն կիամարվեին նաև Խորհրդային Միությունում իրականացված զանգվածային ռեպրեսիաները:

Երկրորդ, նշված նախագծով առաջարկվում էր ստեղծել ցեղասպանության հարցերով միջազգային տրիբունալ, որը խորհրդային պատվիրակության կարծիքով կդառնար վերպետական մարմին և քաղաքական նպատակներով կօգտագործվեր պետությունների ինքնախանության դեմ:

Հաջորդ օրը, 1948 թվականի ապրիլի 6-ին, Խորհրդային պատվիրակությունը քննարկման ներկայացրեց ցեղասպանության մասին կոնվենցիայի իր նախագիծը, որը բնութագրվում էր հետևյալ առանձնահատկություններով:

<sup>11</sup> Черновицкая Ю. В. «Косвенный» геноцид в современном обществе (социально-философские аспекты) // Вопросы философии. 2008. № 10. С. 165.

Առաջին, առաջարկվում էր ցեղասպանություն համարել ոչ միայն «քնակչության խմբերի ոչնչացումը ուսայական, ազգային, կրոնական շարժադիրներով», այլ նաև նշված խմբերի ոչնչացման ուղղված կյանքի պայմանների ստեղծումը:

Երկրորդ, առաջարկվում էր ցեղասպանություն համարել նաև «ազգային-մշակութային ցեղասպանությունը», որի տակ նկատի էին առնվում ազգային լեզվի օգտագործման, ինչպես նաև ազգային մշակույթի դեմ ուղղված քայլերը և գործողությունները: Որպես այդպիսիք դիտարկվում էին.

- ազգային լեզվի օգտագործման արգելումը կամ սահմանափակումը ինչպես հասարակական, այնպես էլ մասնավոր կյանքում, դպրոցներում ազգային լեզվի դասավանդման արգելը,
- ազգային լեզվով գրքերի կամ այլ տպագիր միջոցների հրատարակման արգելումը կամ ոչնչացումը,
- պատմական և կրոնական հուշարձանների, քանդարանների, փաստարդերի, գրադարանների և ազգային մշակույթի այլ առարկաների ոչնչացումը<sup>12</sup>:

Երրորդ, առաջարկվում էր պատասխանատվություն սահմանել ցեղասպանության ազիտացիայի, ինչպես նաև դրա նախապատրաստմանը և իրականացմանը համամասնակցության համար:

Չորրորդ, առաջարկվում էր ազգային օրենսդրության մեջ ներառել ցեղասպանության համար քրեական պատասխանատվության նորմեր:

Հինգերորդ, ստորագրող պետությունները պարտավոր էին արգելել այն կազմակերպությունների գործունեությունը, որոնց նպատակը ազգային, կրոնական և ուսայական քշնամանքի

սերմանումն էր և ցեղասպանության գործողությունների իրականացումը:

Եվ, վերջապես, նախատեսվում էր ցեղասպանության համար դատական կարգով պատասխանատվություն կիրառել միայն ազգային դատարանների կողմից:

Պետք է նշել, որ 1948 թվականի դեկտեմբերին ցեղասպանության մասին կոնվենցիայի քննարկման ժամանակ վերը նշված առաջարկություններից որոշ սկզբունքային քնույթը ունեցողները ստացան աջակցություն ՄԱԿ-ի անդամ մի շարք պետությունների (հիմնականում ճախսկին սոցիալիստական երկրների) կողմից, իսկ որոշները մերժվեցին՝ հիմնականում արևմտյան պետությունների կողմից: Ընդունված առաջարկությունները, նաև և առաջ, վերաբերում էին ազգային մշակութային ցեղասպանությանը, ցեղասպանության քարոզության համար պատասխանատվության սահմանմանը, ինչպես նաև ազգային, կրոնական և ուսայական քշնամանք սերմանող կազմակերպությունների գործունեության կասեցմանը: Նշված քննարկման ժամանակ մերժվեցին նաև մի շարք այլ առաջարկություններ, մասնավորապես, այնպիսի գործողությունների իրականացման համար պատժի սահմանումը, որոնք միտված են սեփական քնակավայրից քնակչության հարկադիր արտագործին՝ դաժան վերաբերմունքի վտանգից խուսափելու համար: Ցեղասպանության հարցերով հայտնի մասնագետ, Խոլանդիայի ազգային համալսարանի պրոֆեսոր Ա. Շաբասի կարծիքով, դրանով ցեղասպանության սահմանման ոլորտից բացառվեցին «էրնիկական գործուները»<sup>13</sup>: Պետք է նշել, որ այս հանգամանքը չէր ենթադրում, որ էրնիկական գործուները

<sup>12</sup> Трайнин А. Н. Защита мира и уголовный закон. Избранные произведения. – М.: Наука, 1969. С. 416.

<sup>13</sup> United Nations Audiovisual Library of International Law//Уильям А. Шабас. Конвенция о предупреждении геноцида и наказания за него [Электронный ресурс]. URL: [http://legal.un.org/avl/pdf/ha/cppcg\\_cppcg\\_r.pdf](http://legal.un.org/avl/pdf/ha/cppcg_cppcg_r.pdf) (дата обращения: 05.05.2014).

կամ մշակութային ցեղասպանությունը համարվում են անպատճելի արարքներ, պարզապես այստեղ խոսքը գնում էր դրանց՝ որպես մարդկության դեմ ուղղված հանցագործության դիտարկման մասին:

1948-ի դեկտեմբերի 9-ին Սիավորված ազգերի կազմակերպությունն ընդունեց «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիան, ըստ որի ցեղասպանությունը սահմանվում է որպես միջազգային հանցագործություն, և ստորագրող պետությունները պարտավորվում են կանխել, ինչպես նաև պատժել այն իրականացնելու համար: Կոնվենցիայի առաջին հոդվածով ցեղասպանությունը ճանաչվեց ոչ միայն հանցագործություն (անկախ նրանից, այն իրականացվում է պատերազմական, թե խաղաղ ժամանակներում), այլ նաև պարտավորեցրեց այն ստորագրած պետություններին միջոցներ ձեռնարկել ցեղասպանության կանխարգելման ուղղությամբ: Համաձայն հոդված 1-ի, «Պայմանագրովող կողմերը հաստատում են, որ ցեղասպանությունը, անկախ նրանից՝ կատարվում է խաղաղ, թե պատերազմական պայմաններում, ըստ միջազգային իրավունքի հանցագործություն է, որը նրանք պարտավորվում են կանխարգելել և պատժել այն կատարելու համար»:

Կոնվենցիայի երկրորդ հոդվածով ցեղասպանություն նշանակում է հետևյալ գործողություններից ցանկացածը՝ կատարված ազգային, էթնիկական, ցեղական կամ կրոնական որևէ խմբի, որպես այդպիսին, լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ.

- (ա) այդ խմբի անդամների սպանությունը,
- (բ) այդ խմբի անդամներին մարմնական լուրջ վճասվածքներ կամ մտավոր վճաս պատճառելը,

(գ) որևէ խմբի համար կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծումը, որոնք ուղղված են նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը,

(դ) այդ խմբի միջավայրում մանկածնությունը կանխելուն միտված միջոցների իրականացումը,

(ե) երեխաների բռնի փոխանցումը մարդկային մի խմբից մյուսին:

Կոնվենցիայի 3-րդ հոդվածով պատճելի արարքներ համարվեցին՝

(ա) ցեղասպանությունը,

(բ) ցեղասպանություն կատարելու նպատակով դավադրությունը,

(գ) ցեղասպանության ուղղակի և իրապարակային իրակրումը,

(դ) ցեղասպանություն կատարելու փորձը,

(ե) հանցակցությունը ցեղասպանության կատարման մեջ:

Ցեղասպանության համար պատասխանատվության սույնեկտներ ճանաչվեցին նշված արարքներից որևէ մեկը կատարած անձինք՝ անկախ այն բանից, նրանք սահմանադրությամբ պատասխանատու դեկավարներ են, թե պաշտօնատար կամ մասնավոր անձինք:

Կոնվենցիայով պայմանագրովող կողմերը պարտավորվեցին դրա դրույթները գործողության մեջ դնելու համար ընդունել իրենց սահմանադրություններին համապատասխան անհրաժեշտ օրենսդրություն և, մասնագրապես, սահմանել արդյունավետ պատժամիջոցներ ցեղասպանության մեջ կամ 3-րդ հոդվածում նշված մյուս արարքներից որևէ մեկում մեղավոր անձանց համար:

Կոնվենցիայով սահմանվեց, որ այն անձինք, որոնք մեղադրվում են ցեղասպանություն կամ 3-րդ հոդվածում բարկված որևէ արարք կատարելու մեջ, դատվում են այն երկրի

իրավասու դատարանի կողմից, որի տարածքում կատարվել է այդ հանցագործությունը, կամ այնպիսի միջազգային քրեական դատարանի կողմից, որը կարող է իրավազորություն ունենալ կոնվենցիայի՝ այդ իրավագորությունը ճանաչած կողմերի նկատմամբ: Ընդ որում, ցեղասպանությունը և 3-րդ հոդվածում թվարկված մյուս արարքները հանձննան նպատակների համար չեն դիտվում որպես քաղաքական հանցագործություններ: Նման դեպքերում պայմանավորվող կողմերը պարտավորվում են հանձնումն իրականացնել իրենց օրենսդրության և գործող պայմանագրերի համաձայն:

Կոնվենցիայով սահմանվեց, որ յուրաքանչյուր պայմանավորվող կողմ կարող է դիմել Միավորված ազգերի կազմակերպության իրավասու մարմիններին՝ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությանը համապատասխան ձեռնարկելու այնպիսի գործողություններ, որոնք նրանք անհրաժեշտ են համարում ցեղասպանությունը և 3-րդ հոդվածում թվարկված որևէ այլ արարք կանխարգելելու և ճնշելու համար: Ընդ որում, պայմանավորվող կողմերի միջև վեճերը՝ կապված կոնվենցիայի մեկնաբանման, կիրառման և կատարման հետ, ներառյալ նաև ցեղասպանություն կամ 3-րդ հոդվածում թվարկված որևէ արարք կատարելու համար այս կամ այն պետության պատասխանատվության վերաբերյալ վեճերը, հանձնվում են Միջազգային դատարանի քննարկմանը՝ վեճի կողմերից յուրաքանչյուրի պահանջով: Կոնվենցիայով սահմանվեց, որ պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը կարող է ցանկացած ժամանակ, Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին ժամուցելու միջոցով, կոնվենցիայի կիրառումը տարածել այն բոլոր տարածքների կամ ցանկացած տարածքի նկատմամբ, որոնց

արտաքին հարաբերությունների համար ինքը պատասխանատու է:

Կոնվենցիան ուժի մեջ մտավ 1951 թվականի հունվարի 12-ին, իսկ արդեն 2013 թվականի վերջին, դրա ընդունումից 65 տարի հետո, միացած պետությունների թիվը գերազանցում էր 140-ը: Մասնավորապես, ԽՍՀՄ կողմից այն վավերացվեց 1954 թվականին, Մեծ Բրիտանիայի կողմից՝ 1970 թվականին, իսկ ԱՄՆ կողմից՝ 1988 թվականին: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կոնվենցիան ունի միջազգային ընդհանուր իրավունքի կարգավիճակ, այն պարտադիր է բոլոր պետությունների համար:

Մասնագիտական գրականության մեջ շատ հաճախ նշվում է, որ 1948 թվականին ընդունված ցեղասպանության կոնվենցիայով տրված սահմանումը զգալիորեն «չիիմնավորված կերպով նեղացված է և զրկված է իր գործնական կիրառման հնարավորությունից»<sup>14</sup>: Տվյալ հարցի վերաբերյալ հետևյալ կերպ է արտահայտվել պլոֆեսոր Ա. Շարասը. «Կոնվենցիան ենթարկվեց զգալի քննադատության իր կիրառելիության շրջանակների սահմանափակության պատճառով: Դա, առաջին հերքին, բացատրվում է զանգվածային չարազործությունների համար միջազգային իրավունքի կիրառման ոլորտի անբավարար վիճակով: Ինչպես ցույց է տալիս պատմությունը, այդ հիմնախնդիրը կարող է լուծվել ցեղասպանության սահմանման ընդլայնման ճանապարհով և ցեղասպանության մասին կոնվենցիայում համապատասխան փոփոխություններ կատարելու միջոցով՝ այն փոխկապակցվածության մեջ դնելով

<sup>14</sup> Лупу А. А., Оськина И. Ю. Международное уголовное право. М.: Дашков и КО, 2013. С. 237.

մարդկության դեմ ուղղված մյուս հանցագործությունների հետ»<sup>15</sup>:

Կոնվենցիայի ընդունումից հետո որոշ գիտնականներ առաջարկել են ավելի համընդգրկու սահմանումներ: Սանազրություն 1959 թվականին իրավագետ Փիթեր Դրոստը ցեղասպանությունը սահմանել է որպես մարդկանց՝ որևէ խմբի պատկանելիության համար կյանքից կանխամտածված գրկելը:

Ցեղասպանության համբավադանի խմբագիր Բարայել Չարնին առաջարկել է հետևյալ սահմանումը. ցեղասպանությունը, ընդհանրական իմաստով, զգալի թվով մարդկանց զանգվածային սպանությունն է, որն իրականացվել է ոչ թե թշնամու զինված ուժերի դեմ ռազմական գործողությունների, այլ գործերի անպաշտպանվածության և անօգնականության պայմաններում:

Դեռ է նշել, որ ՄԱԿ-ի կոնվենցիան քաղաքական խմբի անդամների սպանությունը չի սահմանում որպես ցեղասպանություն, սակայն շատ ցեղասպանագետներ պնդում են ցեղասպանության սահմանման մեջ ներառել նաև այդ կետը: Նշանավոր ցեղասպանագետ և սոցիոլոգ Լեռ Կուտաքը զտնում է, որ ժամանակակից աշխարհում քաղաքական տարածայնություններն առնվազն նույնքան կարևոր իիմք են կոտորածների և ոչնչացման համար, որքան ռասայական, ազգային, երնիկ կամ կրոնական տարրերությունները: Ի լրումն կոնվենցիայում քաղաքական խմբի սպանությունը՝ որպես ցեղասպանություն դիտվող սահմանման քացակայության, գիտնականներ թեր Գուրը և Բարբարա Հարֆը շրջանառության մեջ են դրել «պոլիտիցիդ» տերմինը:

<sup>15</sup> Уильям А. Шабас. Конвенция о предупреждении геноцида и наказания за него [Электронный ресурс]. URL: [http://legal.un.org/avl/pdf/ha/cppcg\\_cppcg\\_r.pdf](http://legal.un.org/avl/pdf/ha/cppcg_cppcg_r.pdf) (дата обращения: 05.05.2014).

Պոլիտիցիդ կամ քաղաքական սպանություն՝ ցեղասպանություն մեջ հենց այս եզրով է սահմանվում ցեղասպանության զոհ հանդիսացող ազգի կամ ժողովրդի ազգային, քաղաքական, հասարակական, ռազմական, գիտական և մշակութային գործիքների կանխամտածված ու զանգվածային ոչնչացումը ցեղասպանություն իրականացնող դահճի կողմից: Նպատակը մեկն է՝ ցեղասպանության իրագործումից առաջ կամ դրա ընթացքում գրկել տվյալ երևոսին ինքնապաշտպանության կազմակերպումն ստանձնելու կարող ուժից:

Ցեղասպանություն հանցագործության կանխման և պատժման կոնվենցիան, ինչպես արդեն նշվեց, ընդունվել է 1948 թվականին Միացյալ ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեայի կողմից, ուժի մեջ է մտել 1951թ. հունվարին և վավերացվել է 137 պետությունների կողմից: Ըստ Էության, առաջին անգամ այդ փաստաթրուվ է տրվել ցեղասպանության իրավական սահմանումը: Կոնվենցիան բոլոր երկրներին կոչ է անում կանխել և պատժել ցեղասպանության գործողությունները պատերազմական և խաղաղ իրավիճակներում:

1948 թվականի դեկտեմբերի 10-ին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան ընդունում է մարդու իրավունքների համընդհանուր հոչակագիրը (դեկլարացիա), որը մարդու իրավունքների առաջին հատուկ փաստաթրութեն էր: Մարդու իիմնական իրավունքներին են վերաբերում, մասնավորապես, ապրելու, ազատության և անձի անձեռնմխելիության իրավունքը, պատվի, հեղինակության ու բնակարանի անձեռնմխելիությունը: Դրա իիմնան վրա մասնակից պետությունների համար մշակվում են իրավականորեն պարտադիր Մարդու իրավունքների պակտեր, որոնք ընդունվում են 1966 թվականի դեկտեմբերի 16-ին: Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին միջազգային պակտը յուրաքանչյուր մարդու անկապտելի

իրավունքն է համարում ապրելու իրավունքը և այն դրույքը, որ ոչ ոք չպետք է ստրուկ լինի կամ անզոր և ենթարկվի տաճաճների կամ դաժան, անմարդկային, կամ արժանապատփությունը ստորացնող վերաբերմունքի: Պակտը հավաստում է, որ ազգային, ուսայական կամ կրոնական ատելության ամեն մի դրսերում պետք է արգելվի օրենքով:

1954 թվականին ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հանձնաժողովը, գլխավոր ասամբլեայի հանձնարարականով, մշակեց խաղաղության և մարդկության անվտանգության դեմ հանցագործությունների օրենսգրքի նախագիծը: Որպես այդպիսի գործողություններ դիտարկվեցին «պետական իշխանությունների կամ մասնավոր անձանց գործողությունները, որոնք նպատակ են հետապնդում մասնակիորեն կամ ամրողությամբ ոչնչացնելու ազգային, եթիկական, ուսայական կամ կրոնական խմբերին, ներառյալ.

- նման խմբերի անդամների սպանությունը,
- խմբի անդամներին ծանր մարմնական վնասվածքներ հասցնելը,
- խմբի անդամների համար կանխամտածված այնպիսի կենսական պայմաններ ստեղծելը, որոնց նպատակն է նրանց մասնակի կամ ամրողական ֆիզիկական ոչնչացումը,
- խմբի ներսում մանկածնության կանխմանն ուղղված քայլերի իրականացումը,
- երեխաների բռնի տեղափոխումը մեկ խմբից մյուսը»<sup>16</sup>:

1954 թվականի դեկտեմբերի 4-ին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան որոշեց «դադարեցնել նախագծի հետագա քննարկումը

<sup>16</sup> Работа Комиссии международного права [Электронный ресурс]. URL: [http://www.un.org/rw/publications/pdfs/work\\_of\\_the\\_ilc\\_voll.pdf](http://www.un.org/rw/publications/pdfs/work_of_the_ilc_voll.pdf) (дата обращения: 06.04.2014).

դրանում «ազրեսիա» հասկացության բացակայության պատճառով: Սակայն 1981 թվականին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան առաջարկեց միջազգային իրավունքի գծով հանձնաժողովին վերսկսել ընդհատված աշխատանքները և մշակել խաղաղության և մարդկության անվտանգության դեմ հանցագործությունների օրենսգրքի նախագիծը: 1996 թվականին հանձնաժողովի կողմից ներկայացված նախագծում ուղղակիորեն խոսվում էր այն մասին, որ մարդկության անվտանգության և խաղաղության դեմ ուղղված հանցագործությունների շարքին է պատկանում նաև ցեղասպանությունը: Համաձայն նախագծի հոդված 17-ի, «ցեղասպանություն է համարվում ցանկացած գործողություն, որը կատարվում է ազգային, եթիկական, ուսայական կամ կրոնական խմբի մասնակի կամ ամրողական ոչնչացման նպատակով, այդ թվում

- խմբի անդամների սպանությունը,
- խմբի անդամներին ծանր մարմնական վնասվածքներ հասցնելը,
- խմբի անդամների համար կանխամտածված այնպիսի կենսական պայմաններ ստեղծելը, որոնց նպատակն է նրանց մասնակի կամ ամրողական ֆիզիկական ոչնչացումը,
- խմբի ներսում մանկածնության կանխմանն ուղղված քայլերի իրականացումը,
- երեխաների բռնի տեղափոխումը մեկ խմբից մյուսը»:

Փաստորեն, 1954 թվականին մշակված նախագծի համեմատությամբ 1996 թվականի նախագծում բացակայում էր այն դրույքը, ըստ որի ցեղասպանությունը կարող է իրականացվել պետական իշխանության կողմից:

Ցեղասպանություն հանցագործության սահմանումը առկա է նաև միջազգային դատարանների կանոնադրություննե-

րում, որոնց իրավագործության տակ է գտնվում նման հանցագործությունների գործերի քննությունը: Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունում (1998 թվական) առկա է նորմ «հանցագործությունների տարրերի» մասին, որոնք օգնում են դատարանին մեկնաբանել և կիրառել ցեղասպանության մասին հոդվածները:

Հանցագործության տարրերը վերաբերում են «յուրաքանչյուր հանցագործության հետ կապված հանգամանքներին, հետևանքներին և վարքագծին»<sup>17</sup>: Միջազգային քրեական դատարանի փաստաթղթերի համաձայն, խոսքը գնում է ցեղասպանության հետևյալ տարրերի մասին.

ա) «սպանության միջոցով» ցեղասպանության տարրեր.

1. կատարողը սպանել է մեկ կամ մի քանի անձանց,
2. այդ անձը կամ անձինք պատկանել են կոնկրետ ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբին,
3. կատարողը նպատակ է ունեցել մասնակիորեն կամ ամբողջությամբ ոչնչացնել տվյալ ազգային, էթնիկական, կրոնական կամ ռասայական խմբին,
4. նշված արարքները խմբի դեմ ուղղված կոնկրետ վարքագծի հետևանք են, որը հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել ոչնչացման:

բ) «ծանր մարմնական վնասվածքներ կամ հոգեկան խանգարման հասցենու միջոցով» ցեղասպանության տարրեր.

1. կատարողը հասցրել է լուրջ մարմնական վնասվածքներ կամ հասցրել է մտավոր խանգարման մեկ կամ մի քանի անձանց,
2. տվյալ անձը կամ անձինք պատկանել են կոնկրետ ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբի,

<sup>17</sup> Элементы преступлений. Официальный сайт ООН. Международный уголовный суд [Электронный ресурс]. URL: [http://www.un.org/ru/documents/rules/icc\\_elements.pdf](http://www.un.org/ru/documents/rules/icc_elements.pdf) (дата обращения: 22.11.2014).

3. կատարողը նպատակ է ունեցել ամբողջությամբ կամ մասնակիորեն ոչնչացնել տվյալ խմբին,
4. կենսական պայմանները ուղղված են եղել տվյալ խմբի ամբողջական կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը,
5. նշված արարքները խմբի դեմ ուղղված կոնկրետ վարքագծի հետևանք են, որը հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել ոչնչացման:

գ) «Երեխաների բռնի փոխանցման միջոցով» ցեղասպանության տարրեր.

1. կատարողն իրականացրել է մեկ կամ մի քանի անձի բռնի փոխանցում,
2. տվյալ անձը կամ անձինք պատկանել են կոնկրետ ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբի,
3. կատարողը նպատակ է ունեցել ամբողջությամբ կամ մասնակիորեն ոչնչացնել տվյալ խմբին,
4. փոխանցումն իրականացվել է մարդկանց մեկ խմբից մյուսին,
5. տվյալ անձը կամ անձինք մինչև 18 տարեկան են,
6. կատարողը իմացել է կամ պարտավոր էր իմանալ, որ տվյալ անձը կամ անձինք մինչև 18 տարեկան են,
7. նշված արարքները խմբի դեմ ուղղված կոնկրետ վարքագծի հետևանք են, որը հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել ոչնչացման:

Այսպիսով, որպեսզի արարքը որակվի որպես ցեղասպանություն, անհրաժեշտ է հետևյալ հատկանիշների առկայությունը.

ա) բնակչության խումբը պետք է հանդիսանա որպես ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խումբ,

բ) պետք է իրականացվեն ցեղասպանության մասին կոնվենցիայի հոդված 2-ում սահմանված գործողությունները բնակչության նշված խմբի հանդեպ,

- գ) պետք է լինի տվյալ խմբին ամբողջությամբ կամ մասնակիորեն ոչնչացնելու նպատակ,
- դ) ցեղասպանություն իրականացող անձինք պետք է լինեն 18 տարեկանից բարձր:

1948 թվականին կոնվենցիան ընդունած պետություններն արձանագրեցին, որ «ամբողջ պատմության ընթացքում ցեղասպանությունը հանգեցրել է մարդկության մեծ կորուստների»: Նշված հանգամանքը բույլ է տալիս շատ հեղինակների որպես ցեղասպանություն որպես նաև մինչև կոնվենցիայի ընդունումը տեղի ունեցած շատ հանցագործությունները: Համաձայն հայտնի սոցիոլոգ Հ. Կելմանի, ցեղասպանությունը արտոնված զանգվածային սպանություններն են<sup>18</sup>: Խոկապես, ցեղասպանությունն առանց պետության և իշխանության բույլության հնարավոր չէ: Այս առումով, ծագում է հետևյալ հարցը. արդյոք պետությունը հանդիսանում է ցեղասպանության սուրյեկտ թե ոչ: Մասնագիտական գրականության մեջ այդ խնդիրը որոշակիորեն վիճակարույց է, և առկա են տարբեր տեսակետներ: Մանավորապես, ՈՒ. Շարասը գտնում է, որ պետությունը գործնականում կարող, է իրականացնել ցեղասպանություն, սակայն, որպեսզի պետությունը պատասխանատվություն կրի ցեղասպանության համար, անհրաժեշտ է, որ պետական գործիչները ներգրավված լինեն այդ հանցագործության մեջ<sup>19</sup>:

Ինչպես նշվում է ՄԱԿ-ի մի շարք փաստարդերում, «ցեղասպանությունը գործնականում հանդիսանում է կանխամտածված ուազմավարություն, որը շատ դեպքերում իրականացվում է պետությունների կամ պետական ապարատը

վերահսկող խմբերի կողմից: Պետությունն ինքը, որը կոչված է պաշտպանելու սեփական քաղաքացիներին, սկսում է նրանց ոչնչացնել, և պոտենցիալ զոհերը այլ տեղ պաշտպանություն գտնելու հնարավորություն չունեն, քան դրա սահմաններից դուրս»<sup>20</sup>: Հենց այդ պատճառով է ցեղասպանության նախազգուշացման և կանխարգելման պատասխանատվությունը դրվում այն պետության վրա, որի տարածքում իրականացվել է այդ հանցագործությունը:

2005 թվականին տեղի ունեցած համաշխարհային սամմիրում ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի ընդունած քանաձեռում պետությունների դեկավարները և կառավարությունները միաձայն հաստատեցին, որ «յուրաքանչյուր պետություն պարտավոր է սեփական բնակչությանը պաշտպանել ցեղասպանությունից, ուազմական հանցագործություններից, եթիկական զումներից և մարդկության դեմ ուղղված հանցագործություններից: Այդ պատասխանատվությունն իր հետ բերում է նման հանցագործությունների կանխարգելման անհրաժեշտություն, այդ թվում նաև համապատասխան միջոցների ձեռնարկում»<sup>21</sup>: Նրանք հաստատեցին, որ միջազգային հանրությունը պարտավոր է համապատասխան դեպքերում պետություններին օգնություն ցուցաբերել բնակչության պաշտպանության հնարավորությունների ընդլայնման համար մինչև հակամարտությունների և ճգնաժամների սկսվելը: Միաժամանակ, պետությունների դեկավարները և կառավարությունները հաստատեցին, որ եթե այս կամ այն պետությունը ակնհայտորեն ի վիճակի չէ պաշտպանելու սեփական բնակչությանը նշված չորս հանցագործություններից, ապա միջազ-

<sup>18</sup> Kelman, H. C. & Hamilton, V. L. Crimes of Obedience. New Haven: Yale University Press, 1989, p. 12.

<sup>19</sup> Уильям А. Шабас. Указ. раб.; Schabas W.A. Genocide in International Law. Cambridge University Press. Cambridge, United Kingdom. 2000, p. 444.

<sup>20</sup> «Геноцид в Руанде и ООН»

<http://www.un.org/ru/preventgenocide/rwanda/neveragain.shtml>.

<sup>21</sup> [www.un.org/ru/documents/decl\\_conv/declarations/outcome2005\\_ch4.shtml](http://www.un.org/ru/documents/decl_conv/declarations/outcome2005_ch4.shtml)

գային հանրությունը պատրաստ է ձեռնարկել կոլեկտիվ գործողություններ Անվտանգության խորհրդի միջոցով և ՍԱԿ-ի կանոնադրությանը համապատասխան<sup>22</sup>:

Բացի այդ, հիշյալ փաստաթղթում ներկայացված են երեք հիմնական ասպեկտներ՝ պետությունների կողմից սեփական բնակչության պաշտպանության ուղղությամբ.

1. Յուրաքանչյուր պետություն պարտավոր է սեփական բնակչությանը պաշտպանել ցեղասպանությունից, ռազմական հանցագործություններից, էքնիկական զսումներից և մարդկության դեմ ուղղված հանցագործություններից: Այդ պարտավորությունը ենթադրում է նաև նման հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ համապատասխան միջոցների ձեռնարկում:
2. Միջազգային հանրությունը պարտավոր է միջոցներ ձեռնարկել պետությունների հետ համագործակցելու և օգնելու համար այդ պարտավորության իրականացման նպատակով:
3. Միջազգային հանրությունը պարտավոր է նաև օգտագործել համապատասխան դիվանագիտական, հումանիտար և այլ խաղաղ միջոցներ բնակչությանը նման հանցագործություններից պաշտպանելու գործում համագործակցելու համար: Միջազգային հանրությունը պարտավոր է կոլեկտիվ քայլեր ձեռնարկել ՍԱԿ-ի կանոնադրությանը համապատասխան, եթե ազգային իշխանության մարմիններն ակնհայտորեն ի վիճակի չեն պաշտպանելու սեփական բնակչությանը:

1968 թվականի փետրվարի 26-ին ՍԱԿ-ի գլխավոր ասամբլեան ընդունում է ռազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված ոճագործությունների նկատմամբ

վաղեմության ժամկետը չկիրառելու մասին կոնվենցիան, որը մասնակիցներին պարտավորեցնում է ձեռնարկել յուրաքանչյուր օրենսդրական կամ այլ միջոց, որպեսզի ազգային օրենսդրությամբ ահմանված վաղեմության ժամկետը և այլ սահմանափակումները չկիրառվեն փաստաթղթում թվարկված հանցագործությունների համար հետապնդման և պատժի դեպքերում: Կոնվենցիան մարդկության դեմ ուղղված ոճագործությունների շարքին է դասում նաև ցեղասպանությունը:

Ցեղասպանության՝ որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցանքի, դատապարտումը առկա է նաև ՍԱԿ-ի այլ փաստաթղթերում, մասնավորապես՝ ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման, ապարտեիլի դատապարտման և այլնի մասին մի շարք բանաձևերում ու կոնվենցիաներում: ՍԱԿ-ի մի շարք կարևոր փաստաթղթերում տրված է ցեղասպանության բնորոշումը՝ որպես միջազգային ոճագործության: Բնորոշման հիմքում ընկած են Միջազգային գինվորական ատյանի հրովարտակի (1945 թվականի օգոստոսի 8) դրույթները, որոնք իրենց հաստատումն են գտել ՍԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1946 թվականի դեկտեմբերի 11-ի և 1947 թվականի նոյեմբերի 27-ի բանաձևերում՝ որպես միջազգային իրավունքի ընդիհանուր ճանաչում գտած սկզբունքներ: 1946 թվականի դեկտեմբերի 11-ի բանաձևը հոչակում է, որ ցեղասպանությունը միջազգային իրավունքի նորմերով հանցագործություն է և դատապարտվում է ամրող մարդկության կողմից: 1948 թվականի դեկտեմբերի 9-ին ՍԱԿ-ի գլխավոր ասամբլեան ընդունեց Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին կոնվենցիան, որտեղ տրված է ցեղասպանության ծավալուն սահմանումը, խոսվում է ցեղասպանության հրահրման կամ գոր-

<sup>22</sup> <http://www.dissercat.com/content/genotsid-kriminologicheskoe-issledovanie>

ծաղրման համար մեղավորի՝ լինի դա պետություն, առանձին պաշտոնյա կամ անձ, պատասխանատվության մասին:

Յեղասպանության մեկնարանությունների վերաբերյալ որոշակի ձևակերպումներ գոյություն ունեն նաև ՍԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձեռքի հիման վրա ստեղծված Ռուանդայի և նախկին Հարավսլավիայի գծով միջազգային տրիբունալների կողմից ընդունված փաստարդերում։ Մասնավորապես, Ռուանդայի միջազգային տրիբունալի կանոնադրության 2-րդ հոդվածով յեղասպանությունը սահմանվում է որպես ազգային, էքսիլիական, ուսայական կամ կրոնական որևէ խմբի մասնակի կամ լրիվ ոչնչացման նպատակով իրականացված գործողություն։ Որպես այդպիսիք դիտարկվում են։

- ա) խմբի անդամների սպանությունը,
- բ) խմբի անդամներին մարմնական կամ նտավոր լուրջ վնասվածքներ պատճառելը,
- գ) խմբի անդամների համար կանխամտածված այնպիսի պայմանների ստեղծումը, որոնք հանգեցնում են նրանց լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը,
- դ) խմբի անդամների նկատմամբ ծնելիության կանխման միջոցների կիրառումը,
- ե) բռնի կերպով այդ խմբից երեխաների տեղափոխումն այլ խմբեր։

Գործնականում յեղասպանությունը բառացիորեն նույն կերպ է մեկնարանվում նաև նախկին Հարավսլավիայի գծով միջազգային տրիբունալի կանոնադրությամբ։ Ընդ որում, երկու միջազգային տրիբունալների կանոնադրությամբ պատիժ է սահմանվում այնպիսի գործողությունների համար, ինչպիսիք են։

- ա) յեղասպանությունը,

- բ) յեղասպանության իրականացման մասին պայմանագրությունը,
- գ) յեղասպանության իրականացման ուղակի և հանրային հրահրումը,
- դ) յեղասպանության իրականացման փորձը,
- ե) յեղասպանության իրականացմանը համամասնակցությունը։

Պետք է նշել, որ նշված փաստարդերում յեղասպանության իրավական մեկնարանությունը գրեթե չի տարբերվում Նյուրնբերգյան փաստարդերում այդ հանցագործության մեկնարանությունից։ Տարբերությունը կայանում է միայն նրանում, որ Նյուրնբերգյան տրիբունալի փաստարդերում «յեղասպանություն» հասկացությունը չի օգտագործվում և ընդամենը խոսք է զնում մարդկության դեմ ուղղված հանցագործությունների մասին։

Ամփոփելով, պետք է նշել, որ ավելի քան 65 տարի յեղասպանության վերաբերյալ կոնվենցիան է հանդիսացել այն հիմնարար փաստարդությը, որով այն ճանաչվել է առավել ծանր հանցագործություն, իհմք է հանդիսացել ազգային օրենսդրությամբ դրա քրեականացման, ինչպես նաև իրավական իհմք յեղասպանության գործերով միջազգային դատարանների կողմից համապատասխան գործերի քննության համար։ Միևնույն ժամանակ, պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ միջազգային հարաբերությունների գարգացման արդի ժամանակաշրջանում յեղասպանությունների կանխարգելման և դատապարտման համար անհրաժեշտ է լրացուցիչ ջանքերի գործադրում՝ այդ թվում նաև տվյալ հանցագործության իրավական և քաղաքական մեկնարանությունների և սահմանումների հստակեցման առումով։

## 1. ԶԱՆԳԱԾԱՅԻՆ ԶԱՐԴԵՐԻ ԵՎ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարդկության դեմ կատարված հանցագործությունների առողջությունը իր ծանր հետևանքներով հատկապես առանձնանում է ցեղասպանությունը, որը մասնագիտական գրականության մեջ հիմնականում մեկնաբանվում է երեք իմաստով. ֆիզիկական (մարդկանց ոչնչացում), կենսաբանական (ծննդյան կանխում) և ազգային-մշակութային (ավանդական էթնիկական մշակույթի ոչնչացում)<sup>23</sup>:

Նախ և առաջ, անհրաժեշտ է պարզել, թե ինչ է ցեղասպանություն հանցագործությունը: Այն կարելի է բնորոշել իրեն կանխամտածված արարքների (սպանություններ, լուրջ մարմնական վճարվածքների կամ մոտավոր խեղման պատճառում, կանխամտածված կյանքի այնպիսի պայմանների ստեղծում, որոնք միտված են խմբի լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը և այլն) ամբողջություն, որոնք միտված են որևէ ազգային, ռասայական, կրոնական կամ էթնիկական խմբի՝ որպես այդպիսին, լրիվ կամ մասնակի ոչնչացմանը:

Օտարերկրյա հեղինակների կողմից ցեղասպանության էռությունը հիմնականում ներկայացված է զլորալ համատեքստում, այն փոխկապակցելով բնակչության առանձին խմբերի քաղաքակրթվածության մակարդակի հետ: Մասնավորապես, Ս. Լամբերտի կարծիքով, միջազգային հանրության ինտեգրված պետություններում ցեղասպանության հավանականությունն ավելի փոքր է: Իր հերքին, մեկուսացված կամ ինքնամեկուսացված պետությունները կիպորեալիկ առողջություն կարող է հանդիպել հակառակ պատճենություններում:

<sup>23</sup> Международное уголовное право. 2-е изд. Под ред. В. Н. Кудрявцева. М., 1999г. стр. 129, Трайнин А.Н. Защита мира и уголовный закон. М., 1969г. стр. 408.

ների: Նման փակ պետություններում հաճախ գերակայում է ազգայնական զաղափարախոսությունը, ինչը հող է ստեղծում դաժան ռեալիստականների և ցեղասպանությունների իրականացման համար<sup>24</sup>:

Կարող ենք արձանագրել, որ 1948 թվականին ցեղասպանության մասին կոնվենցիայի ընդունումը շրջադարձային հանդիսացավ դրա՝ որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործության դատապարտման գործում: Ըստ որում, հատկանշականն այն է, որ այդ փաստաթրությունը ցեղասպանությունը չդիտարկվեց ուազմական հանցագործությունների կամ պատերազմական գործողությունների համատեքստում: Համաձայն Ե. Տրիկոզի տեսակետի, ցեղասպանության հիմնական տարրերությունը մյուս հանցագործություններից կայանում է նրանում, որ այս դեպքում գործ ունենք ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբերի կամ դրանց ներկայացուցիչների ֆիզիկական ոչնչացման հետ նաև խաղաղ ժամանակներում<sup>25</sup>: Համաձայն որոշ տեսակետների, ժամանակակից միջազգային իրավունքում մարդու իրավունքների և ազգատությունների այնպիսի կոպիտ խախտումներ, ինչպիսիք են ցեղասպանությունը, ապարտեհոր, ռասայական խտրականությունը, մարդկության դեմ ուղղված հանցագործությունները չեն կարող դիտվել միայն որպես տվյալ պետության ներքին իրավասության ներքո գտնվող քրեորեն պատճելի արարքներ: Հետևաբար, տվյալ պետության տարածքում կատարված հանցագործությունների համար ազգային դատարաններում սեփական քաղաքացիներին կամ այլ անձանց դատելու պետության իրավասությունը չի բա-

<sup>24</sup> Lambert S. Genocide in Global Context: How World Culture Affects the Likelihood of Genocide. Abstract of Thesis degree of Ph.D. Arizona State University, 2001.

<sup>25</sup> Трикоз Е. Н. Преступления против мира и безопасности человечества: сравнительный и международно-правовой аспекты. М., 2007г. стр. 150-151.

ցառում կատարված միջազգային հանցագործությունների համար ֆիզիկական անձանց նկատմամբ քրեական պատասխանատվության կիրառում նաև միջազգային տրիբունալների կողմից<sup>26</sup>:

Համաձայն մասնագիտական գրականության մեջ գոյություն ունեցող տեսակետների, ցեղասպանության և դրանով պայմանավորված հակամարտությունների կանխարգելման համար խիստ կարևոր է դրանց պատճառների ուսումնափրկությունը: Հայտնի է, որ կոնֆլիկտները կարող են ունենալ տարբեր պատճառներ, սակայն ցեղասպանության հետ կապված կոնֆլիկտները հիմնականում պայմանավորված են բնակչության այս կամ այն խմբի հետ: Նման հանցագործությունների հավանականությունը խիստ մեծ է այն հասարակություններում, որտեղ առկա են ազգային, ռասայական, էթնիկական կամ կրոնական տարբեր խմբերի միջև հակամարտություններ նրանց այս կամ այն խմբին պատկանելությամբ պայմանավորված: Հետևաբար, ցեղասպանության կանխարգելման համար, նախ և առաջ, անհրաժեշտ է լուծել նման հակամարտությունները:

1948 թվականին ընդունված Ցեղասպանության կոնվենցիայով իրենց զարգացումն ստացան Նյուրնբերգյան գործընթացի հիմնական սկզբունքները: Համաձայն Ա. Նաումովի, չնայած «ցեղասպանություն» հասկացությունը չի օգտագործվում Նյուրնբերգյան տրիբունալի դատավճուի և կանոնադրության տեքստի մեջ, սակայն կոնվենցիայով ցեղասպանությանը տրված բովանդակությունն ուղղակիրեն բխում է այդ տրիբունալի կողմից մարդկության դեմ ուղղված հանցա-

<sup>26</sup> Сафиуллина И. П. Нюрнбергские принципы и их влияние на формирование международных уголовных судов в современных условиях: автореф. дисс. ... канд. юрид. наук. Казань, 2003г. стр. 6.

գործությունների մեկնարանությունից<sup>27</sup>: Ինչպես նշում է Ե. Տրիկոզը, Նյուրնբերգի տրիբունալի կանոնադրությամբ ամրագրված միջազգային հանցագործությունների համընդհանուր դասակարգմամբ ցեղասպանությունն առավել մոտ է մարդկության դեմ ուղղված հանցագործություններին: Միևնույն ժամանակ, այն տարբերվում է բնակչության առանձին խմբերի դեմ ուղղված ռեպրեսիաներից իր մասշտարբներով և հստակ արտահայտված նպատակներով: Ի դեպ, այն որոշակիորեն մոտ է նաև ռազմական հանցագործություններին, քանի որ իրականացման ժամկետների առումով կարող է համընկել ռազմական գործողությունների իրականացման ժամանակահատվածին: Սակայն ցեղասպանությունը մյուս հանցագործություններից տարբերվում է հետապնդվող հատուկ նպատակով, այն է բնակչության առանձին ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբերի ֆիզիկական ոչնչացման հնարավորությունն անև խաղաղ ժամանակներում<sup>28</sup>: Ե. Պանկրատովայի կարծիքով, ցեղասպանությունը մարդկության դեմ ուղղված հանցագործություններից տարբերվում է, նախ և առաջ, բռնությունների մասշտարբներով: Իսկապես, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների զոհերը պարտադիր չեն որ պատկանեն կոնկրետ ինչ-որ խմբի, մինչդեռ ցեղասպանության զոհերը պարտադիր կերպով հանդիսանում են որոշակի ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբի ներկայացուցիչներ<sup>29</sup>: Ա. Տրայմանի կարծիքով, ցեղասպանությունը ձևավորվում է առանձին գործողություններից: սպանություն, տանջանք և այլն, որոնցից

<sup>27</sup> Наумов А.В. Нюрнбергский процесс и международный правопорядок. Без срока давности. К 60-летию Нюрнбергского процесса. М., 2006г. стр. 44-45.

<sup>28</sup> Трикоэз Е.Н. Преступления против мира и безопасности человечества: сравнительный и международноправовой аспекты. М., 2007г. стр. 150-151.

<sup>29</sup> Панкратова Е.Д. Уголовно-правовая характеристика геноцида: автореф. дисс. канд. юрид. наук. М., 2010г. стр. 19.

յուրաքանչյուրի օրյեկտ է հանդիսանում մարդու կյանքը, առողջությունը և բարեկեցությունը: Միևնույն ժամանակ, պետք է հաշվի առնել, որ ցեղասպանության հիմնական առանձնահատկությունը, որով նա տարբերվում է մարդկության դեմ ուղղված մյուս հանցագործություններից, կայանում է նրանում, որ այն ուղղված է ոչ թե առանձին մարդու, այլ մարդկանց խմբի դեմ: Ցեղասպանության ժամանակ, ինարկե, պարբերաբար կիրառվում է բռնություն և մարդկանց հետապնդում, սակայն դա ոչ թե ինքնանպատակ է, այլ խմբի ոչնչացման միջոց: Այդ իսկ պատճառով ցեղասպանության զոհերը ոչ թե առանձին, կոնկրետ մարդիկ են, այլ այն անձինք, որոնք ունեն որոշակի խմբի պատկանելության ընդհանուր բնածին հատկանիշներ<sup>30</sup>:

Այսպիսով, կարող ենք նշել, որ ցեղասպանության և մարդկության դեմ ուղղված մյուս հանցագործությունների հիմնական տարրերակի հատկանիշը որոշակի ձգտումն է կամ նպատակը մասնակիորեն կամ ամրողությամբ ոչնչացնելու մարդկանց խմբին: Միջազգային տրիբունալների վճռներում նշվում է, որ մարդկության դեմ ուղղված այնպիսի հանցագործություններ, ինչպիսիք են սպանությունները և բնաջնջումը, իրենցից ներկայացնում են տարրեր, սակայն սերտորեն միշտանց հետ կապված հանցավոր վարքագծի տեսակներ, որոնց նպատակն անմեղ մարդկանց ոչնչացումն է: Պետք է նկատի ունենալ, որ բնաջնջումը հանցագործության տեսակ է, որն իր բնույթով ուղղված է անձանց որոշակի խմբի դեմ: Բացի այդ, բնաջնջման նպատակով կատարվող գործողություններն իրենց մեջ պարունակում են զանգվածային ոչնչացման տարրեր, ինչն առկա չէ սպանությունների դեպ-

րում<sup>31</sup>: Հատկանշական է այն հանգամանքը, որ դեռևս ցեղասպանության մասին կոնվենցիայի քննարկման ժամանակ Բրազիլիայի ներկայացուցիչը նշել է, որ ցեղասպանությունը բնութագրվում է խմբի՝ որպես այդպիսին ոչնչացնելու ընդգծված ձգտմամբ: Այդ շափանիշի բացակայության դեպքում, ինչպիսին ել լինի նման ակտերի դաժանությունը, դրանք չեն կարող բնութագրվել որպես ցեղասպանություն<sup>32</sup>:

Ինչ վերաբերում է ցեղասպանության և ապարտեհոյի սահմանումներին, ապա Ս. Գիգինեշվիլիի կարծիքով ապարտեհոյը չի կարող համարվել ցեղասպանության հատուկ դրսևորում: Այն, չնայած ցեղասպանության օրյեկտիվ կողմի հետ ունեցած նմանությանը, հանդիսանում է առանձին հանցագործություն: Տարրերի առումով հիմնական տարբերությունը կայանում է զոհերի շրջանակի և սուրյեկտիվ կողմի բովանդակության մեջ<sup>33</sup>: Ապարտեհոյի զոհեր կարող են լինել բացառապես ռասայական, իսկ ցեղասպանության՝ կրոնական, եթերիկական, ազգային և ռասայական խմբերը: Սակայն ցեղասպանության և ապարտեհոյի գլխավոր տարբերությունը կայանում է նրանում, որ ցեղասպանության դեպքում հիմնական նպատակը խմբի ամրողական կամ մասնակի ոչնչացումն է, իսկ ապարտեհոյի դեպքում՝ դիսկրիմինացիան: Այս առումով, որոշ հեղինակներ ցեղասպանությունը բնորոշում են որպես դիսկրիմինացիայի ծայրահեղ ձև<sup>34</sup>:

<sup>31</sup> Prosecutor v. J.-P.Akayesu.Case № ICTR-96-4-T. 2 September 1998. § 591; Prosecutor v. C. Kayishema and O. Ruzindana. Case № ICTR-95-1-T. 21 May 1999. §§ 146-147; Prosecutor v. G. Rutaganda.Case № ICTR-96-13-T.6 December 1999. § 84.

<sup>32</sup> Трикоз Е.Н. Преступления против мира и безопасности человечества: сравнительный и международно-правовой аспекты. М., 2007г. стр. 157.

<sup>33</sup> Гигинейшвили М.Т. Апартеид: предпосылки и перспективы криминализации в уголовном праве России: автореф. дисс. ... канд. юрид. наук. Краснодар, 2013г. стр. 19-20.

<sup>34</sup> Аванесян В.В. Геноцид: криминологическое исследование: автореф. дисс. канд. юрид. наук. М., 2010г. стр. 13.

<sup>30</sup> Трайнин А.Н. Защита мира и уголовный закон. М., 1969г. стр. 409.

Պետք է նշել, որ վերջին տարիներին որոշ քննադատություն է հնչում ցեղասպանության մասին կոնվենցիայի վերաբերյալ: Մասնավորապես, Զ. Բեշմենը ցեղասպանության կանխարգելման ուղղությամբ միջազգային հանրության գործադրած ջանքերի անհաջողության հիմնական պատճառը տեսնում է ցեղասպանության մասին կոնվենցիայի դրույթների մեջ, որոնք չեն բխում ժամանակակից իրողություններից<sup>35</sup>: Հ. Հալդորսոնը գտնում է, որ ցեղասպանության մասին կոնվենցիայի ընդունումը դարձավ 2-րդ համաշխարհային պատերազմի գիշավոր արդյունքներից մեկը, սակայն ներկայումս դրա որոշ դրույթներ վերանայման կարիք ունեն: Մասնավորապես, անհրաժեշտ է ցեղասպանությունը տարանջատել մյուս առավել ծանր հանցագործություններից՝ մասնավորապես զանգվածային, սերիական, ատելության և այլ պատճառներով կատարված սպանություններից<sup>36</sup>:

Հարկ է նշել, որ ցեղասպանության մասին ՍԱԿ-ի կոնվենցիան հիմնականն է տվյալ հանցագործության վերաբերյալ միջազգային իրավական փաստաթղթերի մեջ: Միևնույն ժամանակ, այն միակը չէ այդ հանցագործությունն արգելող միջազգային իրավական փաստաթղթերի շարքում: Ցեղասպանության հանցագործության հանցակազմն ամրագրված է տասնյակ այլ միջազգային իրավական փաստաթղթերում, մասնավորապես՝ Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունում (հոդված 6), նախկին Հարավսլավիայի (հոդված 4) և Ռուսաստանի (հոդված 2) համար ստեղծված ad hoc

միջազգային քրեական տրիբունալների կանոնադրություններում և այլն:

Պետք է նշել, որ ցեղասպանության դեպքեր արձանագրվել են մարդկության պատմության տարրեր ժամանակահատվածներում, նույնիսկ «ցեղասպանություն» հասկացության ի հայտ գալուց շատ ավելի վաղ: Ժամանակակից միջազգային իրավունքի տեսանկյունից այնպիսի իրադարձություններ, ինչպիսիք են Հին Սպարտայում հիլոտների զանգվածային պարբերական ոչնչացումը, Բարբուլիմեույան գիշերը, միջնադարյան ինկվիզիցիայի որոշ դրսւորումներ, կարելի է բնորոշել որպես ցեղասպանության դրսւորումներ: Դրանով հանդերձ, պետք է նաև նկատի ունենալ, որ ցեղասպանությունը ոչ բոլոր ժամանակաշրջաններում է դիտվել իրքեւ հանցագործություններում: Հին աշխարհում և նույնիսկ միջնադարում ցեղասպանության քաղաքականությունը, ըստ Էության, արգելված չէր: Սակայն մարդու անօտարելի իրավունքների ամրագրումը նորմատիվ փաստաթղթերում էական ազդեցություն ունեցավ միջազգային իրավունքի վրա: Այդ փոփոխությունների արդյունքում ցեղասպանությունը (որի տակ նկատի էր առնվում որևէ ուսայական, ազգային, կրոնական կամ էթնիկական խմբի ամբողջությն կամ մասնակի ոչնչացմանն ուղղված կանխամտածված գործողությունները) նախ սկսվեց դիտվել որպես բացասական, իսկ հետագայում նաև՝ արգելված և միջազգային իրավունքով պատժելի արարք: Արդեն 18-րդ դարավերջից սկսեցին ի հայտ գալ ցեղասպանությունն արգելող՝ ընդհանուր միջազգային իրավունքի նորմերի որոշակի տարրեր: Վերը նշվածը բույլ է տալիս արձանագրել, որ ցեղասպանությունն իրքեւ սոցիալական երևույթ, գոյություն է ունեցել միշտ կամ գրեթե միշտ, պատմական զարգացման տարրեր փուլերում: Այլ խնդիր է, որ դա դատապարտող

<sup>35</sup> Bachman J. The Genocide Convention and the Politics of Genocide Nonprevention: thesis degree of Ph.D. Northeastern University, 2013.

<sup>36</sup> Haldorson H.M. Genocide: A Philosophical Criticism of Genocide and it is Defined in the United Nations' «Convention on the Prevention and the Punishment of the Crime of Genocide». Abstract of Thesis ... degree of M.A. Concordia University, 1994.

իրավական նորմերը և կանխարգելիչ գործողություններն ի հայտ են եկել ավելի ուշ և իրենց ամրագրումը ստացել համապատասխան միջազգային փաստարդերում։ Սակայն պետք է նշել, որ այս հարցի վերաբերյալ ևս մասնագիտական շրջանակներում գոյություն չունի միասնական տեսակետ։ Որոշ հեղինակներ, իմբը ընդունելով այն փաստը, որ ցեղասպանության հանցագործությունն ամրագրող իմբնական միջազգային իրավական փաստարութքը՝ Ցեղասպանության մասին ՍԱԿ-ի կոնվենցիան, ընդունվել է 1948թ. դեկտեմբերի 9-ին և ուժի մեջ մտել 1951թ. հունվարի 12-ին, պնդում են, որ ցեղասպանություն՝ համաձայն միջազգային իրավունքի նորմերի, կարող են դիտվել միայն դրա ուժի մեջ մտնելուց հետո կատարված արարքները։ Հակառակ դեպքում, այս տեսակետի կողմնակիցների կարծիքով, մինչև կոնվենցիայի ուժի մեջ մտնելը տեղի ունեցած արարքները որպես ցեղասպանություն որակելը կդիտվի իրքն “nullum crimen sine lege” սկզբունքի խախտում, քանի ցեղասպանության հանցագործության հանցակազմն առաջին անգամ ամրագրվել է միայն վերոհիշյալ կոնվենցիայում։ Որպես նման տեսակետի փաստարկ քերվում է այն, որ ցեղասպանության, ինչպես նաև մարդկության դեմ ուղղված այլ հանցագործությունների համար պատասխանատվության կիրառումը տեղի է ունեցել միայն Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո՝ Նյուրնբերգի և Տոկիոյի միջազգային ռազմական տրիբունաների շրջանակներում։ Իրոք, միջազգային իրավունքում չի վիճարկվում այն փաստը, որ առանց միջազգային իրավունքի նորմով որոշակի գործողության կամ անգործության արգելման իրավաբանական պատասխանատվությունն անհնար է և անբոլութրելի։ Անշուշտ, դա վերաբերում է նաև ցեղասպանության հանցագործությանը։ Սակայն նման մոտեցման կողմնակից-

ները, ինչպես նշվեց, հաշվի չեն առնում այն հանգամանքը, որ միջազգային իրավունքի աղբյուր՝ պայմանագրային նորմերին զուգահեռ, հանդիսանում են նաև սովորույթային իրավական նորմերը, որոնց միջև իրավաբանական ուժի տեսանկյունից ոչ մի տարբերություն գոյություն չունի, ինչը բազմից ընդգծվել է ինչպես միջազգային իրավունքի գիտության մեջ, այնպես էլ պրակտիկայում։ Հետևաբար, մինչև Ցեղասպանության մասին կոնվենցիայի ընդունումը ցեղասպանության հանցագործության ապացուցման ժամանակ պետք է ելնել ոչ միայն պայմանագրային իրավունքի նորմերից, այլ նաև պետությունների՝ կոտորածներից և բնաջնջումներից որոշակի մարդկային խմբերի պաշտպանության ուղղված և դրանով իսկ ցեղասպանությունն արգելող բավական կայուն պրակտիկայով, ինչը բազմից դրսորվել է պատմության ընթացքում։

Միջազգային իրավունքի արևմտյան դպրոցի ներկայացուցիչները ցեղասպանության հանցագործության հարցում հիմնականում հարում են տրամադրուն հակառակ տեսակետի՝ պնդելով, որ ցեղասպանությունն ուղեկցել է մարդկությանն իր գոյության ողջ ընթացքում, և ցեղասպանության վաղ դեպքերի թվին են դասում որոշակի մարդկային խմբերի ոչնչացումը մոնղոլ-բարարների, հատկապես Չինգիզ Խանի արշավաճների, Լենկ թեմուրի նվաճումների ընթացքում կամ, որպես օրինակ, հիշատակում են եվրոպացի նվաճողների կողմից ամերիկյան հնդկացիների ոչնչացումը և այլն։ Գրեթե համանման տեսակետ էր արտահայտում նաև «ցեղասպանություն» հասկացության հեղինակ Ռ. Լեմկինը, որը հիշատակում է պատերազմների, բնաջնջումների բազմաթիվ դասական օրինակներ, երբ վերացվել են ամբողջ ազգեր ամբողջովին, կամ գրեթե ամբողջովին բնակչության տարբեր

խմբեր՝ հատուկ ընդգծելով, որ ցեղասպանության դեպքեր են, «Կարթագենի ոչնչացումը մ.թ.ա. 146թ., Տիտոսի կողմից Երուսաղեմի ավերումը մ.թ. 72թ., իսլամի կրոնական պատերազմները, խաչակրաց արշավանքները, ալիքոյցիների ջարդերը, երեսնամյա պատերազմում Մազդերուրդի պաշարումը և հայերի կոտորածները»:

Հատկանշական է այն հանգամանքը, որ ցեղասպանությունը դարձել է հանցավոր արարք Ցեղասպանության մասին կոնվենցիայի ընդունումից շատ ավելի վաղ: Նման տեսակետը պաշտպանվում էր նաև միջազգային իրավունքի խորհրդային մասնագետների կողմից: Մասնավորապես, հայտնի իրավաբան միջազգայնագետ, պրոֆեսոր Պ.Ռոմաշկինը դեռևս 1960-ական թվականներին այն տեսակետն էր արտահայտում, թե «ցեղասպանությունը նարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն է»: Բուն «ցեղասպանություն» հասկացությունն ի հայտ է եկել Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ և նշանակում է ռասայական, ազգային, էթնիկական կամ կրոնական դրդապատճառներով բնակչության առանձին խմբերի բնաջնջում: Այն հիմնականում պայմանավորված էր ֆաշիստական Գերմանիայի կողմից իրականացված նման գործողություններով: Ինչպես նշում է Յու. Բարսեղովը, «ցեղասպանության հանցագործության միջազգային հակաիրավականության հարցում չի կարելի հիմնվել Ո. Լեմկինի կողմից 1944 թվականին ստեղծված «ցեղասպանություն» եզրույթի կոնվենցիոնալ ամրագրման վրա, որպես sinequanon պայմանից շեղում: Եթե պայմանավորենք այս հանցագործության հանցակազմի տակ ընկնող արարքների որակման իրավաչափությունը տվյալ եզրույթի ձևական (ֆորմալ) պայմանագրային ճանաշմամբ, ապա նման որակման հնարավորությունն ստիպված կլինենք սահմա-

նափակել ոչ միայն Ցեղասպանության մասին կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո կատարված ցեղասպանության ակտերով, այլ նաև այն ստորագրած, վավերացրած կամ դրան միացած պետությունների շրջանակով»<sup>37</sup>:

Եթե դիտարկենք 1948 թվականի Ցեղասպանության մասին կոնվենցիան որպես տվյալ հանցագործությունն արգելող միջազգային իրավական նորմեր սահմանող փաստաթուղթ, ապա չի կարելի որպես պատժելի արարք որակել մինչ այդ տեղի ունեցած ցեղասպանությունները: Սակայն տվյալ կոնվենցիայի առանձնահատկությունը կայանում է հենց նրանում, որ այն մշակողները չեն նպատակադրվել միջազգային իրավական նոր նորմ ստեղծել, այլ միայն փորձել են ամրագրել արդեն իսկ գոյություն ունեցող իրավական նորմի առկայության փաստը: Դրա մասին են վկայում հենց «Ցեղասպանության մասին» կոնվենցիայի հոդված 1-ի ձևակերպումները, որը, մասնավորապես, սահմանում է, որ «Պայմանավորվող կողմերը հաստատում են (այլ ոչ թե սահմանում), որ ցեղասպանությունը, անկախ նրանից, կատարվում է խաղաղության կամ պատերազմի ժամանակ, միջազգային իրավունքի նորմերը խախտող հանցագործություն է...»: Հետևաբար, կոնվենցիայի հիմնական առաքելությունը կայանում է գոյություն ունեցող միջազգային իրավական նորմի ունիվերսալ պայմանագրային ճանաշման, այլ ոչ թե նորի ստեղծման մեջ: Այդ հանգամանքն ընդգծվել է դեռևս 1948 թվականին Ցեղասպանության մասին կոնվենցիայի նախապատրաստման ընթացքում, որի նախապատրաստման փաստարդերը պարունակում են ցեղասպանության պատմական փաստերի

<sup>37</sup> Վ. Մարգարյան, Հայերի դեմ ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետության միջազգային իրավական պատմահանատվության հիմքերը, եղանակները, ձևերը և տեսակները: «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տեղեկագիր N 1 (17), Երևան, 2006 թ., 90 էջ:

մասին բազմաթիվ նշումներ և հիշատակումներ: Այսպես, օրինակ, պայմանագրի նախապատրաստման ընթացքում Կուբայի ներկայացուցիչը նշել է, որ «պատմությունն ի հայտ է բերել ցեղասպանության անթվելի դեպքեր», Եզիզտոսի ներկայացուցիչը նշել է, որ «ցեղասպանության դեպքեր են տեղի ունեցել շատ վաղ անցյալում», Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ սըր Հարթի Շոութրոսը (որը, ի դեպ, նաև Նյուրնբերգյան դատավարության բրիտանական գլխավոր մեղադրողն էր) ցեղասպանությունը դիտում էր որպես «միջազգային իրավունքին արդեն խսկ ծանոթ հանցագործություն, որի դեպքերը պատմությունն ի հայտ է բերել դարերի ընթացքում», Արգենտինայի ներկայացուցիչը որակում էր ցեղասպանությունը որպես «հանցագործություն, որը, թեև միշտ հայտնի է եղել, որ գոյություն ունի, սակայն միայն վերջերս է բնորոշվել»<sup>38</sup>:

Այն հանգամանքը, որ մինչև Ցեղասպանության մասին կոնվենցիայի ընդունումը այդ հանցագործության հանցակազմի կոնկրետ նկարագրություն գոյություն չուներ, ևս չի կարող որպես ցեղասպանությունն արգելող նորմի բացայնություն դիտվել: Միջազգային իրավունքի նորմերի յուրահատկությունն այն է, որ դրանք չեն պարունակում կոնկրետ սանկցիաներ և հաճախ բնորոշում են երևույթներն ընդամենը հիմնական գծերով՝ միջազգային իրավունքի սուբյեկտներին իրավունք ընձեռելով ինքնուրույնարար որոշել դրանց իրագործման ձևերը: Մասնավորապես, Նյուրնբերգյան դատավարության ընթացքում մեղադրանքի հիմքում ընկան այնպիսի արարքներ, որոնք միջազգային կոնվենցիաներում ուղղակիորեն հանցագործություններ չեն անվանվում և դրանց կատարման համար անհատական բրեական պատասխանատ-

վություն չեր նախատեավում: Ա.Ասատրովի կարծիքով, «Միջազգային իրավունքի ակնհայտ բացերը հաշվի առնելով՝ Նյուրնբերգյան դատավարության մեղադրող պետությունները մեծ նշանակություն էին հատկացնում այն փաստին, որ Միջազգային ուազմական տրիբունալի կանոնադրությունում ամրագրված են միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմեր, որոնք միջազգային սովորույթների տեսքով գոյություն են ունեցել մինչև Տրիբունալի ստեղծումը: Այդ նորմերի գոյության ապացույց էր հանդիսանում պետությունների կողմից դրանք ճանաչելու և պահպանելու պրակտիկան, ինչպես նաև տարրեր միջազգային կազմակերպությունների և ֆորումների՝ միջազգային իրավունքում այդ նորմերի հաստատմանը և ամրագրմանն ուղղված գործունեությունը: Այդ նորմերը դարձել էին ընդհանուր միջազգային իրավունքի բաղկացուցիչ մաս և ճանաչվում էին անկախ պետությունների այս կամ այն կոնվենցիային մասնակցությունից»<sup>39</sup>: Ավելին, եթե առաջնորդվենք տվյալ տրամաբանությամբ, ապա նույնիսկ այսօր չի կարելի իբրև հանցագործություն դիտել այնպիսի արարք, ինչպիսին է միջազգային ահարեկությունը, որի համաշխարհորեն ճանաչված հասկացությունը միջազգային հանրության կողմից դեռևս չի մշակվել:

Մինչև 1948թ. դեկտեմբերի 9-ին Ցեղասպանության մասին կոնվենցիայի ընդունումը ցեղասպանությունն արգելող ունիվերսալ միջազգային պայմանագիր գոյություն չուներ, չնայած նրան, որ ցեղասպանությունը դիտվում էր որպես հանցագործություն՝ համաձայն միջազգային իրավունքի: ՍԱԿ-ի ստեղծումից հետո քայլեր ձեռնարկվեցին այդ հանցագործությունը կանխարգելելու և պատժելու ուղղությամբ: ՍԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 96(1) բանաձևը դարձավ ՍԱԿ-ի

<sup>38</sup> Վ. Մարգարյան, նշվ. աշխ.:

<sup>39</sup> Վ. Մարգարյան, նշվ. աշխ.:

առաջին փաստաթղթերից մեկը: Այն, փաստորեն, առաջին անգամ փորձեց գրավոր ձևակերպել ցեղասպանության էությունը՝ բնորոշելով վերջինս որպես «... ամբողջական մարդկային խմբերի գոյության իրավունքի ճանաչման մերժում, այնպես, ինչպես մարդասպանությունը նշանակում է առանձին մարդկային էակների կյանքի իրավունքի ճանաչման մերժումը. գոյության իրավունքի ճանաչման նման մերժումը վիրավորում է մարդկային խիղճը, մեծ վնասներ է պատճառում մարդկությանը, որը զրկվում է այդ մարդկային խմբերի կողմից տրվող մշակութային և այլ արժեքներից և հակասում է բարոյական օրենքին, Սիավորված ազգերի ոգուն ու նպատակներին»: Թիվ 96(1) քանաձևը մշակողները հսկայական ներդրում կատարեցին այն փաստի հաստատման գործում, որ ցեղասպանությունն արգելված էր քննարկվող փաստաթղթերի ընդունումից շատ ավելի վաղ՝ հատուկ մատնանշելով «ցեղասպանության» բազմարիվ դեպքեր, եթե ամբողջական կամ մասնակի ոչնչացման ենթարկվեցին ռասայական, կրոնական, քաղաքական և այլ խմբեր: Մասնավորապես նշվում էր, որ «ցեղասպանության հանցագործության համար պատժելը միջազգային կարևորության հարց է»: Ելնելով վերը նշվածից՝ Գլխավոր ասամբլեան եկավ այն եզրակացության, որ «...ցեղասպանությունը՝ միջազգային իրավունքի տեսանկյունից, հանցագործություն է, որը դատապարտվում է քաղաքակիրք աշխարհի կողմից, և որի կատարման համար մեղավորները և հանցակիցները ենթակա են պատժի, անկախ նրանից, թե նրանք մասնավոր անձինք են, պետական պաշտոնատար անձինք կամ պետական գործիչներ, և անկախ նրանից, թե հանցագործությունը կատարված է կրոնական, ռասայական, քաղաքական կամ որևէ այլ դրդապատճառ-

ներով»<sup>40</sup>: Քննարկվող քանաձևն անհրաժեշտ քաղաքական և իրավական հիմք ծառայեց Ցեղասպանության մասին կոնվենցիայի մշակման համար, որն ընդունվեց 1948թ. դեկտեմբերի 9-ին և ուժի մեջ մտավ 1951թ. հունվարի 12-ին: Տվյալ կոնվենցիայի հիմնական նպատակն էր հաստատել այն փաստը, որ ցեղասպանությունը դիտվում է որպես հանցագործություն՝ համաձայն միջազգային իրավունքի և մեկընդմիշտ ճանաչել ցեղասպանությունն արգելող ընդհանուր միջազգային իրավունքի նորմի գոյության փաստն ու սահմանել կոնվենցիայի բուն էությունը՝ հստակեցնել և մանրամասնել ընդհանուր միջազգային իրավունքի նորմերով արդեն երկար ժամանակ արգելված արարքը: Տվյալ եզրահանգումը կոնվենցիայի ուժի մեջ մտնելուն պես՝ հաստատվեց 1951 թվականի ՍԱԿ-ի Միջազգային դատարանի խորհրդատվական եզրակացության մեջ, որում նշվում էր, որ «Կոնվենցիայի հիմքում ընկած սկզբունքները ճանաչվում են բոլոր քաղաքակիրք պետությունների կողմից որպես պարտադիր՝ նույնիսկ առանց որևէ կոնվենցիոնալ ամրագրման»<sup>41</sup>:

Ներկայացված խորհրդատվական եզրակացությունը վերջ դրեց ցեղասպանության հանցագործության և Ցեղասպանության մասին կոնվենցիայի վերաբերյալ քանավեճերին՝ հաստատելով, որ կոնվենցիայի հիմնարար սկզբունքները պարտադիր են բոլոր պետությունների համար՝ որպես erga omnes պարտավորություններ: Անհրաժեշտ է նշել, որ ցայսօր գոյություն չունի որևէ հեղինակավոր պաշտոնական միջազգային իրավական փաստաթուղթ, որը կհաստատեր կամ կմերժեր Ցեղասպանության մասին կոնվենցիայի կիրառելիության

<sup>40</sup> ՍԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1946թ. դեկտեմբերի 11-ի 96 (1) քանաձև: [http://www.un.am/res/UN%20Treaties/III\\_1.pdf](http://www.un.am/res/UN%20Treaties/III_1.pdf)

<sup>41</sup> Римский Статут Международного уголовного суда. [http://www.un.org/rus/law/icc\\_rome\\_statute\(r\).pdf](http://www.un.org/rus/law/icc_rome_statute(r).pdf)

## ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ, ՆՅՈՒԹԱԿԱՆ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՈՐՈՒՏՏԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

հնարավորությունը մինչև դրա ուժի մեջ մտնելը տեղի ունեցած արարքների նկատմամբ: «Ցեղասպանության մասին» կոնվենցիայի հոդված 9-ի համաձայն, «Պայմանագրվող կողմերի միջև վեճերը՝ կապված սույն կոնվենցիայի մեկնարանան, կիրառման կամ կատարման հետ, ներառյալ նաև ցեղասպանության կամ սույն կոնվենցիայի III հոդվածում թվարկված որևէ արարք կատարելու համար այս կամ այն պետության պատասխանատվության վերաբերյալ վեճերը, հանձնվում են Արդարադատության միջազգային դատարանի քննությանը՝ վեճի կողմերից յուրաքանչյուրի պահանջով»<sup>42</sup>: Հետևաբար, համաձայն վերը նշված հոդվածի՝ կոնվենցիայի դրույթների մեկնարանությունը ՄԱԿ-ի միջազգային դատարանի բացառիկ իրավասությունն է: Մինչև ՄԱԿ-ի Միջազգային դատարանը վերջնական որոշում չկայացնի մինչև Ցեղասպանության մասին կոնվենցիայի ուժի մեջ մտնելը տեղի ունեցած արարքների նկատմամբ դրա կիրառելիության հնարավորության կամ անհնարության վերաբերյալ, ցանկացած դատողություն կիանդիսանա կոնվենցիայի՝ պարտադիր ուժ չունեցող, դոկտրինալ (ոչ պաշտոնական) մեկնարանություն:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է պնդել, որ ռասայական, ազգային, կրոնական կամ էթնիկական խմբի ոչնչացմանն ուղղված կանխամտածված արարքների ամրողությունը, որը հետագայում անվանվեց ցեղասպանություն, դիտարկվում է որպես միջազգային իրավունքի նորմերին հակասող և պատժելի արարք 19-րդ դարի երկրորդ կեսից:

<sup>42</sup> Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին ՄԱԿ-ի կոնվենցիա: [http://www.un.am/res/UN%20Treaties/III\\_1.pdf](http://www.un.am/res/UN%20Treaties/III_1.pdf)

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման գլորալ գործընթացի բաղկացուցիչ և կարևոր մասերից մեկը հայ ժողովրդի կրած հսկայական և տարատեսակ վնասների փոխհատուցման խնդրի լուծումն է, որը խիստ բարդ և միջազգային մասշտարով ձևավորված կառույցների կողմից մանրամասն հետազոտության կարիք ունեցող հիմնախնդիր է: Ընդ որում, բարդությունը կայանում է ոչ միայն նրանում, որ ցեղասպանությունից անցել է հարյուր տարի, իսկ դրա մասին վկայող փաստաթղթերի մեծ մասը ոչնչացվել ու կորսվել են, այլև նրանում, որ բուն վնասների հաշվարկման մերողաբանությունն ու մեխանիզմները բավականին «խոցելի» են, եթե չասենք, որ դրանց մի զգալի մասը, թեև տեսականորեն մոտ են օրյենկտիվ իրականության արտացոլմանը, այդուհանդերձ, գործնական կիրառելիության տեսանկյունից՝ քիչ արդյունավետ և օգտագործելի կարող են համարվել:

Ինչ վերաբերում է «կորուստ» հասկացության մեկնարանությանը, ապա այն բավականին միանշանակ ընկալվող հասկացություն է և առանձնակի բանավեճի խնդիր չի առաջացնում: Մասնավորապես, ըստ Է. Բ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի» կորուստ նշանակում է «կորչելը, կորցնելը, ... պատերազմում շարքից դուրս եկած մարդիկ, ինչպես և ռազմամբերը ու տեխնիկա, ... մահ, սպանություն, ... փիր.՝ վնաս, փշացում, ... նվազում, ... բուլացում,

պակասում, ... մեկից բաժանվելը, զրկվելը»<sup>1</sup> և այլն: Հստ «Հայերեն օնլայն բառարանի» ավելանում են ընդհանուր «տապալում, կործանում»<sup>2</sup> բառերը և այլն: Մյուս կողմից, ցեղասպանության տարիներին հայ ժողովուրդը, կարելի է ասել, կորցրել է այն ամենը՝ ինչ հնարավոր էր կորցնել, ուստի վնասների մասին խոսելիս անհրաժեշտ է նկատի ունենալ դրանց հնարավոր բոլոր տեսակները (նյութական, ֆինանսական, մարդկային կամ ժողովրդագրական, մշակութային, քարոյական և այլն), այն էլ խիստ մեծ մասշտարներով:

Օրինակ, Վաղիմիր Մարգարյանն իր «Հայերի դեմ իրագործած ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետության միջազգային իրավական պատասխանատվության հիմքերը, եղանակները, ձևերը և տեսակները» հետազոտության վերջում ձևակերպել է մի շարք կարևոր և արժեքավոր եղանակներ, որոնց մի մասը վերաբերում է հենց հայերի կրած կորուստների ու վնասների վերականգնմանը: Մասնավորապես, նա նշում է, որ «Սիցազգային իրավական նորմերի վերլուծությունը բույլ է տալիս եղանակներ, որ Թուրքիայի Հանրապետությունն Օսմանյան կայսրության միջազգային իրավական ինքնուրբյան շարունակողն է (continuity) և, հետևաբար, պատասխանատվություն պետք է կրի Օսմանյան կայսրության կողմից հայերի դեմ իրագործված ցեղասպանության համար ու համապատասխան հատուցում տրամադրի այդ հանցագործության զոհերին և նրանց ժառանգներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայերի դեմ իրագործած ցեղասպանությունը տեղի է ունեցել ոչ միայն Օսմանյան կայսրության տարածքում, այլ նաև դրա սահմաններից դուրս, մասնավորապես, անկախ Հայաստանի տարածքում՝

<sup>1</sup> Է. Բ. Աղայան, Արդի հայերենի բացարական բառարան, «Հայաստան» իրատարակություն, Երևան, 1976, էջ 764:

<sup>2</sup> Տե՛ս <http://bararanonline.com/կորուստ>:

հայ ազգաբնակչությանը բնաջնջելու հատուկ մտադրությամբ, իսկ այդ հանցագործության հետևանքով հազարավոր արևամտահայեր ապաստան են զտել և բնակություն հաստատել Հայաստանի Հանրապետության տարածքում, կարելի է եղրակացնել, որ Հայաստանի Հանրապետությունը տվյալ հանցագործության արդյունքում անմիջականորեն տուժած պետություն է և, հետևաբար, օժտված է Թուրքիայի Հանրապետությանը միջազգային իրավական պահանջներ ներկայացնելու իրավունքով:

Ժամանակակից միջազգային իրավունքի զինանոցում գոյություն ունեցող միջազգային իրավական պատասխանատվության բոլոր ձևերն ու տեսակները (ռեստիտուցիա, կոմպենսացիա, սատիսֆակցիա և այլն) կարող են կիրառելի լինել հայերի դեմ իրագործած ցեղասպանության նկատմամբ, ավելին՝ միայն նրանց համադրությամբ է հնարավոր այդ հանցանքով պատճառված նյութական և քարոյական վնասի լիակատար հատուցումը:

Թուրքիայի Հանրապետությունը՝ որպես հայերի դեմ իրագործած ցեղասպանության համար իրավական ռեստիտուցիայի (ռեստորացիայի) տարատեսակ, պարտավոր է, մասնավորապես՝ համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ ուղղված իրենց նախնիների բնակության վայրեր ցեղասպանության զոհերի և նրանց ժառանգների ու իրավահաջորդների վերադառնալու և վերաբնակվելու հնարավորության ապահովմանը, ինչպես նաև անվավեր ճանաչել Թուրքիայում հայերի դեմ իրագործած ցեղասպանության տարիներին և դրանից անմիջապես հետո ընդունած ցեղասպանության քաղաքականությունը լեզվիմացնող նորմատիվ իրավական ակտերը, մասնավորապես՝ հայերի սեփականության բնագրավումն օրինականացնող և Թուրքիա նրանց վերադառնալու և բնակություն հաստատելու իրավունքից զրկող օրենքները:

Հայերի դեմ իրագործած ցեղասպանության հետևանքով պատճառված այն վճարը, որը ռեստիտուցիայի առարկա դառնալ չի կարող, այսինքն՝ չի կարող վերականգնվել կամ հատուցվել բնեղենով, պետք է փոխհատուցվի դրամական արտահայտությամբ: Ընդ որում, համաձայն ժամանակակից միջազգային իրավունքի նորմերի և ձևավորված պրակտիկայի՝ փոխհատուցման ենթակա են ոչ միայն ցեղասպանության զոհերին պատճառած նյութական կորուստները, այլ նաև քարոյական վճարը:

Հայերի դեմ իրագործած ցեղասպանության պարագայում, որպես սատիսֆակցիայի տարատեսակներ, կարող են կիրառվել, մասնավորապես, Թուրքիայի Հանրապետության կողմից հայերի դեմ իրագործած ցեղասպանության փաստի պաշտոնական իրապարակային ճանաչումն ու ափսոսանքի և ցավակցության արտահայտումը, հայերի դեմ իրագործած ցեղասպանության փաստը մերժելու քաղաքականությունից իրաժարումը և նման ժխտման դեմ պայքարելու համար անհրաժեշտ օրենսդրության ընդունումը, հայերի դեմ իրագործած ցեղասպանության կազմակերպիչների ու իրագործողների իրապարակային դատապարտումը, ինչպես նաև Թուրքիայի Հանրապետության տարածքում գտնվող հայկական հուշարձանների պահպանության ու վերականգնման ուղղված հատուկ միջոցների մշակումը»<sup>3</sup>:

Վճարների փոխհատուցման հիմնախնդրի քարդությունն առավել ակնառու դարձնելու համար ներկայացնենք Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Նորվեգիայում տեղի ունեցած հրեաների ունեղրկման և կրած վճարների

վերականգնման գործընթացը, որը բազմաթիվ նմանություններ ունի Հայոց ցեղասպանության հետ և կարող է բավականին օգտակար լինել հայերի կրած վճարների հաշվարկման ու վերադարձման գործընթացի առումով:

Նորվեգիայում տեղի ունեցած հրեաների ոչնչացման և ունեղրկման հետևանքով նրանց կրած վճարների վերականգնման նպատակով 1996 թվականի նոյեմբերի 29-ին այդ երկրի արդարադատության նախարարությունը ձևավորեց պաշտոնական կոմիտե՝ որա առջև դնելով ընդամենը մեկ հիմնական խնդիր՝ ուսումնասիրել թե Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում և դրանից հետո ի՞նչ է տեղի ունեցել Նորվեգիայում հրեական ունեցվածքի հետ: Կոմիտեն, որը դեկավարում էր նահանգապետերից մեկը, կազմված էր յոթ հոգուց, որից երկուսին նշանակել էր Նորվեգիայի հրեական համայնքը, իսկ կոմիտեի անդամներն էլ հիմնականում իրավաբաններ ու պատմաբաններ էին:

Վերլուծական իր աշխատանքներում կոմիտեն օգտագործում էր այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են՝ ընդհանուր բնույթի աղբյուրների հետազոտությունը, գույքային գրանցումների ուսումնասիրությունը (այսինքն՝ գույքային այն գործերի դիտարկումը, որոնք բացվում էին գույքի նկատմամբ իրավունքների յուրաքանչյուր գրանցման ժամանակ) և գույքի կառավարման փաստարդերի ուսումնասիրությունները: Աշխատանքի այս ուղղություններից յուրաքանչյուրը տախս է իր տեղեկատվությունը, սակայն ունի նաև իր սահմանափակ շրջանակները, ուստի դրանք միայն փոխադարձ կապի մեջ կարող են օգնել ձևավորելու ունեցվածքի բռնազավթման և վերադարձման ընդհանուր պատկերը:

Մոտավորապես մեկ տարի աշխատելուց հետո նշված կոմիտեն բաժանվեց երկու մասի՝ իինգ և երկու հոգանոց խմբերի, իսկ 1997 թվականի հունիսի 23-ին դրանցից յուրա-

<sup>3</sup> Տե՛ս Վ. Մարգարյան, «Հայերի դեմ իրագործած ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետության միջազգային իրավական պատասխանատվության հիմքերը, եղանակները, ձևերը և տեսակները», էջ 89-92,  
[http://www.noravank.am/upload/pdf/58\\_am.pdf](http://www.noravank.am/upload/pdf/58_am.pdf):

քանչյուրն արդարադատության նախարարին ներկայացրեց իր սեփական գեկույցը: Մեծամասնության գեկույցը կազմված էր ֆինանսական հաշվետվության տեսքով ու սկզբունքով, այն դեպքում, երբ փոքրամասնության գեկույցը բնութագրվում էր հիմնախնդրի ավելի լայն դրվածքով ու ընդգրկմամբ և ներառում էր նաև հիմնախնդրի բարոյական-էթիկական ասպեկտը: Նշված երկու գեկույցների տեսակետների ու հեռանկարի այս տարրերությունը ուներ և հետազայում ունեցավ տնտեսական լուրջ հետևանքներ: 1998 թվականի ապրիլի 30-ին Նորվեգիայի վարչապետը հայտարարեց, որ կառավարությունն ընդունում է փոքրամասնության տեսակետներն ու մոտեցումները և հետազա աշխատանքների իրականացման նպատակով հիմք է ընդունելու այդ խմբի գեկույցը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ հրեաների տնտեսական ոչնչացումը կրում էր համատարած բնույթը. նրանք զրկվեցին սեփականության և սեփական բիզնես վարելու բոլոր իրավունքներից՝ հանգեցնելով լայն իմաստով տնտեսական վճասների, քանի որ ոչնչացվեց կրոնական, մշակութային, տնտեսական և սոցիալական մի ամրող համայնք:

Նորվեգիայի հրեական բնակչությունը 1941-1942 թվականներին կազմված էր մոտավորապես 1000 ընտանիքից՝ ընդհանուր առմամբ 2173 մարդոց, որոնք հիմնականում բնակվում էին Օպեյում և Տրոնհեյմում (շնայծ փաստաթղթերը վկայում են, որ նրանք ապրել են ավելի քան 60 քաղաքներում՝ Նորվեգիայի ամրող տարածքում): Հրեական ազգային փոքրամասնությունը զբաղված էր հիմնականում առևտի ոլորտում, նրանց պատկանում էր 401 ձեռնարկություն, մոտ 40 մարդ քժիշճներ, ատամնաբույժներ և իրավաբաններ էին, իսկ մնացածները՝ արհեստավորներ ու նկարիչներ, և միայն քչերն էին զբաղված պետական հատվածում, զյուղատնտեսությունում և ձկնարուծության ոլորտներում: Գոյություն ունեին երկու

խոշոր հրեական համայնքներ՝ Օպեյում և Տրոնհեյմում, որտեղ հրեա բնակչությունը բավականին հարուստ կյանքով էր ապրում, ունեին բազմաթիվ կրոնական ու մշակութային կազմակերպություններ, որոնք իրականացնում էին տարատեսակ լուսավորչական և բարեգործական ծրագրեր, կային նաև ծերանցներ և մանկասուն: Նշված երկու քաղաքներում գործում էին երեք սինագոգներ, ինչպես նաև կրոնական հետազոտությունների կենտրոն և գերեզմանատներ:

Գերմանական օկուպացիայի ժամանակաշրջանում (1940 թվականի ապրիլի 9-ից մինչև 1945 թվականի մայիսի 8-ը) հրեական փոքրամասնության նկատմամբ վերաբերմունքը նույնախիս դաժան էր, որքան օկուպացված Եվրոպայի մյուս երկրներում, և բոլոր հրեաներին վերջին հաշվով սպասվում էր համակենտրոնացման ճամբարներ և ոչնչացում: Սակայն, ի տարրերություն եվրոպական մի շարք երկրների, Նորվեգիայում հրեական ունեցվածքի բռնազավթումն իրականացնում էր պետությունը, և այդ ունեցվածքը փոխանցվում էր պետական գանձարան: Որպեսզի ավելի լավ հասկանալի լինի այդ տարիներին հրեական համայնքի կրած տնտեսական վճասի եռությունը, անհրաժեշտ է հրեաների ֆիզիկական և տնտեսական ոչնչացումը դիտարկել որպես նույն հանցագործության երկու կողմեր, որին բնորոշ էին հետևյալ բնութագրական գծերը՝ իրավունքների սահմանափակումներ կամ ընդհանրապես դրանցից զրկում, մեկուսացում, բռնազրավում և տնտեսական ոչնչացում, արտաքսում, ֆիզիկական բնաջնջում: Այլ կերպ ասած, ոչնչացումը կրում էր համալիր բնույթ և նպատակ ուներ լիովին բնաշնչել հրեաներին՝ որպես ինքնուրույն խմբի: Դրված նպատակին հասնելու համար, տնտեսական առումնով, կիրառվում էին այնպիսի մեթոդներ, որոնք ապահովում էին կրոնական և մշակութային կենտրոնների, ինչպես նաև հրեա ընտանիքներին պատկանող առևտրային ձեռնար-

կորյունների լիակատար ոչնչացում: Այս միջոցառումների իմաստը կայանում էր նրանում, որպեսզի թույլ տրվեր նացիստական իշխանության այդ ունեցվածքը վերցնել իրենց վերահսկողության տակ, ինչպես նաև երաշխափորվեր հրեաների կողմից գործարար բոլոր կապերի ու գործողությունների դադարեցումը:

Այս տնտեսական միջոցառումներն իրականացվում էին որպես 1942 թվականի հոկտեմբերի 26-ի՝ հրեաներին պատկանող ունեցվածքի բռնազրավման մասին նորվեգական օրենքի ի կատար ածում: Տնտեսական ոչնչացմանը պաշտոնական տեսք տալու գործընթացը սերտորեն կապված էր նորվեգական հրեաների ֆիզիկական ոչնչացման հետ, և իրականում, երբ սկսվեցին տնտեսական ոչնչացման ակտերը, միաժամանակ սկսվեցին նաև հրեաների արտաքսման գործընթացները: Միանգամայն ակնհայտ է, որ բնակչության մի ամբողջ խմբի ունեցվածքի և կապիտալի նման ամբողջական ոչնչացման իրականացումն անհնարին կլիներ առանց նախապես կազմված արտաքսման պլանի: Նորվեգիայից արտաքսվեցին ընդհանուր առմամբ 767 հրեաներ, որոնցից միայն 30-ին հաջողվեց փրկվել, իսկ մնացած հրեաները, որոնք ապրում էին Նորվեգիայում, փախան երկրից:

Ոչնչացման պաշտոնական գործընթացը կազմակերպված էր այն սկզբունքով, ըստ որի հրեաներին պատկանող յուրաքանչյուր ունեցվածքը անհրաժեշտ է տնօրինել այնպես՝ ինչպես դա կարվեր, եթե որա տերը սնանկ ճանաչվեր: Նմանապես, մասնավոր յուրաքանչյուր տնտեսություն վեր էր ածվում ընտանեկան սեփականության, ընդ որում՝ ընտանիքի մեկ անդամը (սովորաբար՝ ամուսինը) նշանակվում էր որա տիրապետող: Դա նշանակում էր, որ յուրաքանչյուր ընտանիք (կամ բիզնես) վեր էր ածվում հաստատագրված միավորի, պայմանով, որ այդ միավորը շարունակում էր գոյություն

ունենալ որպես իրավաբանական անձ, ինչն էլ թույլ էր տալիս այդ ունեցվածքից գանձել ընթացիկ ծախսերը՝ նույնիսկ դրա լիկվիդացիան վերջացնելուց հետո:

Սկզբունքային նշանակություն ունի նորվեգական հրեաների տնտեսական ոչնչացման կողեկտիվ բնույթը, քանի որ նրանց համար համատարած սպանդ էր նախատեսված: Նրանց սեփականության և ակտիվների բաշխումն իրականացվում էր հատուկ սխեմաներով, որը ծառայում էր նացիստական ռեժիմի շահերին, չնայած որոշ ակտիվներ էլ իրացվում էին, իսկ իրացումից ստացված շահույթը հետագայում հանդիսացավ հրեական միավորված ակտիվների ձևավորման հիմքը (պատերազմի ավարտին լիկվիդացիայի խորհուրդը ծախսել էր այդ ակտիվների մոտ 30 տոկոսը՝ սեփական վարչարարական ծախսերի իրականացման նպատակով):

Պատերազմից հետո սկսվեց նշված ունեցվածքի վերադարձման բարդ գործընթացը: Սկզբունքորեն, բոլոր նրանք, անկախ նրանից հրեա էին, թե ոչ, պետք է հնարավորություն ունենային հասնելու իրենց ունեցվածքի վերադարձմանը: Սակայն պարզվեց, որ դա հնարավոր չէ ապահովել, որի պատճառներից մեկը կայանում էր նրանում, որ չին պահպանվել ուսպարացիայի համար անհրաժեշտ սկզբնական ֆինանսական հիմքերը: Բացի այդ, իշխանությունները սահմանեցին բավականին բարդ կանոններ, որոնք հիմնում էին նրանց կողմից իրականացվող հետպատերազմյան ռեպարացիայի համար հիմնարար նշանակություն ունեցող երկու սկզբունքների վրա՝ «համահարթեցման սկզբունքը» և «վերականգնման սկզբունքը»: Այս կանոններն օգտագործվում էին յուրաքանչյուր դիմողի համար ռեպարացիայի գումարները որոշելու համար՝ նրա կորցրած ունեցվածքին համամասնորեն: Համահարթեցման սկզբունքն իրականացվում էր այդ գումարների մեծությունները հատուկ սանդղակի կիրառմամբ նվազեցնելու

միջոցով, որի արդյունքում ստացվում էր, որ ինչքան մեծ էր լինում կրած վնասը, այնքան փոքր էր լինում փոխհատուցման տոկոսը: Ինչ վերաբերում է վերականգնման սկզբունքի կիրառմանը, ապա դրա էությունը կայանում էր նրանում, որ ընտանիքի յուրաքանչյուր անդամի մահվան հետ կապված՝ համապատասխանաբար կրծատվում էր փոխհատուցվող ունեցվածքի չափը:

Կապված ոչնչացման կողեկտիվ և համատարած քննությի, ինչպես նաև մահվան գրանցման յուրահատուկ կարգի հետ, փոխհատուցման նշված սկզբունքները հրեաների համար ունեցան շատ հեռուն տանող հետևանքներ: Այսպես, 203 ընտանիքներ ամրողությամբ ոչնչացվել էին, իսկ մյուսները լուրջ վնասներ էին կրել պատերազմի տարիներին: Ռեպարացիոն մարմինների կարծիքով, նրանք, ում հաջողվել էր ողջ մնալ, ամրողական փոխհատուցման իրավունք չունենին, որովհետև այդպիսի փոխհատուցումը կնշանակեր նրանց նախապատերազմյան կյանքի և բիզնեսի ամրողական վերականգնում: Նույնիսկ մահացածների օրինական ժառանգները ստանում էին կամ կրծատված փոխհատուցում, կամ էլ ընդհանրապես նրանց հաշվի չին առնում փոխհատուցման տրամադրման ժամանակ: Մյուս հարցը, որ շատ էր անհանգուստացնում ռեպարացիոն մարմիններին, կայանում էր նրանում, որ եթե հրեաներին, իրենց հարազատների մահից հետո, քոյլ տրվեր ժառանգելու նրանց ամրող ունեցվածքը, ապա նրանք կարող էին համարվել «ռազմական սպեկուլյանտներ», քանի որ նրանք «ձեռք կրերեին այնպիսի ունեցվածք, որը սովորական պայմաններում նրանց համար անհասանելի կլիներ»:

Մահվան գրանցման այսպիսի յուրահատուկ կարգի կիրառմամբ ռեպարացիոն մարմինների կողմից փոխհատուցումն իրականացվում էր երկու ճանապարհով. մեկ փոխհատուցում

նրանց համար, ովքեր ողջ էին մնացել և գրանցվել էին որպես միավորված հրեական ակտիվների սեփականատերեր, և մեկ փոխհատուցում էլ այդ գրանցված անձանց ժառանգների համար: Երկրորդ կատեգորիայի անձինք կարող էին լինել նույն ընտանիքի անդամներ, այնպես ինչպես միավորված հրեական ակտիվների սեփականատեր հանդիսացողը, սակայն իրավունք չունեին պահանջելու իրենց ժառանգությունը՝ քանի դեռ գրանցված սեփականատերը պաշտոնապես մահացած շիայտարարվեր: Խակ քանի որ համակենտրոնացման ճամբարներում մահվան վկայականներ չին տալիս, ապա ողջ մնացած հրեաները չին կարող ապացուցել, որ իրենց անհետ կորած հարազատներն իսկապես մահացել են: Դա նշանակում էր, որ ընդիուպ մինչև 1947 թվականի աշունը նորվեգական իշխանություններն այդ սպանված մարդկանց պաշտոնապես մահացած չին համարում, և միայն 1947 թվականից հետո սկսեցին փորձել անհետ կորածներին տեղափոխել մահացածների կատեգորիա և վերականգնել յուրաքանչյուր ընտանիքի անդամների մահվան հաջորդականությունը: Օրինակ, այն դեպքերում, եթե մորն ու երեխաներին միասին էին ուղարկել զազախցիկ, ուսպարացիոն մարմինները պետք է որոշեին, թե ինչ հաջորդականությամբ են նրանք մահացել, որպեսզի դրա հիման վրա էլ որոշեին յուրաքանչյուր ժառանգորդի տեղը ժառանգների կարգում: Այս բոլոր բարդությունների հետևանքով գույքային հարցերի կարգավորման գործընթացը չափազանց երկարաձգվում էր և, սովորաբար, տևում 8-10 տարի, եթե ոչ ավելի: Վերջին դատական գործը, որի մասին կամ փաստացի տվյալներ, տեղի է ունեցել 1987 թվականին, որի երկարատևության արդյունքում գույքի նկատմամբ հաշվարկվող ծախսերը չափազանց մեծ էին ստացվել և արդյունքում ռեպարացիոն մարմինները վերադարձել էին կորսված ունեցվածքի ընդամենը կեսը:

Այն հանգամանքը, որ վերը նշված կոմիտեն բաժանվեց երկու մասի և ներկայացրեց սկզբունքորեն տարրեր երկու գեկույցներ, նորվեգական իշխանությունների համար շատ լուրջ հիմնախնդիր առաջացրեց: Դա նշանակում էր, որ իշխանությունը ստիպված էր ընտրություն կատարել երկու տարրեր մոտեցումների և պատմության նկատմամբ երկու տարրեր տեսակետների միջև: Սակայն, հետաքրքիր է, որ իրարից տարրերվող նման մոտեցումները՝ ֆինանսական հաշվետվության կամ հումանիստական տեսակետները, հանդիպում են նաև ներկայիս Եվրոպայի շատ երևոյթներում: Առաջին մոտեցումը ենթադրում է, որ մեզ հետաքրքրում է, թե արդյո՞ք ճիշտ են կիրառվել հետպատերազմյան կանոններն ու նորմերը, իսկ երկրորդ մոտեցումը քննադատում է սովորական կանոնների և նորմերի կիրառումն այնպիսի երևոյթի նկատմամբ, ինչպիսին է Հոլոքոստը: Այսինքն, տեղի ունեցած փաստի և դրա հետևանքների վերացման միջև ընկած պատմական մեծ (մոտ հիսուն տարվա) տարածությունը էթիկական երկընտրանք է ծնում՝ մարդկության համար առաջացնելով բարոյական որոշակի պատասխանատվություն: Նորվեգական իշխանությունն, այս առումով, ընտրեց հումանիստական մոտեցումը և որոշեց իր վրա պատասխանատվություն վերցնել հետազայի համար և գործել դրան համապատասխան: Դա նշանակում է, որ բացի նորվեգական իրեաներից պաշտոնապես ներողություն խնդրելոց, Նորվեգիայի կառավարությունը պատրաստակամություն հայտնեց իրեաներին վճարել 450.0 մլն. նորվեգական կրոն, այսինքն՝ այն գումարը, որը բոնագրավվել էր նորվեգական գանձապետարանի կողմից Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Այդ գումարը որոշվեց բաժանել չորս մասի, որից առաջինը նախատեսված էր բոլոր ողջ մնացածներին և մահացածների ժառանգներին վճարելու, երկրորդը՝ Նորվեգիայի իրեական

համայնքին և նրա կազմակերպություններին կոլեկտիվ վճարումներ կատարելու, երրորդը՝ իրեաների միջազգային կազմակերպություններին վճարելու համար, իսկ չորրորդը պետք է ծառայեր որպես Նորվեգիայում Հոլոքոստի և ընդհանուր առմամբ ազգային փոքրամասնությունների հիմնախնդիրների ուսումնասիրության կենտրոնի ստեղծման համար նախնական գումար կամ ներդրում<sup>4</sup>:

Վերը նկարագրվածը, կարծում ենք, ակնհայտ է դարձնում ոչ միայն Հայոց ցեղասպանության և իրեաների բնաջնջման միջև առկա բազմաթիվ նմանությունները, այլև այն հանգամանքը, որ ի տարրերություն նորվեգական իրեաների, հայերի բնաջնջման ժամանակ անհամեմատ ավելի քիչ փաստաթղթեր են ստեղծվել, առավել ևս՝ պահպանվել, իսկ բուրքական իշխանություններն էլ, իրենց ժիստողական քաղաքականությամբ, որևէ կերպ չեն կարող համեմատվել ժողովրդավարության և հումանիզմի սկզբունքներով առաջնորդվող նորվեգական իշխանությունների հետ: Ուստի, հայերի համար փոխհատուցման խնդիրների կարգավորումը, կարծում ենք, որոշ չափով իրատեսական լուծումներ կարող է գտնել բացառապես միջազգային մակարդակում ստեղծված և շահերի հաշվեկշռվածության ապահովման սկզբունքներով ձևավորված միջազգային հատուկ կազմակերպության աշխատանքի արդյունքում:

Կարծում ենք, ակնհայտ է նաև, որ Հայոց ցեղասպանության իրականացման տարիներին մեր ժողովրդի կրած նյութական (գույքային, հողային, ֆինանսական, գործարար, ժողովրդագրական և այլն), ինչպես նաև բարոյական վնասներն ընդգրկում է նմանատիպ կորուստների ողջ սպեկտրն ու տեսակները, ուստի միջազգային հարբակներում որևէ կաս-

<sup>4</sup> Б. Райзель. “Новый взгляд на историю. Процесс реституции в Норвегии. Введение”, ст. 18-27, <http://www.norway-live.ru/>.

կած չի կարող առաջանալ վնասների այս կամ այն տեսակը փոխհատուցման համալիրում ներառելու իմաստով:

Հայոց ցեղասպանության ժամանակ հայերի կրած ամենածանր կորուստը, բնականաբար, մարդկային կորուստներն էին, ուստի կանգ առնենք կորուստների այս տեսակի և դրա հաշվարկման մեթոդաբանության վրա: Որպես մեթոդաբանական հիմքի, կարծում ենք, անհրաժեշտ է հիմնվել Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ նախկին ԽՍՀՄ կորուստները հետազոտած գիտնականների մոտեցումների վրա՝ որպես տեսական ու գործնական, ինչպես նաև մարդկային կորուստների մասշտաբների առումներով ամենամեծ և ամենաբարձ հետազոտական բազայի:

Հարկ է նշել, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին նախկին ԽՍՀՄ-ի կրած ժողովրդագրական կորուստների շուրջ ուսումնասիրությունները փաստացի սկսվեցին 1980-ական թվականների վերջերին՝ գորբաշովյան վերակառուցման ժամանակաշրջանում: Այնչ այդ, Ի. Ստալինը հայտարարել էր այն մասին, որ պատերազմի ընթացքում ԽՍՀՄ-ը կորցրել է 7.0 մլն. մարդ: Ն. Խորոշովի կառավարման տարիներին այդ թիվն աճեց մինչև ավելի, քան 20.0 մլն. մարդու, և միայն 1988-1993 թվականներին զինվորական պատմաբանների խումբը (գեներալ գնդապետ Գ. Ֆ. Կրիվոշեևի զինավորությամբ) իրականացրեց արխիվային փաստարդերի համալիր և այլ նյութերի սոցիոլոգիական հետազոտություններ, որոնք տեղեկություններ էին պարունակում բանակի, նավատորմի, սահմանապահ և ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի գործերի մարդկային կորուստների մասին: Ընդ որում, այս ընթացքում օգտագործվեցին նաև վնասների որոշման նպատակով ստեղծված Գլխավոր շտաբի հանձնաժողովի (բանակի գեներալ Ա. Մ. Շտենենկոյի զինավորությամբ) և պաշտպանության նախարարության նմանատիպ հանձնա-

ժողովի (բանակի գեներալ Մ. Ա. Գարենի զինավորությամբ) աշխատանքի արդյունքները:

Այս հետազոտությունների արդյունքում հաշվարկված՝ Հայրենական մեծ պատերազմում մարդկային կորուստների ընդհանուր թիվը (մոտ 27.0 մլն. մարդ) առաջին անգամ հրապարակվեց 1990 թվականի մայիսի 8-ին՝ Հայրենական մեծ պատերազմում տարած հաղբանակի 45-ամյակին նվիրված նախկին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանդիսավոր նիստում: Հետազոտության արդյունքները հրապարակվեցին 1993 թվականին և քարգմանվեցին նաև անգլերեն լեզվով, իսկ 2001 թվականին այն վերահրատարակվեց «Ռուսաստանը և ԽՍՀՄ-ը XX դարի պատերազմներում: Զինված ուժերի կորուստները. վիճակագրական հետազոտություն» անվանումով:

Մարդկային կորուստների մասշտաբները որոշելու նպատակով Գ. Ֆ. Կրիվոշեևի հանձնաժողովն օգտագործեց տարբեր մեթոդներ, մասնավորապես՝ հաշվառման-վիճակագրական մեթոդը (այսինքն՝ մարդկանց հաշվառման վերաբերյալ առկա փաստարդերի վերլուծությունը և առաջին հերթին՝ ԽՍՀՄ զինված ուժերի անձնակազմի կորուստների վերաբերյալ հաղորդագրությունները), հաշվեկշռային կամ ժողովրդագրական հաշվեկշռի մեթոդը (այսինքն՝ պատերազմի սկզբի և վերջի դրությամբ ԽՍՀՄ բնակչության թվաքանակի և տարիքային կառուցվածքի համարումը) և այլն:

Այսպիսով, Գ. Ֆ. Կրիվոշեևի հանձնաժողովը, ժողովրդագրական հաշվեկշռի մեթոդի կիրառման արդյունքում, Հայրենական մեծ պատերազմում ԽՍՀՄ մարդկային ընդհանուր կորուստները գնահատեց 26.6 մլն. մարդ: Այս կորուստներում ներառվում էին հակառակորդի ռազմական և այլ գործողությունների հետևանքով բոլոր գոհվածները, պատերազմի ընթացքում օկուպացված տարածքներում և թիկունքում մահացածները՝ պայմանավորված մահացության բարձր մակար-

դակով, ինչպես նաև այն անձինք, որոնք պատերազմի տարիներին լցել էին ԽՍՀՄ-ը և չին վերադարձել դրա ավարտից հետո:

Քննարկելով Գ. Ֆ. Կրիվոշեևի հանձնաժողովի աշխատանքները, ամերիկացի ժողովրդագիրներ Ս. Մակուտյովը և Ս. Էլմանը եկան այն եզրակացության, որ այդ հանձնաժողովի կողմից տրված մարդկային կորուստների գնահատականը (26-27 մլն. մարդ), հարաբերական առումով բավականին վստահելի մեծություն է: Սակայն, միևնույն ժամանակ, նրանք մատնանշում էին կորուստների թերհաշվարկի այն հնարավորությունը, որը կապված էր պատերազմից անմիջապես առաջ և դրանից հետո ԽՍՀՄ-ին բռնակցված տարածքներում բնակչության ոչ ամբողջական հաշվառման, ինչպես նաև պատերազմի տարիներին էմիգրանտների հաշվին կորուստների թվի ուժացման փաստերի հետ: Բացի այդ, պաշտոնական հաշվարկների ընթացքում հաշվի չի առնվում նաև ծննդության մակարդակի անկման գործոնը, որի հաշվին, եթե պատերազմ չիներ, երկրի բնակչության թիվը 1945 թվականին ավելի մեծ պետք է լիներ, քան նշված կորուստների հաշվառմամբ ստացված բնակչության թիվը: Այսինքն, ամեն դեպքում, մարդկային կորուստների վերաբերյալ հրապարակված բոլոր գնահատականներն էլ անհրաժեշտ է ընդունել որպես հիպոթետիկ մեծություններ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նման դեպքերում բացարձակապես ճշգրիտ հաշվարկների իրականացումը գործնականում անհնարին է կատարել:

Օտարերկրացի մեկ այլ հետազոտող՝ Ս. Հայնեսի կարծիքով, Գ. Ֆ. Կրիվոշեևի հանձնաժողովի հաշվարկած կորուստների 26.6 մլն. թիվը ԽՍՀՄ մարդկային բոլոր կորուստները, ըստ նրա գնահատականների, կազմում է 42.7 մլն. մարդ, և այդ թիվը համապատասխանում է կորուստների

վերին շեմին: Ուստի, ուազմական կորուստների իրական թիվը, ըստ նրա, գտնվում է նշված երկու շեմների միջև ընկած միջակայրում: Սակայն, այս տեսակետի հետ չի համաձայնվում մեկ այլ հետազոտող՝ Մ. Հարրիսոնը, որը վիճակագրական հաշվարկների արդյունքում գալիս է այն եզրակացության, որ նույնիսկ հաշվի առնելով էմիգրացիայի և ծննդության մակարդակի անկման գործոնների արդյունքում առաջացող անորոշությունը, ԽՍՀՄ իրական կորուստները պետք է գնահատել 23.9-25.8 մլն. մարդ<sup>5</sup>:

Քննարկելով ներկայացված գնահատականների իսկությունն ու դրանց ճշգրտությունը, այստեղ անհրաժեշտ ենք համարում միայն նշել, որ՝

- ա) բոլոր հետազոտողների կողմից մարդկային կորուստների հաշվարկները կատարվում էին երեք՝ 1) ուղղակի հաշվարկի կամ հաշվառման, 2) համեմատական և 3) ժողովրդագրական հաշվեկշռի մեթոդներով,
- բ) նշված մեթոդների առանձին-առանձին կիրառումը շատ ավելի աղճատված պատկեր է ապահովում, քան այդ բոլոր մեթոդների գուգակցմամբ ստացված արդյունքները,
- գ) նմանատիպ հաշվարկներում միշտ էլ առկա է քաղաքական գործոնը (թեև դրա մասին ոչ չի ցանկանում նշել), քանի որ պատերազմում հաղթանակած կողմը ձգտում է հնարավորինս մեծացնել ուազմական գործողությունների արդյունքում կրած կորուստների մասշտաբները (ուստի սուցիայի, ուսպարացիայի և փոխհատուցման մյուս տեսակներով հակառակորդի համար հնարավորինս մեծ պարտավորություններ ձևավորելու նկատառումներով),

<sup>5</sup> Потери Советского Союза: История подсчёта и официального государственного признания потерь <http://www.encyclopaedia-russia.ru/article.php?id=282>, Л.Л. Рыбаковский, “Людские потери СССР в Великой отечественной войне”, “Историческая социология”, 2000г., ст. 108.

իսկ հակառակ կորմը (սեփական կամ դաշնակից երկրների ուժերով ու նրանց գիտնականների միջոցով) փորձում է հնարավորինս նվազեցնել պատճառված վնասների մեծությունները:

Բացի նշված մերողներից, որոշ հետազոտողներ կիրառում են նաև այլ մերողներ, մասնավորապես՝ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի սոցիալ-քաղաքական հետազոտությունների ինստիտուտի պրոֆեսոր, տ. գ. դ. Լեռնիդ Ռիբակովսկին, պատերազմի ընթացքում մարդկային կորուստների գնահատման նպատակով օգտագործում է հետևյալ մերողները:

**1. Կորուստների համամասնական բաշխման մեթոդ:** Այս մերողը ելնում է նրանից, որ երկիրի բոլոր մասերում կորուստները բաշխվում են միանման ինտենսիվությամբ, չնայած ԽՍՀՄ կորուստների գնահատման ժամանակ այս պայմանը բացակայում էր, քանի որ Հայրենական պատերազմի տարիներին նախկին ԽՍՀՄ ոչ բոլոր հանրապետությունները մասսամբ կամ ամրողությամբ ենթարկվեցին օկուպացիայի: Բացի այդ, օկուպացված տարածքներում քաղաքացիական բնակչության զրիերի և Գերմանիա աշխատանքի քշված բնակչություն (որոնց անկանում են նաև «օստարբայտերներ») վերաբերյալ տվյալներն էականորեն տարբերվում են՝ կապված տարածքը քշնամու վերահսկողության տակ գտնվելու ժամանակահատվածից, ուազմական գործողությունների ինտենսիվությունից և ներգրավված գորբերի մեծությունից, պարտիզանական շարժումների մասշտաբներից և, հետևաբար՝ պատմիչ գործողությունների դաժանությունից: Հետևաբար, օկուպացված տարածքների բնակչության քաղաքանակի տեսակարար կշռով, իսկ զինվորականների մասով՝ երկրի բնակչության մեջ միութենական հանրապետությունների տեսակարար կշռով կորուստների համամասնական բաշումը ճիշտ չէր լինի:

Այս մերողի կիրառման համար, բացի կորուստների ընդհանուր մեծությունից (ըստ զինվորականների և քաղաքացիական բնակչության), անհրաժեշտ է տվյալներ ունենալ նաև նախապատերազմյան և հետպատերազմյան տարիներին բնակչության քաղաքանակի վերաբերյալ: Այս տեղեկատվությունը թույլ է տալիս հաշվարկել բնակչության քաղաքանակի փոփոխության տեմպը՝ ըստ օկուպացված տարածքների առանձին շրջանների խմբերի:

**Հաշվարկների համար,** ըստ Լ. Ռիբակովսկու, օրինակ՝ Ռուսաստանի կորուստների մասով, կարելի է օգտագործել հետևյալ բանաձևը՝

$$\Omega\zeta = (\Sigma\zeta \times \Phi S_{\Omega} \times S\zeta_{\Omega}) / \Phi S_{\Omega},$$

որտեղ՝

$\Omega\zeta$ -ն՝ Ռուսաստանի քաղաքացիական բնակչության կորուստներն են,

$\Sigma\zeta$ -ն՝ ԽՍՀՄ քաղաքացիական բնակչության ընդհանուր կորուստներն են,

$\Phi S_{\Omega}$ -ն՝ օկուպացված բոլոր տարածքների բնակչության քաղաքանակի փոփոխության տեմպն է,

$S\zeta_{\Omega}$ -ն՝ օկուպացված տարածքներում Ռուսաստանի բնակչության տեսակարար կշռն է,

$\Phi S_{\Omega}$ -ն՝ օկուպացված ոուսական տարածքների բնակչության քաղաքանակի փոփոխության տեմպն է:

**2. Ուղղակի հաշվարկի կամ հաշվառման մեթոդ:** Այս մերողի կիրառումը բավականին սահմանափակվում է ամրողական և հավաստի տեղեկատվության բացակայության պատճառով, քանի որ զուտ տեսքով դրա կիրառման համար անհրաժեշտ է ունենալ ամրողական տեղեկատվություն զինվորականների և քաղաքացիական բնակչության կողմից տրված զրիերի վերաբերյալ, ինչը գործականում գրեթե անհնար էր

ունենալ Հայրենական մեծ պատերազմի տարիների համար: Ուստի, անհրաժեշտություն է առաջանում այս մերողը համակցել կորուստների համամասնական բաշխման մերողի հետ:

**3. Ժողովրդագրական հաշվեկշռի մերող:** Հենց այս մերողով էլ իհմնականում հաշվարկվել է Հայրենական մեծ պատերազմում նախկին ԽՍՀՄ մարդկային կորուստները, որի կիրառումը ենթադրում է պատերազմի սկզբի և վերջի դրույթամբ բնակչության քվարանակի, պատերազմի տարիներին ծնվածների, նույն ժամանակահատվածում բնական մահացության և միջանրապետական միգրացիայի սալդոյի վերաբերյալ համեմատարար հավաստի տվյալների առկայություն:

**4. Ենթողովովրդագրական մերող:** Այս մերողը մշակվել է հենց L. Ռիբակովսկու կողմից և օգտագործվել է Ռուսաստանին բաժին ընկնող օստարքայտերների քվարանակի հաշվարկման համար: Հարկ է նշել, որ օստարքայտերների և մարդկային կորուստների քվարանակների հաշվարկման մերողներն իրարից տարրերվում են նրանով, որ առաջին դեպքում օստարքայտերների ընդհանուր կազմում որոշվում է այն մարդկանց քվարանակը, որոնք կենդանի են մնացել պատերազմից հետո և հանդիսացել են Ռուսաստանի քաղաքացիներ, իսկ երկրորդ դեպքում՝ նախկին ԽՍՀՄ բնակչության կորուստները համամասնորեն բաշխվում են ըստ նախկին միութենական հանրապետությունների:

Տվյալ մերողի կիրառումը ենթադրում է մարդկային ընդհանուր կորուստների օգտագործումը որպես ելակետային մեծություն, շնայած այն հանգամանքին, որ այս դեպքում անհրաժեշտ է ունենալ քաղաքացիական բնակչության և զինվորականների կորուստների առանձնացված զնահատականները, ընդ որում՝ քաղաքացիական բնակչության կորուստները պետք է բաշխվեն ըստ միութենական հանրապետությունների:

Քյունների, իսկ զինվորականների կորուստները՝ ըստ հետխորհրդային պետությունների<sup>6</sup>:

Ընդհանուր առմամբ, եթենոժողովրդագրական մերողի էությունը կայանում է նրանում, որ առանձին մասերի համար մարդկային կորուստները որոշվում են ելնելով պետության հիմնական ազգությունների կորուստներից, ուստի, հասկանալի է, որ Հայոց ցեղասպանության առումով տվյալ մերողի օգտագործումը կիրառելի լինել չի կարող: Մյուս կողմից, վերը շարադրվածը թույլ է տալիս եզրակացնել, որ հայ ժողովրդի կրած մարդկային կորուստների հաշվարկման համար անհրաժեշտ է միջազգային մասշտարով հայտնի ժողովրդագիրներից ծևավորել հատուկ խումբ, որն էլ պետք է կիրառի նշված բոլոր մերողների հիմնավորված համակցությունը:

<sup>6</sup> Պայակովսկի Լ. “Великая отечественная: людские потери России”, Социс. 2001. № 6. ст. 85-95.

## ՀԱՅԵՐԻ ՈՒՆԵՐԿՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՅՈՅ ՄԵԾ ԵՂԵՌԻ ԴՐՂԱՊԱՏԽԱԾ

Հայտնի իրողություն է, որ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Օսմանյան կայսրության արտաքին և ներքին առևտրում, արդյունաբերական արտադրության մեջ և բանկային գործերում հայերն ազդեցիկ դիրք էին գրավում:

Հիմնվելով հայկական առյուրներից քաղած տեղեկությունների վրա՝ Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրողներից Զոն Կիրակոսյանը եզրակացնում է, որ երկրի համար տնտեսական կարևորություն ներկայացնող այնպիսի քաղաքներում, ինչպիսիք էին Տիգրանակերտը, Մարզվանը, Տրավիզոնը, Սամսոնը, հայերը կատարում էին առևտրական և արհեստավորական աշխատանքի ավելի քան 75 %-ը<sup>1</sup>:

Ըստ հայկական մեկ այլ աղբյուրի՝ մինչև 1915 թվականը Բուրսայում և Չրջակայքում գոյություն ուներ 50 մետաքսի արտադրություն, որոնցից 40-ը պատկանում էին հայերին<sup>2</sup>:

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուրար Փաշայի Ֆրանսիայի արտգործնախարարությանը ներկայացրած 1917 թվականի հունիս 12-ի հուշագրում նշվում էր, որ հայերն իրենց ծեռքում էին կենտրոնացրել Օսմանյան կայսրության ներմուծվող ապրանքների առևտրի 60 %-ը, արտահանվող ապրանքների առևտրի 40 %-ը և ներքին առևտրի ավելի քան 80 %-ը: Հայկական վեց նահանգներում (Կարին,

Վան, Բաղեշ, Տիգրանակերտ, Խարբերդ, Սերաստիա) հայերն իրենց ծեռքում էին պահում առևտրի, արդյունաբերության ճյուղերի և զանազան արհեստների 69-ից 86 %-ը: Նրանց դպրոցները, որոնք բոլորը գտնվում էին համայնքների կատարյալ հոգածության ներքո, երկրի դպրոցների ընդհանուր թվի ավելի քան 80 %-ն էին կազմում<sup>3</sup>:

Օսմանյան կայսրությունում հայերի տնտեսական գործունեության մասին հայկական աղբյուրների այս տեղեկությունները հաստատում են նաև օտար աղբյուրները:

Ըստ գերմանացի քաղաքագետ Պաուլ Ռոհրբախի հրատարակած տվյալների՝ Սերաստիայի նահանգի վաճառականների, դրամատերերի և արդյունաբերողների շուրջ 83 տոկոսը հայեր էին<sup>4</sup>:

Ամերիկացի միսիոններ Վիլիամ Ջեմփըրսը, հենվելով քուրքական պաշտոնական տվյալներին, գրում էր, որ Աղանայի նահանգի տնտեսության 2/3-ը գտնվում էր հայերի ծեռքում<sup>5</sup>:

Ըստ քուրքական աղբյուրի՝ Էսքիջիկիրի բնակչության գլխավոր գրաղմունքը ծովային հանքաքարի՝ Փրփրաքարի (սեպոլիտ) մշակումն ու արտահանումն էր, որի մեջ հայերը մեծ տեղ էին գրավում: 1914 թվականին այստեղ գործող վեց արտադրություններից չորսը պատկանում էին հայերին: Այդ փրփրաքարից ծխամործ պատրաստող և արտահանող միակ գործարանը պատկանում էր Թովմաս Չուքույանին: Նույն

<sup>3</sup> Արքուր Պեյլերյան, Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում, հ. Ա., (1914-1918), Երևան, 2005, էջ 478-479:

<sup>4</sup> Dr. J. Greenfield, Die wirtschaftliche Bedeutung Armeniens und der Armenier-Beiträge zur armenischen Landes- und Volkskunde. Herausgegeben auf Veranlassung der Deutsch-armenischen Gesellschaft von Paul Rohrbach. Verlag von J. Engelhorns Nachf. in Stuttgart, 1919. s. 100.

<sup>5</sup> Uğur Ümit Üngör and Mehmet Polatlı, Confiscation and Distraction, Continuum International Publishing Group, London, 2011, p. 121.

<sup>1</sup> Զոն Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1967, էջ 88:

<sup>2</sup> Կացուրինը Պրուսայի մեջ, Կոչմակ Հայաստանի, Նիւ Եռոք, 1920, 16 հոկտեմբերի:

այդ առյուրի հավաստմամբ՝ Սամսունում ծխախոտի մշակման ու արտահանման ողջ գործը գտնվում էր հայերի ձեռքում<sup>6</sup>:

1912 թվականին հրատարակված «Թուրքական տարեգրում» գետեղված Անկարայի նահանգի առևտրականների, դրամատերերի, միջնորդ վաճառականների, ձեռնարկատերերի և որակյալ մասնագետների անվանացանկերում ազատ մասնագիտությունների ներկայացուցիչներից ավելի քան 61 %-ը հայեր էին: Դրամատերերի և խոշոր միջնորդ վաճառականների մեջ հայերը 75 %-ից ավելին էին: Խոշոր ձեռնարկատերից ավելի քան 71 %-ը և քաղաքներում առևտրական տներ և խոշոր խանութներ ունեցող վաճառականների շուրջ 60 %-ը հայեր էին<sup>7</sup>:

Ըստ բուրք հետազոտող Ալի Քոչումի՝ Այնքայի առևտուրն ամբողջությամբ կենտրոնացած էր հայերի ձեռքում<sup>8</sup>:

Թուրք պատմաբան Նելիմ Քարայելի հավաստմամբ, 1915 թվականին Օսմանյան կայսրությունում տնտեսության ոլորտում վիճակագրություն է անցկացվել: Պարզվել է, որ Կ.Պոլսի, Էգեյան, Սևծովյան և Սիրեկրուական տարածաշրջաններում գործարարների, արհեստավորների 95-96 %-ը հայեր և հույններ էին<sup>9</sup>:

1908 թվականին, «Հյուրիերի» (Օսմանյան սահմանադրություն) վերահոչակումից շատ շանգած, երիտրուրքական իշխանություններին պարզ դարձավ, որ սահմանադրության թերի և անկատար կիրարկումից անգամ օգտվողները ոչ բուրք տարրերն էին, ովքեր գրեթե ամբողջապես տիրացել

էին երկրի տնտեսությանը՝ անասնապահությունն ու պաշտոնությունը քողմներով քուրքերին<sup>10</sup>:

Սահմանադրության վերահոչակումից հետո զգալիորեն բարձրացել էր հայերի քաղաքական կշիռը զավաներում, հատկապես՝ կայսրության մայրաքաղաքում: Օսմանյան պետության արտաքին գործոց և մի քանի նախարարներ հայեր էին: Քրիստոնյաներին զինվորագրելու հետևանքով հայ տարրը դիրքեր էր գրավել նաև բուրքական բանակում: Հայերը սկսել էին անմիջական մասնակցություն ունենալ նաև երկրի հասարակական կյանքում: Լեզուների, ելորդական մշակույթի, իրավաբանության, հոեսորական արվեստի իմացությամբ օսմանյան խորհրդարանի հայ երեսփոխանները առաջացնում էին բուրքերի նախանձն ու վախը: Նաև բոլոր այլազգիների նախանձն էր գրգռում հայոց ազգային կրթական համակարգը<sup>11</sup>:

Հայտնի է, որ արևմտահայ առևտրական բուրժուազիան, դրամատերերն ու արդյունաբերողները, շնորհիվ իրենց տաղանդի ու ձեռներեցության, նույնիսկ օսմանյան բոնատիրության ու կամայականությունների պայմաններում, կարողացել էին տեր դառնալ որոշակի հարստության, ստեղծել դրամական զգալի կուտակումներ<sup>12</sup>:

Հայերի ունեցվածքով հարստացած բուրք մեծահարուստ Վահրի Քոչն իր հուշերում գրել է. «Անկարայի ամբողջ առևտուրը հայերի, հույների, հրեաների ձեռքում էր... Ամենագեղեցիկ տները, լավ խանութները, ամառանոցները պատկանում էին ոչ մահմեդականներին... Քրիստոնյաներն ու հրեա-

<sup>6</sup> Osman Köker, 100 Yıl Önce Türkiye'de Ermeniler, İstanbul, 2005, s. 57, 215.

<sup>7</sup> Оганес Ихджикян, Буржазия Османской империи, Ереван, 1977, с. 167.

<sup>8</sup> 98 տարի առաջ հայերը կազմում էին Այնքայի կեսը, <http://akunq.net/am/?p=33305>.

<sup>9</sup> Նելիմ Քարայել, Թուրքիայի ժամանակակից կապիտալի արյուրը հայկական և հունական գույքն է, <http://civilnet.am/2014/12/18/jiyan-modern-turkey-capital-belongs-armenian-greek-6-september/#.VSJ0oJOppqU>.

<sup>10</sup> Լեւոն Չորմիսեան, Ապրիլեան Եղեռնի պատճառներու և պատախանատուններու մասին, Գեղասմ Սփառմեան, Յուշամատեան Սեծ Եղեռնի 1915-1965, Պեյքուր, 1965, էջ 162:

<sup>11</sup> Հրաշիկ Սիմոնյան, Թուրք ազգային բուրժուազիայի զաղավարաբանության բաղադրականությունը, Երևան, 1986, էջ 288:

<sup>12</sup> Ռուբեն Մահմադյան, Յեղասպանության պատմությունից, Երևան, 1990, էջ 367:

ները՝ գեղեցիկ հազուստներ հազած, ընտանիքներով լցվում էին Անկարայի գլխավոր փողոցները... Ես հետաքրքրվեցի, թե մահմեդականներից ո՞վ է ամենահարուստը ու պարզեցի, որ Բուլգորլար, Քըննաջը, Արքար ընտանիքների ունեցվածքը կազմում է մի քանի հազար լիրա, ինչը երեք անգամ քիչ էր հարուստ քրիստոնյաների ունեցվածքից»<sup>13</sup>:

Գրիգոր Զոհրապը 1913 թվականին արդեն կանխատեսում էր երիտրուրական իշխանությունների հետագա քայլերը. «Բայց ոչ Կառավարութեան օժանդակութիւնը, ոչ դատարաններուն աշառկոտութիւնը կրնային ապահովել իսլամներուն կեանքի մակարդակ մը որուն յաջողած էին քրիստոնեաները անդուլ աշխատանքով: Պէտք էր դիմել ուրեմն զանգուածային ջարդերուն՝ դանդաղացնելու համար քրիստոնեայ տարրին գործունեութիւնը, նոյնիսկ ստիպել լրելու երկիրը, որպէսզի անոնց ինչը մնայ բուրքին: Թրքական Հայաստանի մէջ ստեղծուած հողային հարցը ատկէ է որ կ'առաջանայ: Թուրքիոյ մէջ կատարուող ջարդերը, որպէս պատահական աղէտներ չեն ներկայանար ուրեմն, այլ որպէս տնտեսական երեւյթներ, որոնք միայն հաշտ աչքով կրնան դիտուիլ թուրք Կառավարութեան կողմէ»<sup>14</sup>:

Ըստ Զոն Կիրակոսյանի և օտարերկրյա այլ պատմաբանների ու քաղաքագետների, ի սկզբանե ազգայնական երիտրուրքերը ավելի մոլեուանդ դարձան, ոչ միայն արտաքին դրդապատճառների, այլ նախ և առաջ ներքին տնտեսական այն մրցակցության հետևանքով, որ թուրքերը տանու էին տվել<sup>15</sup>:

Հայերի տնտեսական հզորացման մեջ մեծ վտանգ տեսնով՝ երիտրուրքերն իրենց զաղտնի ժողովներում քննում էին հայերի վերացումով նրանց տնտեսական մրցակցությունից ազատվելու և երկրում բուրքերի տնտեսական իշխանությունը հաստատելու հարցերը: Բարենորոգումների համար հայերի պայքարը երիտրուրական կուսակցության պարագուխներից մեկի՝ դոկտոր Նազիմի կարծիքով, դառնալու էր հայոց անկախության սկզբնավորումը: Խսկ արևելյան նահանգների վրա հայկական պետության կազմավորումը նա համարում էր թուրանական ծրագրի տապանաքարը: Դրա վկայությունը, ըստ Նազիմի, այն էր, որ 1908 թվականի Սահմանադրության վերահշակումից հետո հայերը բռնել էին ազգային, մշակութային և տնտեսական անօրինակ վերելքի ճամփան: Հայոց պետության կազմավորմամբ թուրքերը ոչ միայն հրաժարվելու էին թուրք ցեղերի միավորման զաղակարից, այլև թուրքական պետությունը սահմանափակվելու էր Կոնիայի սեղուկ սուլթանների ներ հողատարածների վրա: Մրա մեջ Նազիմը տեսնում էր թրության մահացման սկիզբը: Նա գտնում էր նաև, որ հայերի վերացումով, Հայկական հարցին վերջ դնելուց զատ, թուրքերը կազատվեն նրանց տնտեսական մրցակցությունից և գործունեության լայն ասպարեզ կստանան, իսկ հայերի հարստությանը տեր կդառնան օսմանյան պետությունն ու թուրքերը<sup>16</sup>:

Երիտրուրքերի մեկ այլ պարագուի Զավիդ թէյլ հայտարարում էր. «Տնտեսական իշխանութիւնը հայու ձեռքն է, հայերէն ոչ որի մնալու պայմանաւ բնաջնջումը մեր ազգային քաղաքականութեան տեսակետին որչափ որ ստիպողական

<sup>13</sup> Ավելանոր Սարաֆեան, Զիյա Գյորգալի և «Թյուրքականութեան հիմունքները», Երևան, 2012, էջ 233:

<sup>14</sup> Գրիգոր Զոհրապ, Հայկական հարցը փաստարութերու լոյսին տակ, Երկերի ժողովածու, հ. Գ., Երևան, 2002, էջ 531-532:

<sup>15</sup> Զոն Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 91:

<sup>16</sup> Մելլան Զադէ Ռիֆատ, Օսմանեան յեղափոխութիւնը և մուր ծալքերը, Պէյրութ, 1938, էջ 160, 165-166, 186-187, 191-196, 347:

պետք մըն է, նոյնափ ալ քուրքին տնտեսական իշխանութիւնը հիմնելու համար կարեւոր է»<sup>17</sup>:

Հայերի նկատմամբ քուրքերի վախր և ատելությունը շեշտվեց 1912-1913 թվականների Բալկանյան պատերազմում կայսրության պարտությունից և Հայկական բարենորդումների հարցի բարձրացումից հետո: Օսմանյան իշխանությունները կտրականապես դեմ էին Արևմտյան Հայաստանում բարենորդումների անցկացմանը: Աստիճանաբար քուրք իշխանությունների մոտ ուժեղանում էր այն մտայնությունը, որ վաղ քեզ ուշ երեկվա հպատակ հայր տիրանալու է քաղաքական իշխանությանը, ինչպես դա արել է տնտեսության ասպարեզում<sup>18</sup>: Հատկանշական է Խարբերդի կուսակալի խոսքը, որն ասվել է 1915 թվականի մարտի 16-ին Գերմանիայի «Կարմիր խաչի» աշխատակից D. A.-ին. «Հայերը Թուրքիո մեջ պետք է բնաջնջվեն, քանի որ նրանք այնքան են զարգացել և հարստացել, որ սպառնալիք են դարձել տիրող տարրի համար»<sup>19</sup>:

Գերմանացի լրագրող, գրող Հարրի Շրյումերը, ով 1915-1916 թվականներին “Koelnische Zeitung” թրավակիցն է եղել Կ.Պոլսում և դարձել Հայոց ցեղասպանության ականատեսը, գտնում էր հետևյալը. «Կը յայտարարեմ ուրեմն քեզ այս վայրագ միջոցներու ծաւալումը եղաւ ցեղային մոլեռանդութեան գործը, ամէնէն անարգ, ամէնէն շնական եւ ամէնէն ոճրային, զոր արձանագրած ըլլայ երբեք մարդկային պատմութիւնը, քեզ այս գործը տեղի ունեցաւ միմիայն անոր համար որ Թուրքերը կզգային իրենց չափազանց ստորութիւնը տնտեսական եւ քաղաքական տեսակետով, այս ոչ քուրք տարրի հանդէպ

<sup>17</sup> Սեփական Զայէ Ռիֆատ, նշվ. աշխ., էջ 166:

<sup>18</sup> Լեռն Վարդամ, Հայկական տասմինդը եւ հայերու լրեալ գոյքերը, Պէյրուր, 1970, էջ 56:

<sup>19</sup> Մանուկ Գ. Շիզմէնեան, Խարբերդ եւ իր զաւակները, Ֆրէզնոյ, 1955, էջ 567:

եւ կուգէին հաւասարութիւն հաստատել ուժի միջոցաւ ի նպաստ իրենց, քեզ այս գործը կատարեցաւ վերջապէս գերման կառավարութեան վատ համաձայնութեամբ, իրողութիւններու կատարեալ ճանաչումով»<sup>20</sup>:

Ըստ քուրք պատմաբան Նևաք Օնարանի՝ 1910 թվականի կեսերից երիտրուրքական իշխանությունները սկսեցին իրականացնել Փոքր Ասիայի թրացման քաղաքականությունը, որի տնտեսական քաղաքականությունն իրականացվեց հայերի և հույնների ունեցվածքի յուրացմամբ<sup>21</sup>:

Թուրք պատմաբան Ումիթ Քուրքը, ով Թանիք Աքչամի հետ համահեղինակն է Ստամբուլում 2012 թվականին իրատարակված «Օրենքների ոգին. հետևել Ցեղասպանության հետքին «Լըյալ գույքերի» մասին օրենքներում» գրքի, գտնում է, որ հայերի ունեցրկումը Հայոց ցեղասպանության իրագործման իմմանական շարժառիթներից մեկն է հանդիսացել. «Եթե ցանկանում եք հասկանալ Ցեղասպանության իրագործման դրդապատճառները, անհրաժեշտ է շնորանալ ոչ մահմեդականների՝ մասնավորապես հայերին պատկանող սեփականության դեմ ուղղված շարժառիթը: Սա, բնականաբար, տնտեսության և քուրք-մահմեդական բուրժուազիայի դասակարգ ստեղծելու շրջան է: Այսինքն, խոսում ենք ազգային պետություն և ազգային բուրժուազիա ստեղծելու գործընթացի մասին»<sup>22</sup>:

Այն, որ երիտրուրքական իշխանությունները նպատակ ունեին հայկական ունեցվածքի հաշվին ստեղծել ազգային

<sup>20</sup> Հարրի Շրյումեր, Պատերազմի երկու տարիներ Պոլսի մեջ, Ժողովուրդի ճայնը, Կ.Պոլս, 1919, 14-27 հունվարի:

<sup>21</sup> Նևաք Օգյում, Թուրք ազգայնականության «արյունոտ» տնտեսական քաղաքականությունը (Նևաք Օնարանի “Emval-i metruke olayı, Osmanlı’da ve Cumhuriyette Ermeni ve Rum Mallarının Türkleştirilmesi” գրքի մասին գրախոսական), <http://akunq.net/am/?p=3874>.

<sup>22</sup> Հայերի սեփականութեան խիլլը եղել է Հայոց Ցեղասպանութեան իմմանական շարժառիթը, <http://alikononline.ir/hy/news/item/>.

բորժուազիա, հավաստում է նաև մեկ այլ բորք պատմաբան Ալի Սահի Չերինօղլուն. «Ակնհայտ է, որ 1915 թվականի ցեղասպանությունից մինչև այսօր հայերի ունեցվածքը այն ժամանակվա կառավարող կուսակցությունը բաժանել է տեղական իշխանություններին, վարչություններին, առևտրի պալատներից մինչև մասնավոր հատված՝ այն ծառայցնելով մահմեդական կապիտալի ստեղծման նպատակներին»<sup>23</sup>:

Հայերի ունեցրկման ծրագիրը կյանքի կոչվեց Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում<sup>24</sup>: Պատերազմը երիտրուրքական իշխանություններին Փոքր Ասիան ոչ մահմեդական տարրերից մաքրելու և, հատկապես, արևելյան նահանգներում մեծամասնություն կազմող հայրերից ձերբագատվելու և օսմանյան տնտեսությունը քրքացնելու առիթը տվեց<sup>25</sup>:

Մի ամրող ժողովուրդ կողոպտելու համար նախ և առաջ հարկ էր հայերի ունեցվածքը դարձնել տիրազուրկ<sup>26</sup>: Այդ նպատակով երիտրուրքական իշխանությունները 1915 թվականի հունիսի 1-ին հրապարակեցին «Պատերազմի ժամանակ կառավարության գործունեության դեմ դրւու եկողների համար ռազմական տեսանկյունից ձեռք առնվելիք միջոցառումների մասին ժամանակավոր օրենքը» կամ, ինչպես ընդունված է ասել, «Տեղահանության մասին» օրենքը, որն ընդունվել էր երիտրուր-

քական կառավարության կողմից 1915 թվականի մայիսի 30-ին<sup>27</sup>: Օսմանյան իշխանությունները ընդունեցին մի օրենք, որի նպատակն էր «օրինական» քող ստեղծել հայ ժողովուրդի կանխամտածված զանգվածային ոչնչացման՝ ցեղասպանության համար»<sup>28</sup>:

«Տեղահանության մասին» օրենքը զինվորական իրամանատարությանը բույլատրում էր զյուղերի և քաղաքների բնակչությանը անհատապես կամ հավաքականորեն տեղահանել և բնակեցնել այլ վայրերում: Այդ օրենքի գործադրմամբ հայ բնակչությունը բռնի տեղահանվեց Արևմտյան Հայատանից, Կիլիկիայից և Օսմանյան կայսրության այլ վայրերից դեպի արաբական անապատներ: Տեղահանության ընթացքում հարյուր հազարավոր հայեր սպանվեցին քուրք զինվորների, ոստիկանների, քրդական ավազակախմբերի կողմից: Մյուսները մահացան սովից և համաճարակային հիվանդություններից: Հազարավոր կանայք և երեխաներ ենթարկվեցին բռնության: Տասնյակ հազարավոր մարդիկ բռնի մահմեդականացան: Այս կերպ երիտրուրքական կառավարությունը տեղահան արեց և ոչնչացրեց ավելի քան 1.500.000 մարդ<sup>29</sup>:

«Տեղահանության մասին» օրենքի հրապարակումից հետո, 1915 թվականի հունիսի 10-ին հրապարակվեց «Պատերազմական և քաղաքական արտակարգ պայմանների անհրաժեշտության բերումով տարագրված հայերին պատկանող անշարժ և շարժական լրյալ գույքերի, վարչական կարգադրությունների մասին» հրահանգները (թալիմարնամեն), որոնք

<sup>23</sup> Ս. Չերինօղլու, Մի էջ Թուրքիայի մահմեդական (քուրք, քուրդ և այլն) բորժուազիայի մուր պատմությունից. Յեղասպանության ժամանակ Մալարիայի օրինակը, Հայեկական բանակ, Երևան, 2015, էջ 202:

<sup>24</sup> Ներիմ Քարայելի, Թուրքիայի ժամանակակից կապիտալի աղբյուրը հայեկական և հոմանակ զույքն է, <http://civilnet.am/2014/12/18/jiyan-modern-turkey-capital-belongs-armenian-greek-6-september/#.VSJ0oJOppqU>.

<sup>25</sup> Արմեն Քիրքնեան, Թուրքերուն՝ Թուրքիան քրքացնելու քաղաքականությունը, <http://akunq.net/arm/?p=15644>

<sup>26</sup> Յորի Քարսեղով, Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը, Երևան, 1999, էջ 5:

<sup>27</sup> Ուուրեն Ա. Սաֆրաստյան, Հայոց ցեղասպանության պիտական ծրագիրը: Թուրքական երեք փաստարդերի համեմատական վերլուծություն, «Վեմ», Երևան, 2009, Ա., էջ 54-55:

<sup>28</sup> Ուուրեն Ա. Սաֆրաստյան, նշվ. աշխ., էջ 51-52:

<sup>29</sup> Ի՞նչ է Հայոց ցեղասպանությունը, <http://www.president.am/library/armenia/arm/?armenia=3>.

բաղկացած էին 34 հոդվածից<sup>30</sup>: Այն ցուցումներ էր բովանդակում «պատերազմի և քաղաքական արտակարգ պայմանների հետևանքով տեղահանված հայերի բողած շարժական և անշարժ գույքի» հետ վարվելու մասին<sup>31</sup>: Իսկ 1915 թվականի սեպտեմբերի 13-ին Երիտրուրքական իշխանությունները հրատարակեցին «Լուծարման» կամ «Լքյալ գույքերի մասին», որենքը, որն իր 11 հոդվածներով գալու էր իրավական իիմք ստեղծելու մինչ այդ տեղահանված հայերի ունեցվածքի՝ հրամաններով և իրահանգներով կատարված կողոպուտի գործողություններին: Այսպես, հայերի գույքերի կողոպուտից, վաճառքից և բաժանումից հետո միայն նախարարական հեռագրերով քաղաքներին իրահանգվում էր կատարել գույքերի ցուցակագրումն ու կազմակերպել լրանց ապահովությունը<sup>32</sup>:

Երիտրուրքական իշխանությունները 1915 թվականի հոկտեմբերի 26-ին ընդունեցին «Այլ վայրեր տեղափոխված անհատների լրյալ գույքերին և պարտքերին վերաբերող կանոնադրությունը՝ 1915 թվականի սեպտեմբերի 13-ին ընդունված «Լքյալ գույքերի մասին» ժամանակավոր օրենքի գործադրության համար, որը բաղկացած էր 25 հոդվածից<sup>33</sup>:

«Լքյալ գույքերի մասին» օրենքի և կանոնադրության ամենակարևոր նպատակներից էր զսպել զանգվածային կողոպուտը և լցնել պետական զանձանակը, պետական պաշտոնյաների ու գործակալների միջոցով ցուցակագրել և վերջնականապես յուրացնել հայերին պատկանող բոլոր հողերը,

<sup>30</sup> Հայկազն Գ. Ղազարեան, Հայոց լրեալ գոյքերու և կալուածքներու թալանը բուրքերու կողմէ, «Հայրենիք», Պոսքը, 1964, թիվ 6-7:

<sup>31</sup> Յուրի Բարսեղով, նշվ. աշխ., էջ 5:

<sup>32</sup> Nevzat Onaran, EMVAL-İ METRUKE OLAYI, Osmanlı'da ve Cumhuriyette Ermeni ve Rum Mallarının Türkleştirilmesi, İstanbul, 2010, s. 48.

<sup>33</sup> Ավետիս Փափազյան, Թուրքական վավերագրական նյութեր Օսմանյան կայսրության ոչ-մահմեդական ժողովուրդների մասին (1839-1915 թթ.), Երևան, 2002, էջ 214-222:

շենքերը, արտերը, դպրոցները, վարժարանները, եկեղեցիներն ու վանքերը<sup>34</sup>:

1915 թվականի սեպտեմբերի 26-ի «Լքյալ գույքերի մասին» օրենքի 8-րդ հոդվածի համաձայն և 1915 թվականի հոկտեմբերի 26-ին իշխանությունների կողմից ընդունված կանոնադրությամբ ստեղծվեցին Լքյալ գույքերի հանձնաժողովներ, որոնք և կազմակերպեցին ու իրականացրին հայերի շարժական և անշարժ ունեցվածքի կողոպուտն ու յուրացումը<sup>35</sup>:

Դոկտոր Յոհաննես Լեփսիոսը գտնում էր, որ տարագիրների ունեցվածքը հաշվառելու համար կառավարության կողմից կազմված հանձնաժողովներն ու հանձնախմբերը այլ նպատակ չունեին, բացի հայ ժողովրդի ունեղբկումը դատական ձևակերպության բափանցիկ քողի տակ ծածկելուց<sup>36</sup>:

Պատերազմի ընթացքում Արևմտյան Հայաստանում ոչնչացվել են 2900 հայկական բնակավայրեր՝ քաղաքներ, գյուղեր, բաղամասեր, իսկ դրանց բնակչությունը տեղահանվել է կամ ոչնչացվել, իսկ նրանց ունեցվածքը կողոպտվել<sup>37</sup>:

Պատմական անհերքելի ճշմարտություն է, որ Օսմանյան կայսրությունում հայկական կոտորածների և 1915 թվականի Սեծ եղենի կազմակերպման և իրականացման մեջ պետական քաղաքականության, կրոնական ատելության կողքին ամենամեծ ազդակներից մեկը հայերի հարստությանը տիրանալու թուրքերի ցանկությունն էր<sup>38</sup>:

Հայ և օտար շատ պատմաբաններ և քաղաքագետներ հայասպանության առաջնային նպատակը համարում են

<sup>34</sup> Ավետիս Փափազյան, նշվ. աշխ., էջ 236:

<sup>35</sup> Ayshe Hur, Ermeni mallarını kimler alır, Taraf, İstanbul, 2008, 02, 03, <http://www.taraf.com.tr>.

<sup>36</sup> Յոհաննես Լեփսիոս, Գաղտնի տեղեկագիր: Հայ ժողովրդի զարդերը, Երևան, 2003, էջ 169:

<sup>37</sup> Uğur Üngör and Mehmet Polatel, Confiscation..., p. 155.

<sup>38</sup> Վահագն Տատրյան, Ակնարկներ Հայկական ցեղասպանութեան մասին, Երևան, 2004, էջ 11:

հայերի հարստությանը տիրանալու քուրքերի ձգտումը: Հայկական ցանկացած կոտորածի շարժառիթներին անդրադառնալիս նրանք մեծ նշանակություն են տվել քուրքերի մոտ արմատացած՝ քրիստոնյաների ունեցվածքի բալանի անհագուրդ կրքին և կարևորել տնտեսական ոլորտում հայերի նշանակալից ձեռքբերումները, որոնք, առաջ բերելով քուրքերի նախանձը, վերջիններիս դրդել են ոչնչացնել հայերին՝ նրանց ունեցվածքը հափշտակելու ակնկալությամբ: Այս առնչությամբ իշխատակության է արժանի քուրքական «Ալեմդար» թերթի խմբագիր Ռեֆի Զեադ Ռումնայ թեյի կարծիքը, որ նա հայտնել է Լոզանի խորհրդաժողովի հայ պատվիրակներին. «Ի՞ն հաճողումն այն է, որ քուրքերի՝ հայերի դեմ թշնամության հիմքը ոչ քաղաքական է, ոչ էլ կրոնական, այլ պարզապես տնտեսական: Թուրքիո այսօրվա և նախկին դեկավարները քուրք ժողովրդին ներշնչել են քրիստոնյաների ունեցվածքին տիրանալու տեսչը: 1915 թվականին ես անցա ամբողջ Անատոլիայով և չտեսա քուրքական մեկ տուն, որտեղ չգտնվեին հայերի կարասիներ, գորգեր կամ որիշ իրեղեններ: Վաղը եթե առիր գտնեն, քուրքերը նույնը պետք է անեն անպատճառ»<sup>39</sup>:

Արդար վաստակով կարճ ժամանակում հայերի ձեռք բերած տնտեսական աճն առաջ էր բերել մահմեդականների դժգոհությունը: Թուրքերը և քրդերը չեին կարողանում հանդուրժել, որ իրենց ենթակա մի ազգ, քրիստոնյա դրացին, քարգավաճում է, ունի լավ ընտանիք, հանգստավետ տներ, շեն այզիներ և ազգարակներ, լիառատ խանութներ, իսկ իրենք շարունակում են մնալ թշվառ վիճակում: Թուրքերը և քրդերը միշտ արթուն էին և սպասում էին հայի ունեցվածքին տեր դառնալու երանելի օրվան՝<sup>40</sup>: Հայտնի է, որ Կեսարիո հայերի

սպանդը եղել է առավել դաժան: Այդ իրողության պատճառը, ըստ պատմաբան Արշակ Ալպոյանի, եղել է հայերի քացարածական գերազանցությունը հարևան քուրքերի նկատմամբ: Նրանց քարեկեցիկ կյանքը առավել գրգռել է քուրքերի նախանձը<sup>41</sup>:

“The Living AGE” ամերիկյան պարբերականը 1916 թվականի փետրվարի 5-ին իր «Հայաստանի մահը» հոդվածում հայկական կոտորածներին անդրադառնալիս գրում է. «Պատճառներից մեկը ազգային նախանձն է: Թուրքերն իրականում օտարական են իրենց կողմից կառավարվող երկրում: Նրանք բոնի ուժով են նվաճել այժմյան իրենց տարածքները: Զնայած ճնշմանը, հայերն իրենց խելքով և այլ հատկանիշներով կարողացել են ցանկացած բնագավառում առաջնոր լինել»<sup>42</sup>:

Ամերիկյան “The Saturday Evening Post” պարբերականի 1916 թվականի փետրվարի 5-ի համարում հրապարակված՝ Ֆրաքլին Իգանի «Ճակատամարտի ծխից այն կողմ կամ ինչպես է Թուրքիան «ցիրուցան անում մի ողջ ժողովուրդ» հոդվածում ասվում է հետևյալը. «Հայերի ապստամբության նկատմամբ վախը չէր, որ շարժման մեջ դրեց երիտրուրքերին, այլ հայերի նկատմամբ նախանձն էր, ընչաքաղ ու մոլեռանդ ուսայական ատելությունը՝ նստած քուրքի մեջ, որը հավատացած է, թե իր իրավունքն է մորքել, կոտորել այդ մարդկանց: Մի փոքր ապստամբությունը սահմանից հեռու ցանկալի առիթ էր իրագործելու իրենց մշակված ծրագիրը, մանավանդ քուրքը գրադարձ էին պատերազմով»<sup>43</sup>:

Ուրֆայում գերմանական միսիայի ներկայացուցիչ Բրուն Էքարտը, որ Սեծ եղենի ականատեսն ու վկան էր, իր «Ապրած

<sup>39</sup> Մանուկ Գ. Թիգմենեան, Խարբերդ և իր զաւակները, Ֆրեզն, 1955, էջ 567:

<sup>40</sup> Հրաշիկ Սիմոնյան, Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում, (1909թ. ապրիլ), Երևան, 2009, էջ 35:

<sup>41</sup> Արշակ Ալպոյանեան, Պատմություն Կեսարիո Հայոց, հ. Բ., Գահիրտ, 1937, էջ 1440-1441:

<sup>42</sup> Հայերի ցեղասպանության պատմությունից, Երևան, 1991, էջ 38:

<sup>43</sup> Նույն տեղում, էջ 36:

օրերս Ուրֆայում» գրքում ներկայացնում է 1915 թվականին Օսմանյան կայսրությունում, Հյուսիսարևմտյան Սիջազետքի դարավոր Եղեսիայի (Ուրֆայի) գաղթօջախի՝ եղեսահայության հերոսական ինքնապաշտպանության, նրան նախորդող և հաջորդող ոռբերգական եղելությունների մանրամասները. «Եթի շրջում ես քաղաքի հայկական քաղամասում և տեսնում ավերակները, մինչև մերկ պատերը կողոպտված բնակարանները, չես կարողանում զսպել այն տխուր միտքը, որ հայ ժողովուրդը, մոտ 2000 հոգի բուրքական ընչարադցության զի է դարձել»<sup>44</sup>: Իր այս գրքի մեկ այլ հատվածում Բրուն Էքարտը գրում է. «Անցնելով Ռաս-ուլ-Այնում ապրող չեքեզների խրճիթները՝ իմ աշքով եմ տեսել, լցված էին հայերի ունեցվածքով: Ինչպես ամենուրեք բուրքական կայսրությունում, այստեղ նույնպես, հայերը բուրքական անսահման ընչարադցության զի դարձան»<sup>45</sup>:

Իրապես, մահմեդականների կողմից հպատակ քրիստոնյա ժողովուրդներին կողոպտելը միանգամայն բնորոշ էր օսմանյան հասարակությանն առհասարակ և նպաստել է կոտորածների սանձազերծմանը: Հայերի հարստությանը տիրանալու բուրքերի ձգտումը բուրքական լայն զանգվածների մոտ ուժեղացավ մանավանդ 1914 թվականի հոկտեմբերից հետո, երբ Օսմանյան կասրությունը ներքաշվեց Առաջին համաշխարհային պատերազմի մեջ: Թուրք թշվար բազմություններն իրենց առօրյա տագնապներից ազատվելու դյուրին միջոց էին տեսնում տեղահանված հայերի լքած տներին, կարասիներին, սննդամբերին և բազմատեսակ հարստություններին տիրանալու հնարավորության մեջ:

Հալեպի Գաղթականաց տեսչության նախկին գլխավոր քարտուղար Նայիմ բեյը վկայում է. «Պատերազմը հազի

սկսած՝ արդէն անգօր եղող Թուրքիոյ մէջ ծայր տուին անօրութիւնն ու թշուառութիւնը: Այդ թշուառները խարեւ, կշտացնել պէտք էր, եւ ասիկա ալ՝ հայերուն քողոնուելիք դրամը կարող էր իրականացնել: Էրզրումի, Պիթլիսի, Տիարբերիքի, Մամուրեթ իլ Ազիզի, Սվազի նահանգներուն մէջ՝ հայոց ջարդն ու ինչքերուն կողոպուտը սկսաւ: Այս գրադումը ժողովուրդին ամէն բան մոռացնել կու տար: Սուրիան եւ Սիջազետքի դաշտը, ճամբանները, Սուրիոյ անապատները հայերով լեցուեցան: Դարերու ընթացքին պատուարեր ջանքերով շահած հայոց ահազին հարստութիւնը իր ամբողջ շրեղութեամբ և մեծութեամբ կորսուած էր: Ինչ որ կը մնար՝ պիտի կորէր այդ անապատներուն մէջ, որոնց ժողովուրդը շուտով հասկցաւ թէ այդ գաղթականի կարաւանները իրեւ զի կը որկեն իրենց»<sup>46</sup>:

Հարուստ կողոպուտի հեռանկարը լայն զանգվածների և համախնիների մեծ բանակ հավաքագրեց Եքիտուրքական իշխանությունների շուրջը<sup>47</sup>: Սվազում Խոտախայի առաքելության պատվիրակ Վիլլարին Կոստանդնուպոլսում Խոտախայի քարձրագույն կոմիսար Մայսուային Սվազից 1919 թվականի նոյեմբերի 15-ի գեկուցագրում հայտնում էր, որ 1915-1916 թվականների կոտորածին մասնակցում էին երկրի բոլոր խավերն ու բնակչության բոլոր շերտերը<sup>48</sup>:

Հայերի տեղահանությունից լայն չափով օգտվելու էին օսմանյան տնտեսության մեջ դեռևս անէական դերակատարություն ունեցող և նոր ձևավորվող բուրք փոքր, միջին և մեծ

<sup>44</sup> Արամ Աստոնյան, Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները եւ Թալէադ վիաշ, Պուբլի, 1921, էջ 246:

<sup>45</sup> Արշակ Ալպօյածեան, Պատմութիւն Կեսարիոյ Հայոց, հ. Բ., Գահիրէ, 1937, էջ 1440:

<sup>46</sup> Արամայիս Քալոյան, Խոտախայի արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վակերագրերը Հայկական հարցի մասին 1913-1923 թթ., հ. Բ., Երևան, 2010, էջ 80:

<sup>47</sup> Քրուն Էքարտ, Ապրած օրերս Ուրֆայում, Երևան, 1990, էջ 57:

<sup>48</sup> Նոյն տեղում, էջ 63:

առևտրական բուրժուազիայի ներկայացուցիչները: Նրանք կարող էին ոչ միայն տիրանալ հայերի բողած ունեցվածքի կարևոր մասին և բազմապատկել իրենց հարստությունը, այլև մեջտեղից վերացնել հայ առևտրականներին և առանց հզոր մրցակցի տեր դառնալ առևտրի ասպարեզին և հետագայում արդեն՝ երկրի տնտեսությանը<sup>49</sup>:

Երիտրուրերի վարչակազմը հայերի լրյալ գույքերը հանձնեց տեղահանված հայերի բնակավայրերի իշխանություններին, ճախարարություններին, շռայրեն տրամադրեց շենքեր և հողատարածքներ, իսկ փոխարենը գտավ համախնհների հսկա բանակ և ստացավ նրանցից աջակցություն՝ հայերի բնաշնչումն իրականացնելու համար: Վարչակազմն, այսպիսով, գնեց քաղաքների վերնախավին, շահագրգուեց լայն խավերին և այս կերպ ստեղծեց նոր բուրժուազիա: Թուրք իին ու նոր միջին խավը կրկնակի շահեց հայերի բնաշնչումից և նրանց ունեցվածքի կողոպուտից: Նրանք հարստացան՝ տիրանալով հայերի ունեցվածքին և ազատվեցին նրանց մրցակցությունից<sup>50</sup>:

Հայերի ունեղրկմամբ շահագրգիռ էին նաև երիտրուրական իշխանությունները: 1910 թվականին Սալոնիկում կայցած երիտրուրերի համագումարի, ինչպես նաև հաջորդ՝ 1911 թվականի հոկտեմբերին կայցած կուսակցության կենտրոնական կոմիտեի հատուկ նիստի որոշումներով կայսրության կառավարական շրջանները օրենքներ և միջոցառումներ էին մշակում հայ ժողովրդի բնաշնչման և նրանց գույքերի բռնազրավման վերաբերյալ<sup>51</sup>:

<sup>49</sup> Լևոն Չորմիսեան, Համապատկեր արևմտահայոց մեկ դարու պատմութեան, Գ. Խոր, Պէյրուր, 1975, էջ 354-355:

<sup>50</sup> Uğur Ümit Üngör and Mehmet Polateli, Confiscation..., p. 167.

<sup>51</sup> Հովհաննես Ինձիկյան, Օսմանյան կայսրության անկումը: Սոցիալ-տնտեսական ակնարկ, Երևան, 1984, էջ 300:

Բոյլոր հայերի ոչնչացումն առանց դասակարգային խտրականության երիտրուրերին հնարավորություն էր ընձեռում հավշտակել նրանց նյութական արժեքները՝ իիմնավորելով դա այն քանով, որ զոհված հայերը օսմանյան քաղաքացիներ են, ուստի նրանց ունեցվածքը որպես ժառանգություն պետք է անցնի բուրքական պետությանը<sup>52</sup>:

1915 թվականի փետրվարի 18-ին «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեն Աղանայի պատվիրակ Զելալ բեյին ուղղված նամակում հայտում էր, որ հայերի կոտորածի կարգադրությունը կառավարությունը կուսակալներին և բանակի հրամանատարությանը հայտնել է և պետք է անհրաժեշտ բոլոր քացարությունները տա: «Միություն և առաջադիմություն» կուսակցության բոլոր պատվիրակները իրենց գտնված վայրերում պետք է հետամուտ լինեն այս կարգադրության իրականացմանը: Հայերի բողած գույքերը «Միություն և առաջադիմություն» կուսակցության ընդարձակման ու հզորացման և հայրենասիրական նպատակներով ծախսելու պայմանով առաջմ կառավարությունն իրեն հարմար պայմաններով այդ գույքերը պետք է գրավի և պահի: Այդ առիթով ծանոթացնեք կազմակերպելիք հանձնաժողովների կատարելիք գործողության մասին հրահանգներին և զեղումների պարագայում տեղյակ պահեք կուսակալներին և մեզ՝ կենտրոնին»<sup>53</sup>:

Սուածին համաշխարհային պատերազմից առաջ Օսմանյան կայսրությունը սնանկության էր մատնված: Ֆրանսիայից պարտը վերցրած 500 միլիոն ֆրանկը ծախսվել էր Բալկանյան պատերազմում: Սալոնիկի նման նավահանգիստը անցել էր հույներին: Բուլղարները գրավել էին երկրի Եվրոպական մասը:

<sup>52</sup> Ուորեն Սահակյան, նշվ. աշխ., էջ 367:

<sup>53</sup> Արամ Անտոնյան, նշվ. աշխ., էջ 129-133:

Թուրք իշխանությունների միակ հույսը հայերի հարստությանը տիրանալն էր, որը հնարավոր էր միայն նրանց բնաջնջելով:

Իրավես, Օսմանյան կայսրությունը կքած էր արտաքին ահոելի պարտքերի տակ, որոնք սպառնում էին երկրի անկախությանը: 1914 թվականին արտաքին վարկերի գումարը հասել էր 64 միլիոն ֆունտ ստեղնինգի: Նշված գումարի 45,4%-ը պատկանում էր Գերմանիային, 25,9%-ը՝ Ֆրանսիային, և 16,9%-ը՝ Անգլիային: Մնացած 12,8%-ը բաժանվում էր Ամերիկայի Սիացյալ Նահանգների, Բելգիայի, Իտալիայի, Հոլանդիայի և այլ պետությունների միջև<sup>54</sup>: Պետության արտաքին ահոելի պարտքին գումարվել էին պատերազմական մեծագումար ծախսերը<sup>55</sup>: Պետք էր տիրանալ հայերի հարստությանը և դրա հաշվին վճարել պարտքերը և հոգալ պատերազմական մեծագումար ծախսերը: Հայերի հարստությամբ պետական դատարկ գանձանակը լցնելու և թուրք պաշտոնյաների անձնական հարստությունը բազմապատկելու նպատակին՝ 1912-1913 թվականների Բալկանյան պատերազմներից հետո գումարվեց նաև թուրք զաղթականների բնակության հարցը: Տեղահանված հայերի լրած տները թուրք վտարանիներին հանձնելը հանարկում էր տվյալ հարցի լուծում<sup>56</sup>:

Հայ ժողովոյի անհատական և հավաքական ունեցվածքի յուրացումը պետության կողմից ծրագրված լինելու մասին վկայություններ կան թե՛ վերապրությունների հուշերում, թե՛ Օսմանյան կայսրության տարածքում գործած օտար դիվանագետների գեկուցագրերում, թե՛ ականատեսների վկայություններում և թե՛ թուրքական աղբյուրներում, որոնք հաստատում են, որ երիտրուրքական կառավարության կողմից հայերի

ունեցրկումը հայ ժողովոյի բնաջնջման ծրագրում եղել է կարևոր գործոն և դրդապատճառ:

Այսպես, Օսմանյան կայսրությունում իտալահպատակների պաշտպանության հանձնակատար Տայանին Խտախայի արտաքին գործերի նախարար Սոննինոյին Կոստանդնուպոլիսից 1915 թվականի հոկտեմբերի 9-ին ուղարկած հեռագրում հայտնում է. «Փ լրումն «Տեղահանության մասին» օրենքի, օսմանյան կառավարությունը 1331 թվականի (1915) սեպտեմբերի 13-ին ընդունեց մեկ այլ օրենք, որով վարչակազմը կարգադրում էր բռնագրավել տեղահանվածների ունեցվածքը: Իրականում տեղահանվածներից բռնագրավված գույքն ըստ բնույթի բաժանվում է գույքի և ֆինանսների նախարարությունների միջև, որոնք, այդ գույքի տիրոջ ունեցած պարտքերը գույքի արժեքից վերցնելով, մնացորդը պետք է [իբր] վերադարձնեն տիրոջը: Այդ օրենքը կեղծափրություն է՝ տեղահանվածների գույքին տիրանալու համար, քանզի տեղահանվածների մեծ մասն իրենց ընտանիքներով ճանապարհն ընաջնջում են, ուստի ոչ ոք մնացորդային գումարը եւս ստանալու պահանջ չի ներկայացնի»<sup>57</sup>:

Կոստանդնուպոլիսում Ֆրանսիայի դեսպանատան արխիվապահներ Ռոբեր դյու Գարդիեն և Բոդուն արտաքին գործերի նախարար Դեկասնին Կոստանդնուպոլիսից 1915 թվականի հոկտեմբերի 2-ի գեկուցագրում հաղորդում են. «Հելլան» այսօր (29 սեպտեմբերի, 1915, թիվ 117) տպագրում է նախական օրենքի մի բնագիր, որը վերաբերում է «այլ վայրեր տեղափոխած անձանց» ունեցվածքներին, պարտքերին և հավատարմագրերին: Եթե այդ հրամանագրի արտահայտություններն ընդունենք ամենայն ճշգրտությամբ, ապա կտես-

<sup>54</sup> Հովհաննես Խնձրիկյան, նշվ. աշխ., էջ 294:

<sup>55</sup> Նոյն տեղում:

<sup>56</sup> Տոլզա Էրեն, Անատոլիայում մի որվական է պտտվում, Դրօշակ, Երևան, 2009, Դ., էջ 29:

<sup>57</sup> Արամայիս Բալբյան, Խտախայի արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին 1913-1923թթ., հ. Ա., Երևան, 2008, էջ 175-176:

նենք, որ այն հանգում է բացակայողների կատարյալ և պարզունակ կողոպուտին»<sup>58</sup>:

Տեղեկանալով «Լքյալ գույքերի մասին» օրենքի ընդունման մասին «Deutsche Bank»-ի տնօրեն Արքուր ֆոն Գվինները հեգնանքով նշել է, որ այս օրենքի տասնմեկ հոդվածների բովանդակությունը հանգում է տեղահանված հայերի ամբողջ ունեցվածքի բոնազավրմանը և կառավարության իրավունքի հաստատմանը՝ իր հայեցողությամբ տնօրինելու հայերի հաշիվներում եղած գումարները<sup>59</sup>:

Ավատրո-հունգարական գիննորական կցորդի 1915 թվականի մայիսի 19-ի գեկուցագրում ասվում է. «Թուրքական կառավարությունը այս աքսորը ձեռնարկել է ոչ քե հայկական ապստամբությունը ճնշելու, այլև Մակեդոնիան և Լիբիան կորցնելու հետևանքով հացից զրկված բուրք պաշտոնյաներին ապահովելու համար»<sup>60</sup>:

Հալեպում ԱՄՆ-ի հյուպատոս Ջես Բ. Ջեկսոնը դեսպան Հենրի Մորգենթաուին ուղղված 1915 թվականի օգոստոսի 19-ի իր գեկուցագրում հայտնում է. «Այնքանի հայ համայնքն ամենահարուստն է ամբողջ կայսրությունում, և այստեղ լավ հնարավորություն է ստեղծվում քաղաքնի համար: Քաղաքացիների տնային իրերը թողնվել են, և հենց առաջին կողոպտիչը կարող է տանել դրանք: Քանի որ քաղաքի վաճառականներից շատերը հայեր են, քաղաքում են նաև նրանց խանութները: Սա հսկայական քաղաքնի ծրագիր է, ինչպես նաև ազգի բնաջնջման ուղղությամբ մի վերջին հարված»<sup>61</sup>:

Անգլիական տեղեկատվական ծառայության՝ 1915 թվականի մայիսի 5-ին Արենքից ուզմական նախարարությանը հղած գեկուցագրում ասվում է. «Հայերի ձերքակալությունները շարունակվում են առ այսօր: Աղրիանապոլսում ևս տեղի են ունեցել բազմաթիվ ձերքակալություններ: Պատճառներն անհայտ են: Հավանաբար, բուն պատճառն այն է, որ քուրքերը ցանկանում են կորզել հայերի փողերը և նրանց ունեցվածքի բոնազավրման հարցում չունենալ այլևս ոչ մի խոչընդոտ»<sup>62</sup>:

Երգրումի ռեգենտ Շոյբներ-Ռիխտերի՝ Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպան Վանգենհայմին ուղղված 1915 թվականի մայիսի 22-ի գաղտնի գեկուցագրում ասվում է. «Հայերի լրած գյուղերը գրավում են մուհաջիրները (ուազմաճակատի գյուղերից եկած բուրք վտարանդիները): Հենց նրանք էլ շատ տեղերում քաղաքնում են հայերի սեփականությունը: Կարելի է ենթադրել, որ ի սկզբանե տեղահանման նպատակը երկի քե դա է եղել՝ տեղ ճարել վտարանդիների համար»<sup>63</sup>:

Թուրքիայում իտալահպատակների պաշտպանության հանձնակատար Տայանին Խոախայի արտարին գործերի նախարար Սոննինոյին Կոստանդնուպոլսից 1915 թվականի հոկտեմբերի 31-ի հեռագրում հայտնում էր. «Տեղահանված հայերի ունեցվածքը հանձնվում է դատարկված պետական գանձարանին, բայց առավել հաճախ, դրանք լրացնում են բուրք պաշտոնյաների մասնավոր ունեցվածքը»<sup>64</sup>:

<sup>58</sup> Արքուր Թեյլերյան, նշվ. աշխ., էջ 196:

<sup>59</sup> Յուրի Բարսեղով, նշվ. աշխ., էջ 6:

<sup>60</sup> Ավատրո-Հունգարիայի դիվանագետների հաղորդագրությունները Հայոց ցեղասպանության մասին (Փաստափերերի ժողովածու) (1915-1918թթ.), Երևան, 2004, էջ 18:

<sup>61</sup> Ամերիկայի Միացյալ Նահանգների պաշտոնական վավերագրերը Հայոց ցեղասպանության մասին, Երևան, 2004, էջ 55:

<sup>62</sup> Արքուր Թեյլերյան, նշվ. աշխ., էջ 86:

<sup>63</sup> Վոլֆանգ Գուտա, Հայերի ցեղասպանությունը 1915-1916: Գերմանիայի արտարին գործոց նախարարության քաղաքական արխիվի փաստարդերը, Երևան, 2005, էջ 54:

<sup>64</sup> Արամայիս Բալյոյան, նշվ. աշխ., հ. Ա., էջ 191:

Յոհաննես Լեփսիուսը հայտնում էր հետևյալ ամփոփիչ տեսակետը. «Այսպիսի մեծ շափերի հասնող ավագակությունը, որն իր նմանը չունի պատմության մեջ, կարելի է պատկերացնել միայն բուրքական իրավակարգում»<sup>65</sup>: Մեկ այլ գրքում Յոհաննես Լեփսիուսը արձանագրում է. «Աքսորյալները պարտավոր էին իրենց ամրող ունեցվածքը, տները, հողամասը, լնտանի կենդանիները, տնային և գյուղատնտեսական գործիքները բողնել տեղում: Տեղահանումը միաժամանակ հայ ժողովրդի ունեցվածքի բռնագրավումն էր»<sup>66</sup>:

Ավելին, ԱՄՆ-ի դեսպան Հենրի Սորգենթաուն գրում է. «Տարագրումի ճշմարիտ նպատակն էր գողութիւնը և քանդումը, անիկա իրապէս բնաջնջումի նոր մեթոս մըն էր: Եթի օսմանեան իշխանութիւնը իրաման տուին այս տարագրութեանց, անոնք պարզապէս վճռող արձակած եղան ամրող ցեղի մը մահուան. այդ իշխանութիւնները շատ աղեկ կը հասկնային այս քանը, եւ մեր խոսակցութիւններուն մէջ չին շանար ծածկել զայն»<sup>67</sup>:

Ուրֆայում գերմանական միսիայի ներկայացուցիչ Բրուն Էքարտը գրում է. «Մեծ կողոպուտից հետո քաղաքում և նրանից դուրս ամիսներ շարունակ գողացված ապրանքների աշխույժ առևտուր էր տեղի ունենում: Անշուշտ, ավարի արժեքավոր մասը կառավարությունը վերցրել էր և ամեն օր աճուրդով վաճառք էր կազմակերպում՝ զարմանալիորեն ցածր գներով, և ապրանքները վաճառում էին միայն բուրքերին: Ժամանակի ընթացքում հայ բնակչության ունեցվածքն անցավ մահմեդա-

կաններին, և այդպիսով նրանք հասան մարդկանց բնաջնջման գլխավոր նպատակին»<sup>68</sup>:

Հայոց ցեղասպանություն վկա, գերմանացի գրող Հարրի Շրյումերը գրում է. «Այն ատեն է որ «այլուր փոխադրած անձեր» նկատուեցան անոնք, ինչպէս կը կոչէին քնքօրէն վերնագիրը այն «առժամեայ օրէնքին», որ կատարեալ իրաւունք կուտար փոխադրուդներու լաւագրն ազարակները իթքիհատի կառավարութեան տրամադրութեան տակ դնելու: Այս կերպով այս քոմիտէն եռանդագին կը գործադրէր երկրին «ներսը գաղթականներով լեցնելու» սկզբունքը զուտ բուրք տարրերով: Որովհետեւ այդ մէթոդով, զլխաւոր նպատակը, բռնի ազգայնացումը երկրին, որ մինչեւ այդ բնակեցւած էր զանազան ցեղի ժողովուրդներով, կատարելապէս իրականանալի էր: Եւ մինչդեռ Անատօնուն կը պարագէր այդ ամեն տարրերէն որ կը ներկայացնէին մինչեւ այդ վայրկեանը յառաջադիմութիւնը, մինչդեռ քաղաքներ ու գիւղեր եւ տարագրեալներու ծաղկեալ դաշտերը իբրեւ աւար կը մնային անբանացած մուհաճրներու աւագակախմբերուն անփոյք ու մոլեռանդ իսլամ գաղթականներու ձեռքը»<sup>69</sup>:

Հայոց ցեղասպանության մէջ հայերի ունեզրկման նպատակի կարևորությունն է ապացուցում նաև այն փաստը, որ կոտորածի ենթակա առաջին խմբերը կազմվում էին մտավորականներից, հոգևորականներից և կուսակցականներից: Իսկ նրանց ճակատագրին հետևող երկրորդ խմբաքանակը, որպէս կանոն, ունեսր դասն էր<sup>70</sup>: Այս տեսակետից տիպական է Խարբերդում կատարվածը: 1915 թվականի հունիսի

<sup>65</sup> Յոհաննես Լեփսիուս, նշվ. աշխ., էջ 172:

<sup>66</sup> Յոհաննես Լեփսիուս, Գերմանիան և Հայաստանը 1914-1918 թթ., Երևան, 2006, էջ 23:

<sup>67</sup> Հենրի Սորգենթաու, Դեսպան Սօրկընթաուի պատմածները, Կ.Պոլս 1919, էջ 302-303:

<sup>68</sup> Բրուն Էքարտ, նշվ. աշխ., էջ 57-58:

<sup>69</sup> Հարրի Շրյումեր, Պատերազմի երկու տարիներ Պոլսի մէջ, Ժողովուրդի ծայմը, 1919, 20 յունուարի-2 փետրուարի:

<sup>70</sup> Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները (Գիտագրութնական միջազգային գիտաժողով) Կյալոս-Նիկոլայ, ապրիլ 18-19, 2008 թ., Գիտական գեկուցումների ժողովածու, Երևան, 2009, էջ 190:

15-ին կազմակերպվեց Երկրորդ խմբի՝ 300 հոգուց քաղկացած հարուստների տեղահանությունը: Նախապես հայ մեծահարուստներից քուրքերը գումարներ էին վերցրել աքսորից ազատելու համար, սակայն նրանց նույնական տեղահանությունը կային պաշտոնական գրություններ՝ տրված Խարբերդի կուսակալությունից և օսմանյան խորհրդարանի երեսփոխանությունից, որոնք հավաստիացրել էին հայերի կյանքի ապահովությունը: Քարավանի պահապան սպաները պաշտպանության համար 400 օսմանյան ոսկի էին պահանջել: Տղամարդիկ, կանայք, երեխաները հեծել էին ծիեր ու ջորիներ, կանայք կրում էին ֆրանսիական շրջազգեստները, զիյներին պահել էին ասեղնազործ հովանոցներ, իսկ սպասավորները տանում էին կովեր, որպեսզի աղաների երեխաները ճանապարհին քարմ կաթ խմն: Խարբերդից մի քամի կիլոմետր անց, հենց առաջին կիրճում բոլորին սրախողող արեցին: Արդյունքում, ոսկեղենը, քանի քարերը, փողը քաժին հասավ քարձրաստիճան ջարդարաբներին, իսկ շարքային մարդասպանները յուրացրեցին զոհերի հագուստը, կահկարասին ու անասունները<sup>71</sup>:

Կ.Պոլսում 1915 թվականի ապրիլի 24-ին հայ մտավորականության ձերբակալությանը հաջորդեց այստեղ գտնվող գավառացի հայ մեծահարուստ վաճառականների ձերբակալությունն ու աքսորը: Ձերբակալվածների թիվն անհամար էր<sup>72</sup>:

Բոլղարիայի Թագավորության լիազոր նախարար դոկտոր Ն. Կոլոչեր Բոլղարիայի նախարարների խորհրդի նախագահ դոկտոր Վ. Ռադոսլավովին՝ Կոստանդնուպոլիսից Սոֆիա առաջ 1915 թվականի սեպտեմբերի 28-ի նամակում հայտնում է.

<sup>71</sup> Մանուկ Գ. Շիզմենեան, նշ. աշխ., 567:

<sup>72</sup> Ողնու Բինոն, Հայերու բնաջնջումը: Գերմանական մերող-քուրքական գործելակերպ, Բ. տպգ., Կ.Պոլս., 1919, էջ 31:

«Թուրքական իշխանությունները ձերբակալել և Կ.Պոլսի են թերել Աղրիանապոլսի հայտնի և մեծահարուստ հայերին, որոնց մեջ են Կարաաղաջից Գույումճյանը և Ղարիբյանը: Դա արվել է նրանց ունեցվածքը բռնազրավելու նպատակով»<sup>73</sup>:

Սերաստիայում առաջին հերթին տեղահանվեցին մեծահարուստ հայերը<sup>74</sup>: Երգնակայից տեղահանված առաջին քարվանները նույնական կազմված էին քաղաքի հայ մեծահարուստներից<sup>75</sup>: Կարճության բռնազարի առաջին քարավանը կազմված էր շուրջ 40 հարուստ հայ ընտանիքներից<sup>76</sup>: Կեսարիայի պատերազմական ատյանի կողմից աքսորի դատապարտվեցին քալասից 16 ամենահարուստ հայերն իրենց ընտանիքներով: Ինչպես բոլոր քարավաններն, այս մեկն էլ ողբերգական վախճան ունեցավ: Ուղեկցող ոստիկանները բոլորին գնդակահարելուց հետո կողոպարտեցին նրանց հարյուրավոր ոսկիները, քանի արեցին ու գորգերը<sup>77</sup>:

Ահա, Աղանայում Գերմանիայի հյուպատոսության կողմից հայ ժողովրդի դեմ երիտրութքական կառավարության հայերի նկատմամբ բռնի գործողությունների մասին կատարված գրառումներից, որը 1915 թվականի սեպտեմբերի 24-ին առաքվել է Գերմանիայի ռեյսսկանցլեր Բեթման ֆոն Հոլվեզին. «Աղանայի խոշոր առևտրականներից ոմն Մանուկ Շահրազյանի ընտանիքին միացան նաև այլ հայեր, որոնցից կազմվեց 33 սայլերից քաղկացած քարավան: Երեկոյան նրանք բոլոր ավագանների կողմից ենթարկվեցին հարձակման: Քանի որ

<sup>73</sup> Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում Բոլղարիայի դիվանագիտական փաստաթուրերի լույսի ներքո, Երևան, 1996, էջ 34:

<sup>74</sup> Գոմեկան Սերաստիյու (Կ. Գարիկեան), Եղենապատում Փոքրու Հայոց և Նորին Սեծի մայրաքաղաքին Սերաստիյու, Պուրըն, 1924, էջ 99:

<sup>75</sup> Գ. Սիրմէեան, Երզնկա, Գահիր, 1947, էջ 275:

<sup>76</sup> Ղազար-Զարզա, Յուշամատյան Բարձր Հայքի Կարինապատում, Պէյրութ, 1957, էջ 481:

<sup>77</sup> Թորոս Մ. Մատաղմեան, Յուշամատեան Թոմարզայի, Պէյրութ, 1959, էջ 291:

սայլերով մեկնող հայերը առանց որևէ կասկածանքի ունենութիւն, ուստի մահմեդական ավազակները առաջին հերթին հարձակվում էին նրանց վրա և որոշ պարագայում քալանելուց հետո սպանում նրանց»<sup>78</sup>:

Հայերի ունեցվածքի ծրագրված քալանի մասին է վկայում գերմանական մամովի առջև Յոհաննես Լեփսիուսի ելույթի և Գերմանիայի արտարին գործոց նախարարության առարկության վերաբերյալ Բեռլինի “Magdeburger Zeitung” թերթի խմբագրության 1915 թվականի հոկտեմբերի 12-ի հաշվետվությունը. «Ամերիկայի դեսպանը Թալեարին առաջարկել է քաջի նավով Ամերիկա գնացած 7000 հայերից, մնացած բոլոր հայերին էլ տանել Ամերիկա, նույնիսկ մի ամբողջ միլիոն, քանի որ այդ աշխատանքը ու գործարար բնակչությանը կարելի է օգտագործել այն կողմում: Թալեար փաշան խոսել է Էնվերի հետ, քայլ նա հայտարարել է. «Այդ դեպքում կտեղափոխվեն հարուստները, իսկ այստեղ կմնան աղքատները»: Զեկուցողի (Յոհաննես Լեփսիուս) կարծիքով, խոսքը ուներ հայերի ծրագրավորված քալանի մասին է, որոնք ամենուրեք՝ հույների և իրեաների հետ իրենց ձեռքում են պահում առևտուրն ու արհեստը: Այդ իսկ պատճառով տեղահանման հետևանքը նախ և առաջ կլինի Անատոլիայի տնտեսական աղետը, իսկ այդ կերպ ինքն (Օսմանյան կասրութիւնը) իրեն տնտեսապես կկործանի»<sup>79</sup>:

Հենրի Մորգենթաուի՝ հայության մի հատվածին փրկելու մասին Թալեարին արած առաջարկը ահա թե ինչպես է ներկայացնում և մեկնարանում ավստրիացի դիվանագետ Թրաումանսդորֆը Կ.Պոլսից՝ 1915 թվականի հոկտեմբերի 13-ին

<sup>78</sup> Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիվանագետների գեկուցագրերում (1915-1918), Երևան, 2004, էջ 81-82:

<sup>79</sup> Վոլֆգանգ Գուտը, նշվ. աշխ., էջ 255:

Վիեննա ուղարկած իր գեկուցագրում. «Սկզբում Թալեար փաշան ընդունեց այդ առաջարկը: Թալեարը, որը ոչինչ ավելի չեր տենչում, քան որքան հնարավոր է կրծատել հայերի թիվը բուրքական կայսրությունում, սկզբում հայտնեց, որ համաձայն է ամերիկյան գաղափարին: Այնուհանդերձ, բուրքերն այժմ սկսեցին հարուցել ամենատարբեր դժվարություններ: Պարոն Մորգենթաուի կարծիքով, բուրքական պետական գործիչները վախենում են, որ զանգվածային արտագաղթի միջոցով լայն հասարակությանը կիացնեն հայերի դեմ ձեռնարկած միջոցառումների մասին անհաճ մանրամասներ, և որ աշխարհն ավելի քան այժմ, կզրադիմ Փոքր Ասիայի խորքում տեղի ունեցող դեպքերով: Թուրքական կողմից պահանջում է, որ յուրաքանչյուր հայ իր մեկնումից առաջ ստորագրությամբ պարտավորվի այլևս երեք ոտք չդնել բուրքական տարածք: Քաջի դրանից, հայերը, ըստ բուրքական պարտադրանքի, ստիպված են հեռանալ երկրից առանց որևէ միջոցի»<sup>80</sup>:

Թալեար և Էնվեր փաշանների նպատակը հայերի բնաջնջումն էր: Նրանք մերժեցին հայերին Ամերիկա տեղափոխելու Հենրի Մորգենթաուի առաջարկը, քանզի հայերը կարող էին հարց բարձրացնել և իրենց լրյալ գույքերի հատուցում պահանջել<sup>81</sup>:

Այսպես, ունեզրկելով մի ամբողջ ժողովրդի, տիրանալով նրա դարերի քրտինքով և տքնությամբ ստեղծված ունեցվածքին՝ բուրքական իշխանությունները հետագայում կարողացան լուծել պետությանը և բուրքերի ազգային անվտանգությանը սպառնացող բազմաթիվ հարցեր: Նախ, հայերի հարստու-

<sup>80</sup> Արտեմ Օհանջանյան, 1915 թվական. անհերքելի վկայություններ, Երևան, 1997, էջ 108:

<sup>81</sup> Լեռն Երկանեան, Յուշեր և փուշեր, Խմիթի անցած օրերէն, Մատեմադարան, Արշակ Ալպոյանցյանի ֆոնդ, թղթ. 8, վագ. 21/13:

քյան հաշվին բուրքական իշխանությունները լցրեցին իրենց դատարկ պետական գանձանակը, հոգացին պատերազմական մեծագումար ծախսերը, վճարեցին արտարին պարտքերի զգալի մասը: Երիտրուրքական, հետազայում արդեմ՝ քենալական և հանրապետական իշխանությունները տնտեսական ասպարեզից վերացրին իրենց հզոր մրցակցին, նրա ինչքերի, անհատական շարժական և անշարժ գույքերի յուրացումով ստեղծեցին ազգային կապիտալ: Այսօրվա բուրքական տնտեսությունը հենված է հայերից բռնազրավկած ունեցվածքի վրա:

## ԹՈՒՐՔԻԱՅԻ ԿՈՂՄԻ ԷԽՍՊՐՈՊՐԻԱՑՎԱԾ ՀԱՅԵՐԻ ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՊՐԱՆՇ ՊԻՄԱՅ ՏՐՎՈՂ ՓՈԽՀԱՏՈՒՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԱՐԲՈՒԵ ՓԱՍՏԱՐԿՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

«Էքսպրոպրիացիա» բառը առաջացել է 16-րդ դարի վերջում միջնադարյան լատիներեն «*expropriat*» բառից (սեփականատիրոջից վերցված կամ առգրավված)՝ «*expropriare*» բայից՝ «*ex*»-ից որը նշանակում է դուրս (ից) + «*proprium*»-ը, որը նշանակում է գույք՝ «*proprietus*»-ի (սեփականի) եզակի չեզոք ձև:<sup>1</sup> Ըստ Օքսֆորդի բառարանների (Oxford Dictionaries) էքսպրոպրիացիան սահմանվում է հետևյալ ձևով. «(պետության կամ պետական մարմնի կողմից) սեփականատիրոջից (գույքի) առգրավում հանրային շահի կամ օգուտի համար»<sup>2</sup>: Էքսպրոպրիացիան նաև համարվում է համայնականական պետական ատյանների կողմից գույքի կամ դրա իրավունքների առգրավումը (վերցնելը), որը հաճախ տեղի է ունենում հարկադիր օտարման ճանապարհով<sup>3</sup>: Աբդալան և Թիլլերը (2003թ.)<sup>4</sup> առանձնացնում են երկու տեսակի էքսպրոպրիացիա՝ ուղղակի և անուղղակի: Ուղղակի էքսպրոպրիացիայի ժամանակ տեղի է ունենում պետության կողմից մասնավոր

<sup>1</sup> Oxford Dictionaries, Oxford University Press. Available at: <<http://www.oxforddictionaries.com/definition/english/expropriate>>, last accessed: April 6, 2015.

<sup>2</sup> Նոյն տեղում:

<sup>3</sup> Wex, free legal dictionary and encyclopedia sponsored and hosted by the Legal Information Institute at the Cornell Law School, <<https://www.law.cornell.edu/wex/expropriation>>, last accessed: April 6, 2015.

<sup>4</sup> Abdala, Manuel and Spiller, Pablo (2003). "Damage Valuation of Indirect Expropriation in Public Services," Available at: <<http://128.118.178.162/eps/io/papers/0508/0508005.pdf>>, last accessed: April 6, 2015, p.5.

ակտիվների ֆիզիկական առզրավկում (takeover), իսկ անուղղակի էքսպրոպրիացիայի ժամանակ պետությունը աղմինհստրատիվ կամ օրենսդրական գործընթացների միջոցով միակողմանի փոփոխում է պայմանագրում նշված պարտավորությունները կամ պայմանները, որի հետևանքով էլ ներդրողը չի կարողանա ստանալ սկզբնական պայմանագրով նախատեսված քվազի ռենտան, իսկ ինքնին անուղղակի էքսպրոպրիացիան (հանրային ծառայությունների հավատարմագրային կառավարման դեպքում) համարվում է ամենատարածված էսպրոպրիացիայի ձևը<sup>5</sup>:

Ինքնին գույքի գնահատման նպատակն ըստ Ալեմուի (2013թ.) դա գույքը կամ սեփականությունը տնօրինելու և օգտագործելու օգտակարության չափի որոշումն է<sup>6</sup>: Դավագարին 1588թ. արժեքի տեսության բացատրությունը ներկայացնում է հետևյալ ձևով, որ ապրանքների արժեքը կախված է նրանց օգտակարությունից և հազվագյուտ լինելուց, իսկ այս պարագայում ըստ Սքրեպանքի և Զամանզեի (2005թ.) կարևորը ոչ թե բացարձակ օգտակարությունն է, այլ այն օգտակարությունը, որն առնչվում է առկա քանակի հետ: Գույքի արժեքը որոշվում է այն ծառայությունների քանակով, որը վերջինս կարող է տրամադրել մարդու կարիքները բավարարելու նպատակով, և մարդու բարեկեցության փոփոխությունը (ավելացում) կախված է դրանից<sup>7</sup>: Իսկ «գույք» տերմինը, ընդհանուր առմամբ, համարվում է իրավաբանական հասկացու-

թյուն, որն առնչվում է այն կանոնների կամ օրենքների հետ, որոնք կանոնակարգում են մարդկանց ֆիզիկական (շոշափելի ակտիվներ՝ հող, բնական ռեսուրսներ, արտադրված ապրանքներ), ինչպես նաև ոչ ֆիզիկական (ոչ շոշափելի ակտիվներ՝ գյուտեր, պայմանագրի հիման վրա ծագող իրավունք, ֆինանսական պահանջ) առարկաների օգտագործումը և տնօրինումը: Անշարժ գույքը առնչվում է հողի և դրա հետ կապված բարեկարգումների՝ շինությունների սեփականությանը: Անշարժ գույքի սեփականության հետ կապված ծագում են մի շարք իրավունքներ՝ օգտագործելու, վաճառելու, վարձակալության տալու, օտարելու իրավունք կամ դրանցից ոչ մեկից կամ բոլորից օգտվելու իրավունք, իսկ այլ տիպի ակտիվի (բացառությամբ հողի՝ չօգտագործվող կամ բարեկարգված) սեփականությունը համարվում է անձնական գույք, որը բնութագրվում է իր շարժունակությամբ: Այդ իսկ պատճառով գույք հասկացության տակ պետք է հասկանալ կամ անշարժ գույք կամ անձնական գույք: Իսկ գույքի գնահատումը կատարվում է հետևյալ դեպքերում՝ այդ գույքի առք ու վաճառք, վարձակալության դեպքում վարձի մեծության որոշում, վճարվելիք կամ տրամադրվող փոխհատուցման չափի որոշում և այլն<sup>8</sup>: Ինքնին արժեքի և դրա գնահատականի եռությունը սույնեկտիվ է և ըստ Ալեմուի (2013թ.)<sup>9</sup> անհրաժեշտ է մեկը մյուսից կախված 4 գործոնի առկայություն, որպեսզի գույքը ունենա տնտեսական արժեք՝

1. Օգտակարություն՝ մարդկային կարիքները և պահանջմունքը բավարարելու կարողություն,

<sup>5</sup> Abdala, Manuel and Spiller, Pablo (2003). "Damage Valuation of Indirect Expropriation in Public Services." Available at: <<http://128.118.178.162/eps/io/papers/0508/0508005.pdf>>, last accessed: April 6, 2015, p.5.

<sup>6</sup> Alemu, Belachew Y. (2013). "Expropriation, Valuation and Compensation in Ethiopia," Academic Dissertation Thesis, Royal Institute of Technology, Stockholm, Sweden, p.38. Available at: <[https://www.kth.se/polopoly\\_fs/1.418707!/Menu/general/column-content/attachment/Fil%20201%20Alemu%20final%20main%20text.pdf](https://www.kth.se/polopoly_fs/1.418707!/Menu/general/column-content/attachment/Fil%20201%20Alemu%20final%20main%20text.pdf)>, last accessed: April 14, 2015.

<sup>7</sup> Նոյն տեղում:

<sup>8</sup> Alemu, Belachew Y. (2013). "Expropriation, Valuation and Compensation in Ethiopia," Academic Dissertation Thesis, Royal Institute of Technology, Stockholm, Sweden, p.38. Available at: <[https://www.kth.se/polopoly\\_fs/1.418707!/Menu/general/column-content/attachment/Fil%20201%20Alemu%20final%20main%20text.pdf](https://www.kth.se/polopoly_fs/1.418707!/Menu/general/column-content/attachment/Fil%20201%20Alemu%20final%20main%20text.pdf)>, last accessed: April 14, 2015.

<sup>9</sup> Նոյն տեղում, էջ 44:

2. Հազվագյուտ լինելը՝ ներկա կամ սպասվող առաջարկը պահանջարկի նկատմամբ,
  3. Ցանկությունը՝ գնորդի մտադրությունը տնօրինելու այդ ակտիվը
  4. Արդյունավետ գնողունակություն՝ անհատի կամ խմբի կարողությունը շուկայում մասնակցելու նպատակով:
- Իսկ գույքի արժեքի վրա ազդում են ներքո բարեկած չորս ուժերի գուգորդումը ըստ «The Appraisal Institute»-ի (2001թ.)<sup>10</sup>:
1. *Ֆիզիկական ուժեր՝* մարդու կողմից ինչպես նաև բնակիմայական գործոններ (արտաքին): Այդ գործոնների շարքում են՝ կլիման, հողի բնութագիրը և ապագա զարգացմանը խոշնորոտող բնության արգելվելը (գետեր, սարեր), փոխադրման համակարգը և հանրային ծառայությունների առկայությունը, գույքին շրջապատող անմիջական տարածքի բնութագրիչներ և դրա գրավչությունը:
  2. *Տնտեսական ուժեր՝* առաջարկի և պահանջարկի միջև ֆունդամենտալ կապը, բնակչության տնտեսական կարողությունը բավարարելու իր պահանջները և գնողունակությամբ ամրապնդվող պահանջարկը: Այդ գործոնների օրինակներն են՝ աշխատատեղերի առկայությունը, աշխատավարձի մակարդակը, տարածաշրջանի և համայնքի տնտեսական վիճակը, հիպոքեքային վարկի տոկոսադրույթները և վերջինիս մատչելիությունը, ազատ գույքի առկայությունը, շինարարության փուլում գտնվող գույքի առկայությունը, գոյություն ունեցող գույքի վարձակալության և վաճառքի գները և շինարարական ծախսերը:

3. *Քաղաքական և կառավարության ուժեր՝* սրանք այն ուժերն են, որոնք կարող են նույնական առաջնային համարվել տնտեսական ուժերի համեմատությամբ: Դրա օրինակներից են տեղական կառուցապատման պահանջները, շինությունների նորմերը և կանոնակարգումը, առողջապահական և անվտանգության նորմերը, հարկերը, բնապահպանությանը վերաբերող օրենսդրությունը, սեփականության ձևերի նկատմամբ սահմանափակումները և այլն:
  4. *Սոցիալական ուժեր՝* բնակչության կազմի փոփոխություն, ինչպես նաև մարդկային գործունեությանն առնչվող ամրութական սպեկտր: Դրա օրինակներից են՝ բնկակչության սեռատարիքային կազմը, ծննդաբերության և մահացության թիվը, վերաբերմունքը կրթության նկատմամբ, կարգությունը, ինչպես նաև այլ բարոյական նորմերը և այլն:
- Քանի որ արժեքն ինքնին սուրյեկտիվ գաղափար է, հետևաբար այն ժամանակի տարրեր պահերին տարրեր կինդի կախված նրանից, թե ինչ նպատակով է այն գնահատվում և ում համար է կատարվում այդ գնահատումը: Արժեքի տարրեր կոնցեպցիաներ գոյություն ունեն, որոնք հիմք են ծառայում արժեքի գնահատման համար և կախված վերջինիս նպատակից և երկրների պատմական ուղղություն արժեքի գաղափարը փոխվում է<sup>11</sup>: Իսկ տնտեսագիտության մեջ ըստ Քիմնարդի արժեքավոր լինելը (worth) կարող է համարվել որպես օգտագործման արժեք, մինչդեռ գինը կամ շուկայական արժեքը (price or market value) համարվում է փոխանակման արժեքը, և գույքի գնահատման ժամանակ հիմնականում ուշադրությունը կատարվում է առաջնային համարժեքի վերաբերյալ:

<sup>10</sup> Alemu, Belachew Y. (2013). "Expropriation, Valuation and Compensation in Ethiopia," Academic Dissertation Thesis, Royal Institute of Technology, Stockholm, Sweden, p.44. Available at: <[https://www.kth.se/polopoly\\_fs/1.418707!/Menu/general/column-content/attachment/Fil%201%20Alemu%20final%20main%20text.pdf](https://www.kth.se/polopoly_fs/1.418707!/Menu/general/column-content/attachment/Fil%201%20Alemu%20final%20main%20text.pdf)>, last accessed: April 14, 2015.

<sup>11</sup> Alemu, Belachew Y. (2013). "Expropriation, Valuation and Compensation in Ethiopia," Academic Dissertation Thesis, Royal Institute of Technology, Stockholm, Sweden, p.45. Available at: <[https://www.kth.se/polopoly\\_fs/1.418707!/Menu/general/column-content/attachment/Fil%201%20Alemu%20final%20main%20text.pdf](https://www.kth.se/polopoly_fs/1.418707!/Menu/general/column-content/attachment/Fil%201%20Alemu%20final%20main%20text.pdf)>, last accessed: April 14, 2015.

բյունը շուկայական արժեքի վրա է<sup>12</sup>: Մյուս կողմից ըստ Վյարքի (2007թ.), այն գործոնները որոնք ազդում են գույքի արժեքի և դրա փոփոխության վրա, կարող են դասակարգվել որպես գույքին հատուկ գործոններ և գույքին չառնչվող գործոններ (ներքին կամ ազգային և միջազգային)<sup>13</sup>:

Ինչ վերաբերում է եկամտի աղբյուր հանդիսացող կամ եկամուտ ապահովող գույքին, ապա թիզնեսի գույքի արժեքը որոշվում է վերջինիս (որպես առանձին տնտեսական միավորի) գործունեության իման վրա<sup>14</sup>: Ըստ Լիբլիխի (1991թ.), եկամտի աղբյուր հանդիսացող ակտիվի՝ կապիտալի կամ մասնավոր ընկերության սեփականատիրոջ համար վերջիններիս արժեքը համարվում է դրամական հոսքերի ապագայում սեփականատիրոջ համար եկամտի ստեղծումը (դրամական հոսքերի ապագայում եկամուտ ստեղծելու գործառույթը), ինչն էլ սեփականատիրոջը բույլ կտա ավելացնելու իր հարատուրյունը և ավելի բարեկեցիկ կյանքով ապրել<sup>15</sup>: Իսկ հարատուրյան ավելացումը լինում է հետևայլ կերպ<sup>16</sup>:

1. Ընկերության գործունեությունից ստացվող հասույթը:
2. Ընկերության արժեքի բարձրացումը:
3. Ընկերության վաճառքից ստացվող եկամուտ, որը պայմանավորված է այդ ընկերության երկար տարիների գործունեությամբ:

<sup>12</sup> Alemu, Belachew Y. (2013). "Expropriation, Valuation and Compensation in Ethiopia," Academic Dissertation Thesis, Royal Institute of Technology, Stockholm, Sweden, p.45. Available at: <[https://www.kth.se/polopoly\\_fs/1.418707!/Menu/general/column-content/attachment/Fil%20201%20Alemu%20final%20main%20text.pdf](https://www.kth.se/polopoly_fs/1.418707!/Menu/general/column-content/attachment/Fil%20201%20Alemu%20final%20main%20text.pdf)>, last accessed: April 14, 2015.

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 50:

<sup>14</sup> Lieblich, William C. (1991). "Determining the economic value of expropriated income-producing property in international arbitrations," *Journal of International Arbitration*, Vol. 8, No.1, p.61.

<sup>15</sup> Նույն տեղում:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 61-62:

4. Ընկերության լուծարումից և առանձին ակտիվների վաճառքից ստացվող եկամուտները:

Տնտեսական արժեքի էությունը երկու կարևոր խնդրի հետ է առնչվում<sup>17</sup>: Առաջինը՝ տնտեսական արժեքի որոշումը, պետք է ներառի այն սպասումները, որոնք առնչվում են ապագայի հետ, ինչն էլ իր հերին անորոշության հետ է կապված (իսկ այս ամենը այլընտրանք չունի, քանի որ ակտիվի արժեքից հնարավոր չէ տարանջատել սպասումները, և այդ պատճառով անորոշությունը պետք է հաշվի առնել ապագային վերաբերող գնահատականները տալիս): Ինչ վերաբերում է երկրորդ խնդրին, ապա քանի որ ապագային վերաբերող գնահատականները ժամանակ առ ժամանակ փոխվում են, հետևաբար փոխվում է նաև ակտիվի արժեքը, և այստեղից էլ պարզ է դառնում որ արժեքը չի կարող համարվել ստատիկ հասկացություն, և այս պարագայում եթե որոշվում է որևէ գույքի արժեքը, ապա այն վերաբերում է որոշակի ժամանակի պահին (օրինակ՝ էքսպրոպրիացիայի պահին՝ հաշվի առնելով առկա տեղակտվությունը): Այս դեպքում ըստ Լիբլիխի (1991թ.), արժեքի գնահատման ամենահարմար մեթոդը համարվում է դիսկոնտավորված դրամական հոսքերի մեթոդը, քանի որ դրա նպատակն է հաշվարկել տարրեր ժամանակահատվածներում ակնկալվող դրամական հոսքերի արժեքը ժամանակի որշակի պահին (գնահատման պահին)<sup>18</sup>:

Ըստ Լիբլիխի (1991թ.), եկամտի աղբյուր հանդիսացող կամ եկամուտ ապահովող գույքի էքսպրոպրիացիայի վերաբերյալ դատական հայցերի ժամանակ որպես տնտեսական արժեքի գնահատման այլընտրանք հանդիս են զայխ հաշ-

<sup>17</sup> Lieblich, William C. (1991). "Determining the economic value of expropriated income-producing property in international arbitrations," *Journal of International Arbitration*, Vol. 8, No.1, pp. 62-63.

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 72:

վեկշռային արժեքը (book value) և փոխարինման արժեքը (replacement value)՝ որոնք կարող են նաև համարվել այլնտրանքային փոխհատուցման տեսություններ կամ էլ պարզապես արժեքի որոշման ավելի հարմար մերողներ՝<sup>19</sup>:

Ինչ վերաբերում է Թուրքիայում հայերի կողմից տնօրինվող հողի և այլ տեսակի գույքի կամ սեփականության էքսպրայրիացիային, ապա դրանք վերցվել կամ առգրավվել են անօրինական կերպով բռնի ոչնչացման ամենավատ տեսակի՝ ցեղասպանության միջոցով՝<sup>20</sup>։ Թուրքիայի կառավարությունը ընդունեց «ըրյալ գույքերի» մասին օրենքները հայկական շարժական և անշարժ գույքի էքսպրայրիացիան ֆորմալացնելու և իրավական իհմնավորում տալու նպատակով՝<sup>21</sup>։ Արդարության ցանկացած պարզ հասկացություն (կոնցեպցիա) միանշանակ պաշտպանում է այն տեսակետը, որ այդ ամբողջ գույքը պետք է վերադրածվեր կամ դրա դիմաց վճարվեր փոխհատուցում Հայոց ցեղասպանությունից հետո՝<sup>22</sup>:

Ըստ Մարրենի, էքսպրայրիացիայի համատեքստում առանձնակի ուշադրություն է դարձվում փոխհատուցմանը, սակայն դարեր շարունակ հարցը հետևյալն է՝ ո՞ր դեպքերում

և ի՞նչ չափով պետք է տրամադրվի փոխհատուցում<sup>23</sup>։ Ինչ վերաբերում է Օսմանյան կայսրության կամ Թուրքիայի Հանրապետության կողմից էքսպրայրիացված հայկական գույքի պաշտպանությանը, ապա ըստ հեղինակի այստեղ կարող է տեղին լինել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի առաջին արձանագրության հոդված 1-ը՝<sup>24</sup>։ Կոնվենցիայի առաջին արձանագրության «Սեփականության պաշտպանություն» հոդված 1-ում նշվում է հետևյալը՝ «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավարամական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք։ Ոչ որի չի կարելի գրկել իր գույքից, բացառությամբ՝ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով։ Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության այնպիսի օրենքների կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում՝ իր հիմնական շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի, կամ մյուս սուրբերի, կամ սուզանքների վճարումն ապահովելու համար»<sup>25</sup>:

Թուրքիան վավերացրել է այդ կոնվենցիան 1954թ., իսկ Հայաստանը՝ 2002թ.<sup>26</sup>։ Մարրեն (2014թ.), իհմք է ընդունել այն փաստը, որ այս կոնվենցիան չի կարող տարածվել պետու-

<sup>19</sup> Lieblich, William C. (1991). “Determining the economic value of expropriated income-producing property in international arbitrations,” *Journal of International Arbitration*, Vol. 8, No.1, p.64.

<sup>20</sup> Alfred de Zayas, Jermaine McCalpin, Ara Papian, and Henry Theriault (2015). “Resolution with Justice: Reparations for the Armenian Genocide,” The Report of the Armenian Genocide Reparations Study Group, p.70. Available at: <www.armeniangenocidereparations.info>, last accessed: April 13, 2015.

<sup>21</sup> Նոյն տեղում (Baghdjian, *The Confiscation of Armenian Properties*, pp. 83-101, 166-174 (see Note 38); Akçam, “The Spirit of the Law” (see Note 191).):

<sup>22</sup> Alfred de Zayas, Jermaine McCalpin, Ara Papian, and Henry Theriault (2015). “Resolution with Justice: Reparations for the Armenian Genocide,” The Report of the Armenian Genocide Reparations Study Group, pp.70-71. Available at: <www.armeniangenocidereparations.info>, last accessed: April 13, 2015.

<sup>23</sup> Marboe, Irmgard (2014). “Compensation and Damages in International Law and their Relevance for the Valuation of Expropriated Armenian Property,” *International Criminal Law Review*, Volume 14, Issue 2, p.409.

<sup>24</sup> Նոյն տեղում, էջ 413:

<sup>25</sup> Article 1 of Protocol to the Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms to the European Convention of Human Rights, <http://www.echr.coe.int/Documents/Convention\_ENG.pdf>, last accessed: April 4, 2015, <http://www.coe.am/docs/signedandratified/009.pdf>, Վերջին մուսոր՝ ապրիլի 5, 2015թ.:

<sup>26</sup> The European Court of Human Rights, Council of Europe, available at: <http://www.echr.coe.int/Documents/CP\_Turkey\_ENG.pdf>, <http://www.echr.coe.int/Documents/CP\_Armenia\_ENG.pdf> last accessed: April 11, 2015.

թյան կողմից կատարված այն գործողությունների վրա, որոնք տեղի են ունեցել նախքան պետության կողմից այդ կոնվենցիայի վավերացումը, ինչպես նաև այն հանգամանքը, որ 1915թ. և դրան հաջորդող տարիներին հայերի նկատմամբ կատարված Թուրքիայի կողմից չի կարող քննվել Եվրոպական կոնվենցիայի շրջանակում, առաջարկում է ներքո նշյալ սցենարը<sup>27</sup>: Եթե հնարավոր լինի ցույց տալ, որ Թուրքիան երազուարիացիա չի իրականացրել հայերի ունեցվածքի հանդեպ այդ պահին, բայց ավելի ուշ ժամանակահատվածում (օրինակ՝ պետությունը համապատասխան սեփականությունը շատ ավելի երկար ժամանակահատվածի ընթացքում պահել է իր մոտ և չի տնօրինել այդ ունեցվածքը), ապա կոնվենցիայի սեփականության իրավունքը կարող է կիրառվել այս պարագայում<sup>28</sup>: Մարրոն նշում է, որ քաղաքացիների սեփականության, ունեցվածքի պաշտպանությունը պետության օրենսդրությամբ է կանոնակարգվում և ոչ թե միջազգային իրավունքի առարկա է, ինչպես նաև փաստում է, որ մասնավոր սեփականության պաշտպանությունը կարող է իրականացվել կամ կիրարկվել միջազգային իրավունքի ներքո՝ համաձայնագրերի միջոցով (օրինակ՝ մարդու կամ ազգային փոքրամասնությունների իրավունքների ներքո), իսկ այս եղանակով քաղաքացիների մասնավոր սեփականության պաշտպանությունը չի համարվում երկրի ներին խնդիր, այլ՝ միջազգային պարտավորություն և արդի փուլի համատեքստում դա կարող է տեղի ունենալ Մարդու իրավունքների նկատմամբ կոնվենցիայի շրջանակներում, եթե երազուարիացիան տեղի է ունեցել 1954թ.-ից հետո: Իսկ ինչ

<sup>27</sup> Marboe, Irmgard (2014). “Compensation and Damages in International Law and their Relevance for the Valuation of Expropriated Armenian Property,” International Criminal Law Review, Volume 14, Issue 2, pp.413-414.  
<sup>28</sup> Նույն տեղում, էջ 414.:

վերաբերում է այլ համաձայնագրերին (հայերի ունեցվածքի միջազգային պաշտպանության նպատակով), Մարրոն առաջարկում է իհմք ընդունել 1878թ. Բեռլինի (հոդված 61) կամ էլ 1923թ. Լոզանի (հոդված 37-45) համաձայնագրերը՝ պետության կողմից մասնավոր սեփականության երազուարիացիա անելու պետության իրավունքի սահմանափակման տեսանկյունից<sup>29</sup>: Ինչ վերաբերում է փոխսհատուցմանը, ապա Մարրոն նշում է, որ փոխսհատուցումն երազուարիացիայի համատեքստում համարվում է օրինական երազուարիացիայի նախապայման և դա չի համարվում պետության կողմից կատարված անօրինական գործողություն, իսկ անկախ նրանից թե երազուարիացիան օրինական է, թե ոչ՝ պետք է վճարվի փոխսհատուցում<sup>30</sup>:

Մարրոն նաև դիտարկում է Միջազգային իրավունքի հանձնաժողովի (ՄԻՀ) կողմից արձանագրած Միջազգային իրավունքի համաձայն պետությունների կողմից կատարած անօրինական գործողությունների նկատմամբ միջազգային պատասխանատվության հոդվածների համատեքստում փոխսհատուցման դերը որպես «ուղարացիայի» մի տեսակ պետության կողմից անօրինական գործողություն կատարելուց հետո՝ իհմնվելով այնտեղ նշված կանոնի վրա, որի համաձայն պետությունը համարվում է պատասխանատու միջազգային օրենքի համաձայն, եթե «նրա գործողությունը կամ բացքողությունը վերագրվում է պետությանը միջազգային օրենքով և համարական է այդ պետության միջազգային պարտավորության խախտում»<sup>31</sup>:

<sup>29</sup> Marboe, Irmgard (2014). “Compensation and Damages in International Law and their Relevance for the Valuation of Expropriated Armenian Property,” International Criminal Law Review, Volume 14, Issue 2, p.414.  
<sup>30</sup> Նույն տեղում, էջ 415:  
<sup>31</sup> Նույն տեղում, էջ 414:

ՄԻՀ-ի կողմից արձանագրած հոդվածների 31(1)-ում նշվում է, որ «Պատասխանատու պետությունը պարտավոր է ամբողջական ռեպարացիա տրամադրել այն վճարի դիմաց, որը տեղի է ունեցել միջազգային օրենքի համաձայն անօրինական գործողության պատճառով», իսկ 34-ում՝ «Միջազգային օրենքի համաձայն անօրինական գործողության պատճառով վճարի դիմաց ամբողջական ռեպարացիան պետք է լինի ռեստիտուցիայի, փոխհատուցման և սատիսֆակցիայի ձևով՝ կամ դրամցից որևէ մեկի տեսրով կամ էլ դրանց համակցությամբ այս գլխում նշված դրույթների համաձայն»<sup>32</sup>: Մարդուն իմք ընդունելով այդ հոդվածները պարզաբնում է ռեստիտուցիայի իմաստը, որը համարվում է «status quo ante»-ի վերականգնում՝ իրավիճակ, որը գոյություն ուներ նախքան անօրինական գործողությունը, և որի ուշադրության կենտրոնում փաստացի իրավիճակն է և պահանջում է վերականգնում այնքանով որքանով դա հնարավոր է, իսկ դրա ձևերից են նյութական վիճակի վերականգնումը, մարդկանց կամ սեփականության վերադարձը, որոշ օրենսդրական ակտերի չեղարկումը կամ դրանց համակցությունը»<sup>33</sup>: Իսկ ՄԻՀ-ի կողմից արձանագրած հոդվածների 40(1)-ում<sup>34</sup> նշվում է «Պետությունը, որը պատասխանատու է իր կողմից կատարած մի-

<sup>32</sup> Annex to General Assembly resolution 56/83 of 12 December 2001, and corrected by document A/56/49(Vol. I)/Corr.4., Responsibility of States for Internationally Wrongful Acts, Available at: <[http://legal.un.org/ilc/texts/instruments/english/draft%20articles/9\\_6\\_2001.pdf](http://legal.un.org/ilc/texts/instruments/english/draft%20articles/9_6_2001.pdf)>, last accessed: April 4, 2015.

<sup>33</sup> Marboe, Irmgard (2014). “Compensation and Damages in International Law and their Relevance for the Valuation of Expropriated Armenian Property,” International Criminal Law Review, Volume 14, Issue 2, pp.415-416.

<sup>34</sup> Annex to General Assembly resolution 56/83 of 12 December 2001, and corrected by document A/56/49(Vol. I)/Corr.4., Responsibility of States for Internationally Wrongful Acts, Available at: <[http://legal.un.org/ilc/texts/instruments/english/draft%20articles/9\\_6\\_2001.pdf](http://legal.un.org/ilc/texts/instruments/english/draft%20articles/9_6_2001.pdf)>, accessed: April 4, 2015.

ջազգայնորեն անօրինական համարվող գործողության համար պարտավոր է փոխհատուցելու իր կողմից պատճառած վճարը միայն այն չափով, որով հնարավոր չէ հատուցել ռեստիտուցիայի միջոցով»: Հիմք ընդունելով ՄԻՀ-ի կողմից արձանագրած հոդվածները Մարդուն վկայում է<sup>35</sup>, որ դրանց համատեքստում փոխհատուցումը համարվում է պետության երկրորդային պարտավորություն միջազգային իրավունքի համաձայն, ինչն էլ համարվում է անօրինական, սխալ գործողության դիմաց ֆինանսական հատուցում (redress), քանի որ առաջնայինը ռեստիտուցիան է համարվում և փոխհատուցում տրվում է այն դեպքերում, եթե ռեստիտուցիան բավարար չէ ամբողջական ռեպարացիայի պահանջից ելնելով: Հեղինակը, իմք ընդունելով Քրոռուֆորդի տեսակետը այն մասին, որ ռեստիտուցիան հաճախ բավարար չէ կամ չի տրամադրվում, և որ պետությունը, ում վճար են հասցեել, նախընտրում է փոխհատուցումը նույնիսկ ռեստիտուցիայի պարագայում (ամբողջական ռեպարացիայի դեպքում), առանձնացնում է վճարը (ամբագրված երկրների օրենսդրությամբ (անզերենով՝ damage)), որը պահանջում է ֆինանսական հատուցում պարտավորությունները խախտելու դեպքում: Մարդուն նաև պարզաբնում է, որ վճարները վերաբերում են անօրինական գործողությանը, ինչն էլ տարրերվում է փոխհատուցման իմաստից, որը տրամադրվում է էքսայլուարիացիայի ժամանակ (հատկապես օրինականի դեպքում): Այդ իսկ պատճառով մի շարք հեղինակներ նշում են, որ անհրաժեշտ է էքսայլուարիացիայի համատեքստում տարրերել փոխհատուցումը վճարներից,<sup>36</sup> իսկ Ամերասինդեն<sup>37</sup> նշում է, որ բոլոր դեպքերում ան-

<sup>35</sup> Marboe, Irmgard (2014). “Compensation and Damages in International Law and their Relevance for the Valuation of Expropriated Armenian Property,” International Criminal Law Review, Volume 14, Issue 2, p.416.  
<sup>36</sup> Նույն տեղում, էջ 416-417:

հրաժեշտ է տարբերություն դնել սեփականության օրինական օտարման և անօրինական ձևով այն առզրավելու (վերցնելու) միջև, քանի որ առաջինի դեպքում պետք է տրվի փոխհատուցում (օտարին), իսկ երկրորդի պարագայում՝ վճասի հատուցում, իսկ նրանց միջև տարբերությունը այն է, որ վճասների դեպքում հատուցման չափը ավելի մեծ է լինում, քան եթե տրվում է փոխհատուցում: Մարդուն եղահանգել է, որ մինչ փոխհատուցումն էքսպրոպրիացիայի համատերատում համարվում է առաջնային պարտավորություն միջազգային իրավունքի համաձայն, ապա կորուսները և փոխհատուցումը (որպես ռեպարացիայի մի տեսակ) նույն միջազգային իրավունքի տեսանկյունից երկրորդային պարտավորություն է, իսկ վճասների և փոխհատուցման տարբերությունը ոչ միայն տերմինների տարբերություն է, այլ նաև հասկացությունների, և հետևաբար փոխհատուցման և վճասների հատուցման ֆինանսական գնահատականը պետք է լինի տարբեր<sup>38</sup>:

Այժմ որպես էքսպրոպրիացված ունեցվածքի փոխհատուցման ստանդարտ<sup>39</sup> սահմանվում է «արդարացի շուկական արժեքը», որն էլ սահմանվում է որպես «գին, որն ար-

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 417 (Amerasinghe, C. F. (1992). "Issues of Compensation for the Taking of Alien Property in the Light of Recent Cases and Practice", *International and Comparative Law Quarterly*, Volume 41, Issue 01, pp.22, 37-38.):

<sup>38</sup> Marboe, Irmgard (2014). "Compensation and Damages in International Law and their Relevance for the Valuation of Expropriated Armenian Property," *International Criminal Law Review*, Volume 14, Issue 2, p.417.:

<sup>39</sup> Նույն տեղում, էջ 419 (American Society of Appraisers, 'ASA Business Valuation Standards', quoted in *CMS Gas Transmission Company v. Argentina*, 12 May 2005, International Centre for Settlement of Investment Disputes, no. ARB/01/8, para. 402, <[https://icsid.worldbank.org/ICSID/FrontServlet?requestType=CasesRH&actionVal=showDoc&docId=DC504\\_En&caseId=C4>](https://icsid.worldbank.org/ICSID/FrontServlet?requestType=CasesRH&actionVal=showDoc&docId=DC504_En&caseId=C4>), 25 October 2013. See also *Azurix v. Argentina*, July 2006, International Centre for Settlement of Investment Disputes Case, ARB/01/12, para. 424, <<http://italaw.com/documents/AzurixAwardJuly2006.pdf>>, 25 October 2013; American Institute of Certified Public Accountants *et al.*, 'International Glossary of Business Valuation Terms (2001)', <<http://www.bvresources.com/FreeDownloads/IntGlossaryBVTerms2001.pdf>>, 25 October 2013.):

տակայութում է դրամական համարժեքով, և որի դեպքում գույքը մի ձեռքից մյուս ձեռք կանցնի իիփորերիկ ցանկացող և վճարումակ զնորդին իիփորերիկ կամեցող վաճառողից, որոնք ոչ մի ազնեցուրյուն չեն կարող ունենալ միմյանց վրա և անկախ են միմյանցից քաց և ազատ շուկայական պայմաններում, եթե նրանցից ոչ ոք պարտադրված չէ զնելու կամ վաճառելու այդ գույքը, եթե երկուսն էլ իրազեկված են և տիրապետում են համապատասխան փաստերին»: Մարդուն նշում է, որ արդարացի շուկայական արժեքը ենթադրում է «օրյեկտիվ» գնահատում, իսկ սեփականության կամ գույքի արժեքը պետք է գնահատվի էքսպրոպրիացիայի պահին, կամ անմիջապես դրանցից առաջ կամ էլ նախքան էքսպրոպրիացիայի վերաբերյալ որոշման իրապարակելը, ինչն էլ համարվում է կարևոր հանգամանք այն առումով, որ հենց էքսպրոպրիացիայի փաստը (նախատեսվող էքսպրոպրիացիան) անմիջականորեն ազդում է շուկայում սեփականության կամ գույքի արժեքի վրա՝ ստվարաբար նվազեցնելով դրա արժեքը: Եվ ըստ նրա, եթե էքսպրոպրիացիայի պահը չի համընկնում փոխհատուցման վճարման ժամկետի հետ, ապա անհրաժեշտ է համապատասխան տոկոսավճարները գումարել փոխհատուցման գումարին, իսկ տոկոսադրույթի որոշմամբ հնարավոր կլինի հնարավորինս մոտենալ այն գումարին, որը կարող էր լինել սեփականատիրոջ տրամադրության տակ եթե փոխհատուցվեր էքսպրոպրիացիայի ժամանակ, իսկ եթե բավականին երկար ժամանակ է անցել, որպես տոկոսադրույթ հանդիս է զայլս այն դրույքաշափը, որն արտացոլում է գնաճը<sup>40</sup>:

<sup>40</sup> Marboe, Irmgard (2014). "Compensation and Damages in International Law and their Relevance for the Valuation of Expropriated Armenian Property," *International Criminal Law Review*, Volume 14, Issue 2, pp.419-420.:

Ինչ վերաբերում է Թուրքիայի կողմից հայերի ունեցվածքի էքսպրոպրիացիային, Մարբոն նշում՝<sup>41</sup>, որ եթե որպես էքսպրոպրիացիայի տարերիվ ընտրվում է 1915թ., ապա զնահատման գործընթացը բավականին բարդ կարող է լինել այն առումով, որ նախ անհրաժեշտ է որոշել 1915թ. դրույյամբ գույքի արժեքը, այնուհետ այդ գումարին ավելացնել համապատասխան տոկոսավճարը, իսկ այդ ժամանակահատվածը բավականին երկար է և այդ ընթացքում մի շաբթ կարեն իրադարձություններ են տեղի ունեցել (ներառյալ արժուքային բարեփոխումները և 2 համաշխարհային պատերազմները) և ըստ էության «օրյեկտիվ գնահատման» պատրվակով այս զնահատումը կարող է հանդիս զալ որպես արհեստական մի վարժություն, քանի որ միջազգային իրավագիտության մեջ մինչ այժմ հիմնականում քննվել են էքսպրոպրիացիայի այն դեպքերը, որոնք տեղի են ունեցել մի քանի տասնամյակ ոչ քե 100 տարի առաջ։ Հաշվի առնելով այս ամենը Մարբոն առաջարկում է այլնոտրանքային մոտեցում, որը դիտարկում է գույքի, սեփականության ընթացիկ արժեքը, իսկ վերջինս էլ կարող է հնարավորինս մոտ լինել ուստիսուցիայի կամ էլ «ամբողջական ռեպարացիայի» չափին, ինչն էլ ամեն դեպքում համարվում է ճիշտ մոտեցում այն դեպքերում, եթե էքսպրոպրիացիան եղել է «անօրինական»։ Ըստ Մարբոնի, անօրինական գործողության հետևանքով վճարի հատուցման համար, ընդիանուր առմամբ անհրաժեշտ է վերականգնել տուժող ֆինանսական վիճակը՝ այն դիրքը, որը նա կունենար, եթե տեղի չունենար անօրինական գործողություն, ինչն էլ հայտնի է որպես «ամբողջական ռեպարացիայի» սկզբունք<sup>42</sup>։

<sup>41</sup> Marboe, Irmgard (2014). “Compensation and Damages in International Law and their Relevance for the Valuation of Expropriated Armenian Property,” International Criminal Law Review, Volume 14, Issue 2, p. 420.

<sup>42</sup> Նույն տեղում, էջ 421.

ՄԻՀ-ի կողմից արձանագրած հոդվածների 36-ում<sup>43</sup> նշվում է. «1. Այն պետությունը, որը պատասխանատու է միջազգայնուն անօրինական գործողության համար պարտավոր է վիլյուհատուցելու այն վճարի համար, որն այդ գործողությամբ է պատճառվել՝ այն չափով, որով հնարավոր չէ հատուցել ուստիսուցիայի միջոցով։ 2. Փոխհատուցումը պետք է ներառի ցանկացած ֆինանսավես զնահատելի, չափելի հատուցում՝ ներառյալ բաց քողած շահույթը, այն չափով որով այն սահմանվել է։» Այսուղ Մարբոն նշում է, որ այդ գործառույթը միայն վիլյուհատուցող բնույթը է կրում և նախատեսված չէ որպես պատիժ պատասխանատվություն կրող պետության համար, ինչն էլ բխում է միջազգային իրավական համակարգի հորիզոնական բնույթից<sup>44</sup>։ Ըստ հեղինակի, ՄԻՀ-ը ժխտում է «պատժում» (penalization) գաղափարը, որը կիրառվում միջազգային իրավունքի մեջ, և այն սահմանափակվել է միայն հատուցման (redress) գոյություն ունեցող սկզբունքները և ձևերը շարադրելով եթե պետության կողմից տեղի է ունենում անօրինական գործողություն։

Հասցված վճարը զնահատելու համար, ըստ Մարբոնի անհրաժեշտ է համեմատել տուժողի երկու իրավիճակները (իրավիճակ առանց այդ արարքի և այդ արարքի պարագայում), իսկ այս մերողը պարզապես չի համարվում «օրյեկտիվ գնահատում», այլ հաշվի է առնում տուժողի կոնկրետ իրավիճակը։ Իսկ ինչ վերաբերում է զնահատման տարեթվին, ապա ըստ հեղինակի ռեստիսուցիայի առաջնահերթությունը նշա-

<sup>43</sup> Annex to General Assembly resolution 56/83 of 12 December 2001, and corrected by document A/56/49(Vol. I)/Corr.4., Responsibility of States for Internationally Wrongful Acts, <[http://legal.un.org/ilc/texts/instruments/english/draft%20articles/9\\_6\\_2001.pdf](http://legal.un.org/ilc/texts/instruments/english/draft%20articles/9_6_2001.pdf)>, accessed: April 4, 2015.

<sup>44</sup> Marboe, Irmgard (2014). “Compensation and Damages in International Law and their Relevance for the Valuation of Expropriated Armenian Property,” International Criminal Law Review, Volume 14, Issue 2, p.422.

նակում է այն, որ դա պետք է հնարավորինս մոտ լինի վերջինիս վճարման, տրման տարեթվին<sup>45</sup>: Մարրոեն տարրերություն է դնում օրինական էքսպրոպրիացիայի ժամանակ փոխհատուցման չափի որոշման (եթե գույքի արժեքը պետք է որոշվի էքսպրոպրիացիայի պահին) և դրա փաստացի վճարման միջև (ներառյալ անօրինական էքսպրոպրիացիայի դեպքերը), հատկապես եթե էքսպրոպրիացված ունեցվածքի արժեքը նվազել է էքսպրոպրիացիայի պահից ի վեր (իսկ ֆինանսական հատուցումը անօրինական գործողության դեպքում չի կարող պակաս լինել, քան սկզբնական նորմով երաշխավորված չափն է)<sup>46</sup>: ՄԻՀ-ի կողմից արձանագրած հոդվածների 38(1)-ում<sup>47</sup> նշվում է. «Ամրողական ռեպարացիայի համար այս գլխի ներքո անհրաժեշտ է վճարել նաև տոկոսավճար, եթե անհրաժեշտ է: Տոկոսադրույթի, ինչպես նաև հաշվարկի մեջ պետք է լինի այնպիսին, որը հնարավորություն կտա հասնելու այդ արդյունքին»: Մարրոեն պարզաբնում է<sup>48</sup>, որ տոկոսը հաշվարկվում է այն պահից սկսած, եթե պետք է տրամադրված լիներ մայր գումարը մինչև այն պահը, եթե վճարելու պարտավորությունը համարվում է միանգամայն բավարարված կամ կատարված, իսկ ինչ վերաբերում է ամրողական ռեպարացիայի այս սկզբունքին, ապա այն կարող է կիրառվել հայերի դեպքում (նրանք եղել են էքսպրոպրիացիա կատարած երկրի քաղաքացիներ, և այդ սկզբունքը հան-

<sup>45</sup> Marboe, Irmgard (2014). “Compensation and Damages in International Law and their Relevance for the Valuation of Expropriated Armenian Property,” International Criminal Law Review, Volume 14, Issue 2, pp. 422-423.

<sup>46</sup> Նոյյան տեղում, լո 423:

<sup>47</sup> Annex to General Assembly resolution 56/83 of 12 December 2001, and corrected by document A/56/49(Vol. I)/Corr.4., Responsibility of States for Internationally Wrongful Acts, <[http://legal.un.org/ilc/texts/instruments/english/draft%20articles/9\\_6\\_2001.pdf](http://legal.un.org/ilc/texts/instruments/english/draft%20articles/9_6_2001.pdf)>, accessed: April 4, 2015.

<sup>48</sup> Marboe, Irmgard (2014). “Compensation and Damages in International Law and their Relevance for the Valuation of Expropriated Armenian Property,” International Criminal Law Review, Volume 14, Issue 2, p.423.

դիսանում է ընդհանուր սկզբունք, որն արտացոլված է տարբեր պետությունների օրենսդրական ակտերում (որպես անօրինական գործողության համար համապատասխան հատուցում):

Մարրոեն փաստարկների հիման վրա, որոնք հիմվում են միջազգային իրավական նորմերի վրա, պարզ է դառնում, որ ամրողական ռեպարացիայի տեսակյունից, եթե ռեստիտուցիան բավարար չէ, ապա պետք է տրվի փոխհատուցում գումարած տոկոսավճարներ էքսպրոպրիացված գույքի դեպքում: Հայոց Ցեղասպանության հատուցումների ուսումնասիրման խումբը (2015թ.) հայկական էքսպրոպրիացված գույքի հարցում նման տեսակետ է առաջ քաշել, որ հողը, շինությունը և այլ անշարժ և շարժական գույքը, որը էքսպրոպրիացվել է ցեղասպանության տարբեր փուլերի ընթացքում պետք է վերադարձվի (եթե դեռ կանգուն է կամ չի ավիրվել) և դրա դիմաց պետք է վճարել փոխհատուցում, եթե այդ գույքը առկա չէ: Ինչ վերաբերում է մասնավոր ընկերություններին և եկամտի աղբյուր հանդիսացող գույքին, որն էքսպրոպրիացվել է, պետք է նույնականացնել վերադարձվի, եթե գոյություն ունի, կամ էլ դրանց դիմաց պետք է վճարվի փոխհատուցում: Նշված սեփականության պարագայում, եթե նախատեսված է ռեպարացիա, անհրաժեշտ է տրամադրել «*suisfructus*» փոխհատուցում՝ որը ներառում է գնածը, համեմատելի տոկոսավճարը և այլն<sup>49</sup>:

Գույքի արժեքը որոշելու համար կարող են կիրառվել տարբեր մեթոդներ, որոնցից հիմնականը երեքն են, որոնց էլ

<sup>49</sup> Alfred de Zayas, Jermaine McCalpin, Ara Papian, and Henry Theriault (2015). “Resolution with Justice: Reparations for the Armenian Genocide,” The Report of the Armenian Genocide Reparations Study Group, p.125. Available at: <[www.armeniangenocidereparations.info](http://www.armeniangenocidereparations.info)>, last accessed: April 13, 2015.

Մարքուն անդրադարձել է հիմնականում էքսպրոպրիացված հայերի գույքի տեսանկյունից<sup>50</sup>:

1. «*«Ծովայակած արժեքի վրա հիմնված մոտեցում»* (market-based approach): Այս գնահատման մոտեցումը ամենատարածվածն է, որի հիմքում շուկայի հանդեպ վստահությունն է, որտեղ իրար են հանդիպում բազմաթիվ գնորդներ և վաճառողների ապրանքների փոխանակման նպատակով, իսկ շուկայի մասնակիցների քանակը (մեծ քանակը) այն երաշխիքն է, որ առարկայի արժեքի վերաբերյալ «սուրյեկտիվ» ընկալումները հավասարակշռվում են, և այս ձևով սահմանվում է «արդարացի» կամ «օրյեկտիվ» գինը, իսկ որպես մերողներ կիրառվում են արժեքրերի գները, նախկին գործարքները, համարելի կամ համեմատվող վաճառքը, մասնակի վաճառքը կամ ել «քազմարկիչ» («քազմարկչի» (multiplier) մերողով ակտիվի արժեքի որոշման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ ցուցանիշները՝ ընկերության դրամական հոսքերը, հասույթը, համախառն և զուտ շահույթը, հարկերը, ամորտիզացիան և քազմապատկել այն որոշակի գործակցով, որն էլ ստացվում է համապելի, համեմատելի ընկերության վաճառքի գումարից): Իսկ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս մոտեցման հիմքում մեծ թվով գնորդների և վաճառողների առկայությունն է, ինչպես նաև առարկան պետք է լինի համեմատելի շուկայում առկա այլ առարկաների հետ, որպեսզի պոտենցիալ գնորդը կարողանա համեմատություն առնել և ընտրություն կատարել, Մարքուն կարծում է, որ այս պայմանները հաճախ հնարավոր չեն քավարարել անշարժ

<sup>50</sup> Marboe, Irmgard (2014). “Compensation and Damages in International Law and their Relevance for the Valuation of Expropriated Armenian Property,” International Criminal Law Review, Volume 14, Issue 2, pp.423-426.

գույքի, ընկերությունների և եկեղեցու գույքի կամ սեփականության դեպքում<sup>51</sup>:

2. «*«Եկամտի վրա հիմնված մոտեցում»* (income-based approach): Այս մոտեցմանը գույքի կամ ակտիվի արժեքը որոշվում է ապագայում ստացվող կամ ել ակնկալվող եկամուտների հիման վրա, որը սեփականատերը կարող էր ստեղծել այդ ակտիվի շահագործմանը կամ ել վերջինիս օգտագործման միջոցով): Այս մոտեցման գնահատման համապատասխան մերողներն են՝ զուտ ներկա արժեքը (net present value (NPV)), դիսկոնտավորված դրամական հոսքերը (discounted cash flow (DCF)) և ճգործված ներկա արժեքը, սակայն ըստ Մարքունի այս մոտեցումները միջազգային դատարանների և տրիբունալների կողմից ընդունվել են որոշակի թերահավատությամբ՝ հաշվի առնելով այս մոտեցումների «սպեկուլյատիվ բնույթը», քանի որ ոչ ոք չի կարող կանխատեսել ապագան, և այդ իսկ պատճառով կասկածելի է թվում այն հանգամանքը, որ այդ դատարանները և տրիբունալները որպես հիմք կընդունեն այս մոտեցման միջոցով ակտիվի գնահատված արժեքը, թեպես մյուս կողմից այս մոտեցումը լայն կիրառություն է գտել տնտեսական գործունեության ժամանակ կիրառվող վերլուծությունների և գնահատումների ժամանակ<sup>52</sup>:
3. «*«Ակտիվների վրա հիմնված մոտեցում»* (asset-based approach): Ըստ այս մոտեցման ակտիվի արժեքը լավագույնս կարելի է ներկայացնել իր բաղարիչների միջոցով, և այս մոտեցման մեջ ներառված են հետևյալ գնահատ-

<sup>51</sup> Marboe, Irmgard (2014). “Compensation and Damages in International Law and their Relevance for the Valuation of Expropriated Armenian Property,” International Criminal Law Review, Volume 14, Issue 2, p.424.

<sup>52</sup> Նոյն տեղում:

մաս մերողներ՝ հաշվեկշռային կամ արժեքը (book value), փոխարինման արժեքը (replacement value) կամ լուծարային արժեքը (liquidation value) հիման վրա<sup>53</sup>:

Համապատասխան գնահատման մոտեցման ընտրությունը կախված է ակտիվի տեսակից և որոշ դեպքերում կարող է մեկից ավելի մոտեցում օգտագործվել և յուրաքանչյուրն էլ ճշգրտվի մյուսի միջոցով, սակայն ինչ վերաբերում է եկեղեցական տարածքներին և գույքին, որոնք էական նշանակություն ունեն հայկական գույքի դեպքում, ապա ըստ Մարքոնի խորհուրդ է տրվում օգտագործել տարրեր մոտեցումների համակցությունը, կամ դրանց մոդիֆիկացված տարրերակը: Եվ դրա բացատրությունը, ըստ հեղինակի կայանում է նրանում, որ շուկայական արժեքի վրա հիմնված մոտեցման կիրառմամբ հնարավոր է գնահատել և պարզել, թե ինչ զնով հնարավոր կլինի վաճառել համապատասխան անշարժ գույքը, սակայն այս մոտեցմամբ առաջնորդվելիս անտեսվում է գույքի կրոնական արժեքը և միայն հնարավոր կլինի պարզել համապատասխան շինությունների և հողի արժեքը (հակառակ դեպքում հնարավոր չի լինի պարզելու շուկայական արժեքը, քանի որ եկեղեցական տարածքների համար դժվար կլինի համապատասխան շուկա սահմանել՝ բավարար քանակով վաճառողներ):

Մարքոն նաև նշում է, որ եկամտի վրա հիմնված մոտեցումը չի կարող (խորհուրդ չի տրվում) կիրառվել եկեղեցական գույքի պարագայում, քանի որ որպես այդպիսին եկեղեցական տարածքները նախատեսված չեն իրենց սեփականատերերի համար եկամուտ ապահովել, և հայտնի չեն այդ գույքը այլ կերպ օգտագործվեր ինչպիսի եկամուտ կա-

րող էր ապահովել: Սակայն այս մոտեցումը կարող է կիրառվել այլ էքսպրոպիացված ունեցվածքի պարագայում, ինչպիսին են, օրինակ, բնակելի շենքերը, հյուրանոցները և գյուղատնտեսական նշանակության հողը<sup>54</sup>: Թեպետ Մարքոն առաջարկում է օգտագործել այս մոտեցումը բնակելի շենքերի, հյուրանոցների և գյուղատնտեսական նշանակության հողի պարագայում, սակայն վերջիններիս արժեքի գնահատումը գրեթե անիրատեսական է, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բավականին բարդ է կանխատեսել ինչպիսի՞ն կլինեին նշված ակտիվների ապագա դրամական հոսքերը: Եթե դիտարկենք բնակելի շենքը, որը սեփականատիրոջ համար վարձակալությունից ստացվող եկամուտների տեսքով կարող էր դրամական հոսքերի աղբյուր հանդիսանալ, ապա 1915թ.-ին այն ուժերը և գործոնները, որոնք ձևավորում էին շուկայական արժեքը, չեն կարող համեմատվել 2015թ. այդ գործոնների հետ (բացառելով այն հանգամանքը, որ այդ շենքը կարող էր կանգուն չլինել): Ինչ վերաբերում է հյուրանոցի կամ այլ տիպի մասնավոր ընկերությանը, ապա դրամական հոսքերի տեսանկյունից կարևոր հանգամանք է հանդիսանում մրցակցության առկայությունը, որն էլ որոշչ գործոն է ընկերության գործունեության ծավալման տեսանկյունից (միգուցե այդ ընկերությունը դադարեցրած լիներ իր գործունեությունը): Սյուս կողմից այս ակտիվների պարագայում 1916թ.-ից 100 տարի շարունակ ակնկալվող դրամական հոսքերի կանխատեսման համար անհրաժեշտ է հաշվի առնել բազմաթիվ գործոններ (բնակչության աճի տեմպ, տեխնոլոգիական առաջընթաց և այլն) և, հետևաբար, կանխատեսվող արժեքները կլինեն անհուսալի: Բնակելի շեն-

<sup>53</sup> Marboe, Irmgard (2014). "Compensation and Damages in International Law and their Relevance for the Valuation of Expropriated Armenian Property," International Criminal Law Review, Volume 14, Issue 2, p.425.

<sup>54</sup> Marboe, Irmgard (2014). "Compensation and Damages in International Law and their Relevance for the Valuation of Expropriated Armenian Property," International Criminal Law Review, Volume 14, Issue 2, p.425.

թերի և մասնավոր ընկերությունների պարագայում դրամական հոսքերի հոսալի կանխատեսումներ անելու համար նաև անհրաժեշտ է լինելու զանազան տեղեկատվություն և վիճակագրական տվյալների առկայություն, որոնք կարող են հասանելի չինել հատկապես ավելի վաղ ժամանակաշրջանի համար (հայ սեփականատեր ունեցող ընկերությունների ֆինանսական և թուրքիայի սոցիալ-տնտեսական զարգացմանը առնչվող ցուցանիշներ): Հետևարար, եկամտի վրա հիմնված մոտեցմամբ բնակելի շենքերի և մասնավոր ընկերությունների արժեքի որոշումը 100 տարվա կտրվածքով անհոսալի է: Գյուղատնտեսական նշանակության հողերի դեպքում այս գնահատման մոտեցմամբ առաջնորդվելիս անհրաժեշտ է լինելու բերքատվության ցուցանիշները, եթե ենթադրվեր, որ հայ գյուղացին միայն ցորեն էր ցանելու (բացառելով այն հանգամանքը, որ գյուղացին կարող էր սկսել աճեցնել ավելի բարձր եկամտի աղբյուր հանդիսացող մշակաբույս) այդ հողատարածքներում: Ուստի, եկամտի վրա հիմնված մոտեցումը չպետք է կիրառվի եկամտի աղբյուր հանդիսացող ակտիվների կամ ընկերությունների արժեքները գնահատելու համար:

Իսկ ինչ վերաբերում է ակտիվների վրա հիմնված մոտեցմանը, ապա Մարրոնն այն որպես այլ մոտեցումների հիման վրա գնահատված արժեքի և մեկ անգամ ստուգելու մոտեցում է ներկայացնում հատկապես եկեղեցական գույքի պարագայում, քանի որ այս դեպքում հարցը հետևյալն է՝ որքա՞ն կարժենար համապատասխան նմանատիպ հողի գնումը և դրա վրա նմանատիպ եկեղեցական շինության կառուցումը, սակայն այս ձևով անտեսվում է շենքի պատմական, մշակութային կամ գեղագիտական արժեքը<sup>55</sup>:

<sup>55</sup> Marboe, Irmgard (2014). "Compensation and Damages in International Law and their Relevance for the Valuation of Expropriated Armenian Property," International Criminal Law Review, Volume 14, Issue 2, p.425.

Ակտիվների վրա հիմնված մոտեցման լուծարային արժեքի մերողը կարող է կիրառվել մասնավոր ընկերությունների պարագայում: Հարցը կարող է լինել հետևյալը, թե որքա՞ն գումար սեփականատերը կարող էր ստանալ առանձին վերցված շենքերի, նյութական պաշարների, սարքավորումների վաճառքից: Այնուհետ անհրաժեշտ կլինի ճշգրտել այդ գումարները գնաճով ներկա արժեքը ստանալու համար: Սակայն այս եղանակով ընկերության արժեքի հաշվարկի համար անհրաժեշտ են լինելու ընկերության վերը թվարկված բաղադրիչ մասերի վերաբերյալ տվյալներ: Ինչ վերաբերում է այլ տիպի երաշտուագված գույքի արժեքի որոշմանը (բացառությամբ եկամտի աղբյուր հանդիսացող շարժական և անշարժ գույքի պարագայում (թեպետ, եթե հողը օգտագործվում է գյուղատնտեսական նպատակներով), և բնակելի շենքը կարող է վարձակալության տրվել) հուսալի հաշվարկի նպատակով դիտարկել միայն որպես առանձին վերցված գույք և ոչ թե որպես եկամտի աղբյուր հանդիսացող գույք), ապա այստեղ գնահատման մեկ տարբերակ է (տվյալների առկայության դեպքում՝ այդ գույքի 1915թ. արժեքի որոշումը և այն ճշգրտելով 2015թ. արժեքի որոշումը: Այնուհետ, պետք է փորձել գնահատել երաշտուագված գույքի 2015թ. շուկայական արժեքը և ուղարացիայի պահանջի տեսակետից ընտրել առավելագույն մեծությունը, ինչը առաջարկվում է Մարրոնի կողմից անօրինական երաշտուագվածի դեպքում<sup>56</sup>: Հայերի թուրքիայի կառավարության հետ համապատասխան գումարի վերաբերյալ քանակցություններ վարելու վերաբերյալ Մարրոնն առաջարկում է հետևյալ սկզբունքը: Երաշտուագվածի պահին գույքի արժեքը կարող է հանդիսացնել գալ որպես

<sup>56</sup> Marboe, Irmgard (2014). "Compensation and Damages in International Law and their Relevance for the Valuation of Expropriated Armenian Property," International Criminal Law Review, Volume 14, Issue 2, p. 426.

զնահատման սկզբնակետ, այնուհետ այդ գումարին պետք է ավելացնել համապատասխան տոկոսավճար, որը կարտացողի փողի արժեքը և գնաճը, իսկ երկար ժամանակահատվածի պատճառով և փոխված տնտեսական իրավիճակից ելնելով ճշգրտել միայն գնաճով: Այնուհետ այս գումարը պետք է համեմատել էքսպրոպրիացված գույքի ներկա արժեքի հետ, և որոշչը կիխի ավելի բարձր արժեքը, եթե էքսպրոպրիացիան եղել է անօրինական: Այնուհետ այս գումարին պետք է սկսել հաշվարկել համապատասխան տոկոսները մինչև այդ գումարների վճարման պահը<sup>57</sup>:

Էքսպրոպրիացված գույքի կտրվածքով թուրքիայից ամրողական ռեպարացիա պահանջելու համար անհրաժեշտ է էքսպրոպրիացված գույքի ամրողական ցանկը, ինչպես նաև տարբեր վիլայեթներում համապատասխան գույքի 1915թ. կամ 1914թ. գները, իսկ գույքի ցանկի ոչ ամրողական լինելու դեպքում ամրողական ռեպարացիան չի արտացոլի հայ ժողովրդի նյութական կորուստների ամրողական պատկերը: Ուստի, առաջնային է դառնում տարբեր հուշամատյանների, ինչպես նաև արխիվային տվյալների հիման վրա նյութական կարուստների ամրողական պատկերի լազմումը, որի հիման վրա կհաշվարկվի ամրողական ռեպարացիան:

## ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՇԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ ՃԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՈՒՄ

19-րդ դարի վերջը հայ ժողովրդի պատմության ամենասև էջերից մեկն էր: 1890-ական թթ. սկսված համիլյյան արյունոտ ջարդերին հաջորդեցին Արդու Համիլի քաղաքականություն ընդունած երիտրուքերի կողմից իրազործված հայերի ցեղասպանությունը, որի կազմակերպման և իրազործման մեջ իրենց դերակատարումն ունեցան երիտրուքական իշխանության մի շարք պարագույններ, ինչպիսիք էին ռազմական նախարար Էնվերը, ներքին գործերի նախարար Թալեարը, դղկոտր Նազրմը, դղկոտր Բեհակդին Շարիրը, լուսավորության նախարար Սիրիատ Շուքրին և այլք:

Չմոռանանք նշել, որ «Յեղասպանություն» եզրույթը առաջին անգամ շրջանառության մեջ է դրել քրեական և միջազգային իրավունքի մասնագետ Ռաֆայել Լեմկինը 1944թ.<sup>1</sup>: Լեմկինի ընտանիքը Հոլոքոստի զոհ էր դարձել, և այս տերմինով վերջինս փորձեց նկարագրել 1915թ. Օսմանյան կայսրությունում հայերի զանգվածային կոտորածները:

Հայոց ցեղասպանությունը մարդկության մեծագույն ողբերգություններից մեկն է: Յեղասպանությունն իրազործվեց ոչ միայն երիտրուքական, այլև դրամից առաջ սովորական և դրանից հետո քեմալական վարչակարգերի կողմից: 19-րդ դարի վերջին Օսմանյան կայսրությունում հայերի ֆիզիկական ոչնչացման գաղափարը պետական քաղաքականության

<sup>57</sup> Marboe, Irmgard (2014). “Compensation and Damages in International Law and their Relevance for the Valuation of Expropriated Armenian Property,” International Criminal Law Review, Volume 14, Issue 2, p. 426.

<sup>1</sup> Aviva Cantor, Raphael Lemkin and the Genocide Convention: Living Legacy of a Lonely Lawyer A landmark conference explores Dr. Lemkin’s relentless work against genocide. p. 12.

մակարդակի բարձրացվեց և հմտորեն իրազործվեց 1890-ական-1922թթ.: Հայ ժողովուրդը զրկվեց ոչ միայն իր պատմական հայրենիքից, այլև դարերի ընթացքում ստեղծված պատմության և մշակույթի բազմաթիվ հուշարձաններից:

Գաղտնիք չէ, որ զանգվածային կոտորածներն ուղեկցվում էին նաև հայկական մշակութային ժառանգության ոչնչացմամբ և թալանով: Չէ որ Օսմանյան կայսրությունում հայկական եկեղեցիներն այն սրբատեղիներն էին, որի շորջը հավաքվում էր հայ ժողովուրդը, վերջիններս նաև ազգապահական նշանակության դեր էին կատարում: Եվ, հետևաբար, այս համատեքտում Օսմանյան կայսրության պայմաններում հայերի համար կարևորագույն նշանուկություն ունեցող կառույցներից մեկը՝ եկեղեցին դարձել էր խիստ վտանգավոր: Ուստի թուրքական իշխանություններին ոչինչ չէր մնում, քան ձռնամուխ լինել նաև ազգային հոգևոր-մշակութային եղեննի իրազործմանը ևս:

Թե ինչպես էր իրազործվում մի ողջ ժողովիդի կողոպուտը Օսմանյան կայսրության տարածքում կան բազմաթիվ վկայություններ ոչ միայն դա վերապրածների, այլև օտարազգիների ցուցունքներում: Այսպէս. Մուշում հայերի ու նրանց ունեցվածքի թալանի ու կոտորածի ականատես գերմանացու ցուցունքը՝ «1914թ. հոկտեմբերի վերջերին, երբ թուրքերը պատերազմի մեջ մտան, թուրք աստիճանավորները սկսցին հայերից խլել այն ամենը ինչի կարքն ունեին պատերազմի համար: Հայերի ողջ ունեցվածքը բռնագրավվեց: Ավելի ուշ յուրաքանչյուր թուրք կարող էր մտնել հայի խանութ ու վերցնել այն, ինչի կարիքն ուներ կամ ինչը կուզեր ունենալ...»: Ընդ որում թալանված իրերը բավականին էժան էին վաճառվում: Դրա համար կառավարության կողմից ստեղծվել էր հատուկ հանձնաժողով: Երեսում ֆունտ արժողությամբ գորգերը վաճառվում էին 4-5 ֆունտով: Խսկ մշակութային ար-

ժերները, ինչպիսիք օրինակ հնատիա գորերն ու երաժշտական նվազարաններն էին, հիմնականում անվճար էին բաժանվում: Վաճառքից կուտակված ամբողջ գումարը հավաքվում էր Ժանդարմերիայի պետ Ռուշի բեյի և նահանգապետ Ռեշի բեյի մոտ: Վերջինս այդ ամենը Կոստանդնուպոլիս տարավ անձամբ Թալեարին հանձննելու համար...»<sup>2</sup>:

Ըստ մի շարք վկայությունների և տարբեր արտասահմանյան աղբյուրների, հայերի դեմ ուղղված նմանատիա հանցագործությունն առաջին հերթին նրանց ազգային արժեքների և դավանանքի դեմ էր ուղղված, քանի որ պատմական Հայաստանի ամեն մի շրջան միշտ ունեցել է իր վաճքը, ովստատեղին կամ սրբավայրը, հոգևոր կրոնական իշխանության արռողատեղին: Վանական հաստատությունները, հոգևոր կրոնական կրթարանների կողքին միաժամանակ կային նաև ուսումնական, դաստիարակչական, գրչության և արվեստի կենտրոններ: Օրինակ, մշակույթի մեծ կենտրոններ են եղել Սուշի Սք. Կարապետի, Աղթամարի, Վարազի, Նարեկի, Սանահինի, Հաղբատի, Կամրջաձորի, Գոշավանքի, Տարեկի, Գլածորի, Էջմիածնի, Հովհաննավանքի, Հաղարծինի, Մեծոփի, Բաղեշի, Կեշառիսի, Խոր Վիրապի, Մարմաշենի, Այրի Վաճրի, Սևանի և այլ վայրերի բազմաթիվ վանքերը, որոնք պատմականորեն խւկապես նշանակալից դեր են ունեցել հայ ժողովրդի կրոնական, ազգային և նաև մշակութային կյանքում<sup>3</sup>:

Հայոց ցեղասպանության վերաբերյալ բազում աշխատություններ կան կատարված թե՛ տեղի, և թե՛ արտասահմանյան հետազոտողների կողմից, սակայն դրանց թվում թի

<sup>2</sup> Քարսեղով Յու., Յեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները, Երևան, 1999, էջ 6-8:

<sup>3</sup> Հ.Տաճառ Ծ. ՎՐԴ. Եարտընեամ, Հայաստանի վանքերում և եկեղեցիներում մշակութային կորուստը 1894-1896 և 1915-1925 տարիներում: Վեմետիկ, Ս. Ղազար, 2001, էջ 20-21:

մաս են կազմում այնպիսիները, որոնք անդրադարձ են կատարել նաև եղեռնի ընթացքում մեր եկեղեցիների ունեցած հյուրական կորուստներին:

Հայոց ցեղասպանությանը, այսպես կոչված, որակում տվողների փաստարկներից մեկն էլ եկեղեցիները, վաճքերը և հոգևորականներն են, և ինչպես ամերիկյան դեսպան Հենրի Սորգենբաուն է նրան անվանել՝ պատմության մեծագույն հրեշներից մեկի «Կարմիր Սուլթանի»՝ Աբրու Համիլի նախաձեռնությամբ միայն 1894-1896թթ. իրազործվեցին սարսափացդու կոտորածներ՝ Թուրքիայի, Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի սահմանների վրա, որի արոյունը եղավ 200000-ից ավել մարդկանց տանջամահ լինելը, հարյուրավոր վաճքերի ու եկեղեցիների կողոպուտը, այրումը, մշակութային հնությունների փշացումը:

Այսպես. «300000ի մօտ զոհեր ինկած էին Ապտիլ Համիտի դահիճներու հարուածներուն տակ, 2500 վայրեր տակնուիրայ եղած էին և 568 եկեղեցիներ ու վաճքեր քանդուած կամ մզկիթի վերածուած էին»<sup>4</sup>:

1896թ. վերաբերող տեղեկագրից պարզ է դառնում, որ «Մահմեդական խուժանն իր կատաղութիւնը ամենէն աւելի քափեց հայ վաճօրէից, եկեղեցաց, դպրոցաց և մատենադարանաց վրայ: Ասոնք, այսօր, առհասարակ աւերակաց կոյտեր դարձած են, մանաւանդ զիտերու և գաւառերու մեջը: Աղքամարի վանուց դրսի տունն, որ՝ բացի եկեղեցական անօթներէն և ծանրագին սպասներէն ու սփոռներէն, կը գտնուէր վանուց բոլոր հարատութիւնն, կողոպտեցաւ.... Կողոպտուցն և մեծաւ մասամբ այրեցան Նարեկի, Վարագի, Մարմրտի, Սուլք Խաչի, Սուլք Գրիգոր Լուսավորչի, Մեծովայ, Անգոյի

Սուլք Աստուածածնայ, Սահմանակ Վանուց և այլն, մեծ ու փոքր վաճօրայք և վանահարք ու միարանական անդամք այլ մեծաւ մասամբ սպասուեցան: Կողոպտուեցան դարձյալ Լիմ և Կոտուց Անապատներու դրսի տըներն և Ս. Էջմիածնի վաճքը:... Կողոպտուեցան վաճքերի ու եկեղեցիների քանիագին սպասներն, անօթներն, սփոռներն, և այլն, որոնց գումարը կը կազմե ահագին հարատութիւն: Սիայն Նարեկի և Վարագայ վանուց կողոպտած շարժական և անշարժ հարստութիւնը կը հասնի 5-1.000 լիրայի»<sup>5</sup>:

Նույն ժամանակաշրջանում Բաքերդի գյուղերում կողոպտվել և մասամբ կործանվել էր 36 եկեղեցի: Երգնկայում՝ 12 վաճք: Խօօանի Սր. Խաչ վաճքը կողոպտված և այրված է. գրադարանը նույնպես, որը ըստ դեպքերի ականատեսների ուներ ավելի քան 1000-ի հասնող հնատիպ գրքեր:

Ըստ Օրմանյանի<sup>6</sup>, 1912թ. Արևմտյան Հայաստանում հաշվվել է մոտ 2200 վաճք ու եկեղեցի, որոնց գերակշիռ մասը կողոպտվել ու ոչնչացվել է: Մինչեւ 1896թ. տեղեկագրից պարզվում է, որ մահմեդական խուժանի կատաղությունից անմասն չեն մնացել նաև Վասպորականի, Վարագա, Նարեկա, Կարմրավոր, և Գրիգոր Լուսավորչի, Մեծովայ, Անգոյի, սրբ. Աստվածածնի վաճքը, նաև Աղքամարի սրբ. Խաչ եկեղեցու պահոցը, սրբ. Էջմիածնի վաճքը և այլն<sup>7</sup>: Ըստ մի քանի տվյալների այդ դժվարին ժամանակներում ավելի քան 20000-ից ավելի ձեռագրեր ու հնատիպ մատյաններ են իր ճարակ դարձել<sup>8</sup>: Եղեռնի ժամնակ ոչնչացվեցին Կեսարիայի, Արմաշում պահկող հազարավոր ձեռագրեր: Կողոպտվեցին Տարոնի,

<sup>5</sup> Հ.Տաճառ Ծ. ՎՐԴ. Եարտընեան, նշվ. աշխ., էջ 26-27:

<sup>6</sup> Օրմանյան Ս. արք. Հայոց եկեղեցին, Թիֆլիս, 1913, էջ 259-269:

<sup>7</sup> «Արարատ» (ամսագիր սր. Էջմիածնի), 1896, դեկտեմբեր, էջ 585:

<sup>8</sup> Խոլավերդյան Կ, Սաակյան Բ Գеноուդ արմեն сквозь призму десятилетий, Եր, 1995, стр 37-38.

<sup>4</sup> Հ.Տաճառ Ծ. ՎՐԴ. Եարտընեան, նշվ. աշխ., էջ 25:

Կարինի հայտնի վաճքերում պահվող ձեռագիր մատյանները: Թալանի ու սրբազնութեան ենթարկվեց Մշո հայոց առաջնորդարանը: «Սրբազն Օրմանեան տուած է մանրամասըն ցանկ մը հայկական բոլոր եկեղեցիներուն, որոնք 1915- Մեծ Աղետէն առաջ գոյութիւն ունէին Օսմանեան կայսրութեան մէջ: Ան 2000 էն աւելի եկեղեցիներ կը բըէ<sup>9</sup>»:

Այսպես. Հայաստանի ամեն մի վանք ու եկեղեցի քավական մնձ քանակով սպասքներ ու հնառն առարկաներ ուներ, որոնք իրենցից ներկայացնում էին թե՛ նյութական և թե՛ արվեստի մեծ արժեք: Այսպես. «Զնորուշի Հայոց վանքը ուներ 550 կտոր արծաք և ոսկի սպասներ: Իսկ Արմաշի Չարխափան Սր. Աստուածածնի վանքին մէջ կային աւելի քան 350 կտոր արծեքաւոր սպասներ: Միայն արծաք և ոսկի սպասներուն ընդհանուր քանակը պետք է ըլլայ առնուազն 6000 հազար կտոր»<sup>10</sup>:

Միջին հաշվով յուրաքանչյուր հայկական վանք ու եկեղեցի ուներ 5000 օսմանյան ոսկու արժողությամբ գորգեր և կարպետ: Միայն գորգերի և կարպետների նյութական կորուստը կազմում է առնվազն 5000000 օսմանյան ոսկի: Իսկ ծիսական նպատակներով կամ եկեղեցական արարողությունների ընթացքում գործածվում էին արծաքե, ոսկե, պղնձե սրբազն առարկաներ՝ սկիհներ, խաչեր, վարդապետական զավազաններ, բուրգառներ, խնկամաններ, մյուռոնի ամաններ, ջահեր, կանքեղներ, սափորներ, աղավնիներ, սրբառութեր, մատունքի պահարաններ, շուրջառի ճարմանդներ, արծաքե վակասներ, գոտիներ, մատանիներ, ծնծղաններ և այլն: Գլորգ Մեսրոպի մոտավոր հաշվարկներով 1915թ. նախօրեին հայկական կրտսական հաստատություններում պահվող

<sup>9</sup> Հ.Տաճառ Ծ. ՎՐԴ. Եարտըսեան, նշվ. աշխ., էջ 30:

<sup>10</sup> Հ.Տաճառ Ծ. ՎՐԴ. Եարտըսեան, նշվ. աշխ., էջ 76-77:

արծաթյա և ոսկյա սպասքների ընդհանուր քանակը պետք է լիներ առնվազն 600000 կտոր<sup>11</sup>:

Բացի արծաթյա ու ոսկյա իրից կողոպտվեցին նաև փայտափորազրական առարկաներ՝ դրմեր, գահեր, սեղաններ, գրակալներ, խաչեր, սվիններ, խոյակներ, տուփեր և այլն, սուրբ մատունքներ և քրիստոնեական այլ նվիրական առարկաներ, արվեստի այլ գործեր և սրբազն առարկաներ, վանական և եկեղեցական կալվածքներ և այլն: Որքա՞ն ձեռագրեր են ոչնչացվել 1915 թվականի ցեղասպանության ընթացքում: Պրոֆեսոր Սուրեն Գոլանճեանն իր արժեքավոր աշխատանքում հանգամանորեն ուսումնասիրել է 1915-ի Մեծ աղետով տեղի ունեցած հայ ձեռագրական անվերադարձ կորուստների պատմականը<sup>12</sup>:

Ընդ որում մշակութային այդ եղենն իրազործվում էր պետական մակարդակով: Թուրք զինվորներին իրամայված էր ոչնչացնել իրենց ճանապարհին հանդիպող ամեն քան: Դա գերազույնի՝ սուրբանի, կարգադրությունն էր: Մշակութային եղենն ուղեկցվում էր ոչ միայն վանքերի, եկեղեցիների, ոչնչացմամբ, այլև՝ համտարած կողոպուտով: Օրըստօրե Օսմանյան կայսրության բոլոր հայաբնակ գյուղերում մահմեդական խուժանի մոլեռանդությունը գալով ուժգնանում էր: Թուրք զինվորները չին քավարարվում միայն վանքերի ու եկեղեցիների կործանմամբ, նրանց դաշույնների ու սրերի զոհ էին դառնում նաև քահանաներն ու վաճահայրերը: Հրատարակված բազմաթիվ հուշամատյաններ վկայում են, որ մահմեդական խուժանի մոլեռանդությունն ուղեկցվում էր քահանաներին իրկիցելով, ողջակիցելով կամ ծաղր ու ծանակի են-

<sup>11</sup> Աստոյան Ա., Դարի կողոպուտը. Հայերի ունեցրկումը Օսմանյան կայսրությունում 1914-1923թթ., Ս. Մաշտոցի անվան հին ծովագրերի գիտահետազոտական ինստիտուտ, Եր., «Նախրի» հրատ. 2013, էջ 93:

<sup>12</sup> Հ.Տաճառ Ծ. ՎՐԴ. Եարտըսեան, նշվ. աշխ., էջ 80-81, 85:

բարկելով: Կոտորածներն ուղեկցվում էին նաև նյութական արժեքների զանգվածային ոչնչացմամբ: Փաստ էր, որ բնաջնջելով հայ ժողովրդի խոշոր զանգվածին և նրա ստեղծած մշակութային ու հոգեւոր արժեքները, երիտրուրքերը նպատակ էին հետապնդում պատմությունից ջնջել այն ամենը ինչը կապված էր հայ ժողովրդի հետ: Չե՞ որ բացի ուխտատեղի լինելուց վաճրերն ու եկեղեցիները նաև գրչության և արվեստի կենտրոններ էին և հայ ժողովրդի ազգային ու մշակութային կյանքում կարևոր դեր էին խաղում:

1894-1896 և 1909-1915թթ. հարյուրավոր վաճրեր ու եկեղեցիների քանդվեցին կամ շատ մեծ կորուստներ կրեցին: Մեծ մասի հետքն անգամ չկա: Ինչպես մեր մշակույթի արժեքների, այնպես էլ ձեռագրական կորուստների քանակի մասին ոչ մի ստույգ բան չկա: Պաշտոնական վկայության համաձայն, օրինակ, 1693-ին Լիմ Անապատ վաճրի մեջ գտնվել են 3124 ձեռագրեր<sup>13</sup>: Կորստի են մատնվել քազմաքիվ ձեռագրեր, ինչպես, օրինակ, Սր. Գրիգոր Նարեկացու ձեռքով գրված Նարեկը:

Կոտորածների լճացրում հայկական վաճրերի ու եկեղեցիների ոչնչացման առավել հաճախ և կրկնվող եղանակներից է եղել նաև դրանց փոխակերպումը մզկիրների: Հուշարձանների ոչնչացման այս եղանակը դարձյալ ուղեկցվել է ծիսական-կրոնական արարողակարգային այնպիսի տարրերով, ինչպիսիք են՝ մուտլման հոգեւորականի կողմից խաչի ու զանգի տապալումը զանգակատնից, հայ հոգեւորականին բռնի ու հրապարակայնորեն մուտլմանացնելը և այլն: Կողոպուտին և ավերածություններին բուրքական զորքերի մասնակցության մասին է վկայում նաև դեպքերի ականատես, Այնրափում ամերիկացի միսիոներ և քարոզիչ Էդվինը Բլիսը՝

<sup>13</sup> Հ.Տաճառ Ծ. ՎՐԴ. Եարտըսեան, նշվ. աշխ., էջ 88:

հաղորդելով, որ բալանից հետո բուրքական զորքերն իրենց հետ բերված նավով հրկիզել են քազմաքիվ տներ, եկեղեցիներ, վաճրեր, դպրոցներ ու խանութներ: Զկարողանալով ոչնչացնել մեծ ու քարաշեն եկեղեցիները՝ նրանք այլ միջոցների դիմեցին: Որոշ եկեղեցիներ անարգվեցին, սուրբ գրքերը՝ բաժան-բաժան արվեցին: Կոտորածների լճացրում հայկական վաճրերն ու եկեղեցիները հաճախ օգտագործվել են որպես հավաքատեղի սպանության, կանաց անարգման կամ ողջակիզման համար: Շատ հաճախ հոգեւոր հաստատությունը պղծելուց հետո գազազած ամբոխը ոչնչացրել է նաև քազմադարյան վաճրերի ու եկեղեցիների սրբապատկերները, զարդարանդակներն ու խաչքարերը, հրկիզել ազգային հարատությունները: Այսպես, միայն Բարերդում 1895թ. կողոպտվել ու հրկիզվել է 36 եկեղեցի, Երզնկայի գավառում՝ 12 վաճր, Սպարկերտում հիմնահատակ ավերվել են բոլոր եկեղեցիներն ու վաճրերը, իսկ դրանց մի մասը վերափոխվել է մզկիրի<sup>14</sup>:

1915թ. քրդերը հրկիզեցին Վարազա վաճրը, և կրակի բոցերի մեջ իրո ճարակ դարձան վաճրի նշանավոր 300 ձեռագրերը: Հնարավոր չէ տալ հայկական ձեռագրերի ճշգրիտ թիվը: Հայտնի է, որ միայն Վասպուրականում և Տարոնում 1890-1917թթ. ոչնչացվել է շուրջ 5000 ձեռագրեր<sup>15</sup>:

Զմոռանանք փաստել մեկ կարևոր հանգամանք ևս. Արևմտյան Հայաստանի վաճրերն ու եկեղեցիները շարունակում էին իրենց ձեռքում պահել հողային որոշ տարածություններ: Միայն Արդու Համիդի կառավարման տարիներին հայե-

<sup>14</sup> Պարսամյան Ս., Հայկական մշակութային արժեքների ոչնչացումն ու դրա հետևանքները 1894-1896թթ. համիլյան կոտորածների տարիներին: ՀՀ ԳԱԱ, Հայոց ցեղասպանության քանզարան-ինստիտուտ, «Յեղասպանագիտական հանդես» 2 (1), Եր., 2014, էջ 20-22, 24:

<sup>15</sup> Աստոյան Ա., նշվ. աշխ., էջ 92:

թից խվել է 13 վաճր, 27 եկեղեցի, 18 ազգային կալվածք, 16 գերեզմանոց և 7000 կտոր գյուղացիական հող՝<sup>16</sup>:

Բոլոր վաճքերն ու եկեղեցիներն ունեին անշարժ գույք: Բոնագրավվեցին և բալանվեցին վաճական և եկեղեցական կալվածքներ՝ վարժարաններ, իջևանատներ, տներ, խանութներ, այգիներ, պարտեզներ, անտառներ, ջրաղացներ, վարելահողներ, որոնք որպես հասույթ էին ծառայում վաճքերին, վաճականներին և եկեղեցական հաստատություններին: Օրինակ, Սսի կարողիկոսության ազգապատկան կալվածքների ընդհանուր մակերեսը կազմում էր ավելի քան 13000 քառակուսի կիլոմետր՝<sup>17</sup>:

Այժմ ներկայացնենք ըստ զավառների եկեղեցիների թիվը: Տարբեր աղբյուրներում և վավերագրերում նշվում են այս տեղեկությունները՝

1. Էրզրում. Կենտրոնը Ազիզիյե, Յարութիյե, Աշքալե, Փասինլեր, Նարման, Խսփիր, Օլրու, Շենքայա, Հորասան, Փազարյոլու և գյուղերը՝ 65 եկեղեցի:
2. Յուսուֆելի. Արդվինի կենտրոնական գյուղերը՝ 4 եկեղեցի:
3. Հընըս (Խնուս) (Էրզրում). Խնուսում և գյուղերում գտնված եկեղեցիները, որոնք հավելվել են Թեոդիկի կողմից՝ 19 եկեղեցի:
4. Էլեշկիրտ (Ալաշկերտ) (Էրզրում). Էլեշկիրտում և գյուղերում գտնված եկեղեցիները, որոնք հավելվել են Թեոդիկի կողմից՝ 6 եկեղեցի:
5. Դիյաղին (Էրզրում). Դիյաղինի գյուղերին պատկանող եկեղեցիները, որոնք հավելվել են Թեոդիկի կողմից՝ 4 եկեղեցի:

<sup>16</sup> Համբարյան Ա. Ս., Երիտրուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում 1908-0914թթ.: Եր.: 1979, էջ 131:

<sup>17</sup> Աստոյան Ա., նշվ. աշխ., էջ 93:

6. Փյուլյումյուր (Թունչելի-Դերսիմ). Փյուլյումյուրի գյուղերի եկեղեցիները՝ 6 եկեղեցի:
7. Փասինլեր (Էրզրում). Փասինլերի գյուղերի եկեղեցիները՝ 4 եկեղեցի:
8. Բալքրեսիր. Բալքրեսիր, Մուստաֆա քեմալ փաշա, Բիզա, Բանդըրման՝ 6 եկեղեցի:
9. Էրզինջան (Երզնկա). Էրզինջանի կենտրոնական գյուղերը՝ 52 եկեղեցի:
10. Բայրուրը (Բարերդ). Բայրուրի կենտրոնական գյուղերի եկեղեցիները՝ 34 եկեղեցի:
11. Բայրուրը (Բարերդ). Բայրուրի և Վերջինիս գյուղերի այն եկեղեցիները, որոնք նշվել են Թեոդիկի կողմից՝ 23 եկեղեցի:
12. Ուրֆա. Բիրեջիք, Սիվերեր, Սուրուչ, Հիլվան, Հարրան, Բոզովա, Հալֆերի՝ 12 եկեղեցի:
13. Ուրֆա. Եկեղեցիներ, որոնք հավելվել են Թեոդիկի կողմից՝ 5 եկեղեցի:
14. Հարփուր (Խարբերդ-Էլյազիզ). Հարփուրի կենտրոնական գյուղերի, Քարաքոչանի, Փալուի և Ջերանի եկեղեցիները՝ 67 եկեղեցի:
15. Չյունգյուշ (Դիարբերի-Տիգրանակերտ). Չյունգյուշի գավառների և գյուղերի եկեղեցիները՝ 2 եկեղեցի:
16. Զեյրուն (Մարաշ). Կենտրոնական քաղաքասերի, գյուղաքաղաքների և գյուղերի եկեղեցիները՝ 14 եկեղեցի:
17. Շապիճ-Կարահիսար. Շապիճ Կարահիսարի, Գիրեսունի և Սվասի մի մասին պատկանող կենտրոնների և գյուղերի եկեղեցիները՝ 32 եկեղեցի:
18. Բիրլիս (Բաղեշ). Թարվանի, Ահլարի, Մուրքի և Հիզանի եկեղեցիները՝ 66 եկեղեցի:

19. Զեմիշկեծեկ (Չմշկածակ) (Թունջելի-Դերսիմ), Զեմիշկեծեկին ենթակա գյուղերի եկեղեցիները՝ 20 եկեղեցի:
20. Արգանիմադենի (Ելազյիզ). Էրգանիի, Սիվերեքի, Բուլանըքի և Քահրայի եկեղեցիները՝ 10 եկեղեցի:
21. Ստամբուլ (Կոստանդնուպոլիս) եկորապական ափին՝ 36, ասիական ափին՝ 8, լնդիանուր՝ 44 եկեղեցի և այլն<sup>18</sup>:

Ըստ Հայկազ Ղազարյանի մոտավոր հաշվարկման Արևմտյան Հայաստանի և Փոքր Ասիայի մյուս վայրերում գտնվող վաճական ու եկեղեցական շենքերի ու համալիրների և դրանցում առկա ուլու, արծաթեղենի, պղնձե սպասներում, ձեռագրերի, արվեստի զանազան գործերի և այլ շարժական ու անշարժ գույքի արժեքը կզնիատվի ամենանվազագույնը 1.000.000.000.000 ոսկի դոլարը<sup>19</sup>:

Բոլոր այս ավերածությունների ու Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերի վիճակագրությունները կազմվել են Գարեգին Սրբանձտյանի<sup>20</sup> կողմից: Վերջինս ընդգրկում է հայկական գյուղերի, ավանների ու քաղաքների մանրամասն նկարագիրը, բնակչիների ապրուստը, նյութական միջոցները, գյուղերի ու քաղաքների վիճակն ու հայկական եկեղեցիների ու վանքերի մանրամասն նկարագիրը, վանքերում պահված ձեռագրերի ու հիշատակարանների թիվը, որոնք մտել են «Թորոս Արքարի» առաջին և երկրորդ հատորների բովանդակության մեջ: Սակայն ինչ-ինչ պատճառներով Բասենի, Դերջանի, Քեմախի, Բայազետի, Ալաշկերտի, Սպերի, Կիս-

կիմի, Էրգրումի և նրա թեմի վիճակագրությունները չեն մտել «Թորոս Արքարի» և ոչ մի հատորում և երբեւ լույս չեն տեսել<sup>21</sup>:

Վիճակագրությունները կազմվել են հետևյալ սկզբունքով՝ նախ նշվում է զավառի անունը, այնուհետև մանրամասն թվարկվում է, քեզ տվյալ զավառում ինչ քաղաք է մտնում, ամեն մի վայրում ինչ եկեղեցի կա, այդ եկեղեցին ինչպիսի հասույթ ու կալվածք ունի, ինչքան են եկեղեցու, ինչքան՝ պաշտոնյաների հասույթները: Ուստի և մեր այս հոդվածում փորձ է արվել վեր հանել վերոհիշյալ զավառների եկեղեցական նյութական ներուժին առնչվող տվյալները և տալ համապատասխան գնահատական: Այդ ամենը ներակայացրել ենք համապատասխանաբար աղյուսակ 1,2,3,4 և 5-ում:

Մինչև 1828-1829թթ. ուսու-բուրբական պատերազմը Էրգրումի նահանգը տրոհվում էր Էրգրում (Կարին, Օվա կամ Հովտիկ) Վերին Նասեն, Ստորին կամ Ներքին Նասեն, Ջրդան, Երզնկա, Բարերդ, Սպեր և Թորբում լիվանների<sup>22</sup>: Ըստ ֆրանսիացի ուղեգիր Ժորերի, 1805թ. Էրգրումն ուներ 71 հազար բնակիչ<sup>23</sup>: Օսմանյան կառավարությունը հսկայական շահույթ էր ստանում Էրգրումով տարվող տարանցիկ առևտորից<sup>24</sup>: Իսկ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրենին Էրգրումի նահանգի վարչական բաժանումն ուներ արդեն հետևյալ պատկերը՝

1. Էրգրումի զավառ. քաղկացած էր 9 զավառակներից՝ Էրգրում, Բարերդ, Բասեն, Խնոս, Ջրդի, Դերջան, Կիսկիմ, Սպեր և Նամրվան,

<sup>18</sup> Զարարյա Սիրդանողութ, Որոնվում են 1915-ի անկենդան հոգիները, եկեղեցիները, <http://akunq.net/am/?r=9726>:

<sup>19</sup> Հ.Տաճառ Ծ. ՎՐԴ. Եարտլսեան, նշվ. աշխ., էջ 101:

<sup>20</sup> Նշենք, որ Գարեգին Սրբանձտյանը հայ քանայիրության, քանազիտության, ազգագրության մեծ երախտավորն է ու սկզբնավորողը:

<sup>21</sup> «Բանբեր Հայաստանի արխիվների», 1976թ., N2, էջ 63:

<sup>22</sup> Մելքոնյան Ա.Ա., Էրգրում, Էրգրում նահանգի հայ ազգարնակչությունը XIX դարի առաջին երեսնամյակին (Պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 1994, էջ 28:

<sup>23</sup> Նոյն տեղում, էջ 35:

<sup>24</sup> Նոյն տեղում, էջ 42:

- Երգնկայի զավառ, որի կազմերն էին 5-ը՝ Երգնկա, Կամախ, Ռեֆահիե, Գուրուչայ և Բոլոմեր,
  - Բայազետի զավառ՝ կազմված Բայազետի, Դիաղինի, Ղարաբիլսեի, Ալաշկերտի և Այնքափի կազմերից:  
Երգրում նահանգը բաժանված էր 8 եկեղեցական թեմերի միջև, որոնք էին՝

1. Կարինի արքեպիսկոպոսական վիճակ՝ Երզրումի, Խնուսի, Թորքումի, Սպերի և Կիսկիմի գավառակներ,
  2. Երզնկայի եպիսկոպոսական վիճակ՝ Երզնկայի, Խնուսի Թորքումի, Սպերի և Կիսկիմի գավառակներ,
  3. Բաբերդի եպիսկոպոսական վիճակ՝ Բաբերդի գավառակ,
  4. Բասենի եպիսկոպոսական վիճակ՝ Բասենի գավառակ,
  5. Դերջանի եպիսկոպոսական վիճակ՝ Դերջանի գավառակ,
  6. Կամախի վանական վիճակ՝ Քեմախ և Գուրուչայ գավառակներ,
  7. Խորձեանի եպիսկոպոսական վիճակ՝ Ջըլիի գավառակ,
  8. Բագրեանդի եպիսկոպոսական վիճակ՝ Բայազետի սանցակ<sup>25</sup>:

Ուստի և մեր կողմից սույն հոդվածի շրջանակներում ներկայացրել ենք միայն որոշ զավառակների եկեղեցական նյութական ներուժը և հետևողական լինելը հետազայում տնտեսական պահանջատիրության հարցում:

Մատուցություն 1

92 ԵՐԱԾՈՒՅԹԻ ՎՐԱՍԴՅ ՍՊԻՇԵՆԴԻ ՎՐԵՄ Կ ՎՐԱՍԵ

Բարպարք/գործ	Եվրոպի	Եվրոպի	Եվրոպի հասուր և պայման	Վարժապահ	Վարժապահ	Տումբ հայոց	Թիվ հայոց	Պատմարամի թիվ	Պատմար- իկ	Օսուր. թիվ
Էղդում	Ա. Աստվածածին	Ա. Աստվածածին	19,700 ներքին	4000 ներքին	Փրկչան ճանաչոց	50,000 նախա- ազգ. Անտում	1950	14,000	1100	20000 100 պայմանիկ
Կամ գորո	Ամբողջական	Ա. Չուկանանս	1000 »	1000 »	Կարիքան ե	2000-ի համա-	280	2060	250	-
Շիմոց	Ա. Չուկանանս	Ա. Չուկանանս	1000 »	1000 »	Լուսադրույան »	1000 » »	36	400	50	70 թուրք
Մովոք Ֆերիկ	Ա. Չուկանանս	Ա. Չուկանանս	2000 »	2000 »	Պարտիկան »	2000 » »	25	300	251	300 »
Առտուրուա	Ամբողջական	Ա. Համբոր	1000 »	1000 »	Փրկչան »	1000 » »	75	700	50	30 »
Թվանշ	Ամբողջական	Ա. Խաչատրյան	2000 »	2000 »	Ս. Խաչատրյան »	2000 » »	32	350	40	210 »
Չիմօք	Ա. Խաչատրյան	Ա. Խաչատրյան	2000 »	2000 »	Ս. Խաչատրյան »	2000 » »	80	700	60	140 »
Քըզըլ Թիյիսան	Ա. Խաչատրյան	Ա. Խաչատրյան	1000 »	1000 »	Ս. Խաչատրյան »	1000 » »	30	230	17	70 »
Չիմարի գոյ	Ա. Խաչատրյան	Ա. Խաչատրյան	1500 »	1500 »	Վահանացյան »	2500 » »	35	300	25	300 »
Շիրակիոն	Ա. Աստվածածին	Ա. Աստվածածին	3000 մերքին	Մերքառավայ ծալի-	3000-ի համա-	105	1150	120	42 թուրք	
Արծարի	Ա. Խաչատրյան	Ա. Խաչատրյան	200 »	-	-	7 տ. հայ,	500	-	-	120 »
Ումետում	Քիմիստ թագավոր	Ա. Չամեր	2000 »	Սահական »	1500 »	47 լուսաբ	50	510	70	160 »
Կրիչք	Ա. Սարգսյան	Ա. Սարգսյան	2000 »	Սահական »	1200 »	55	590	80	70 »	
Գոյախան	Ա. Գոյախան	Ա. Գոյախան	1000 »	Գեղահան »	1000 »	33	350	70	140 »	
Շատրիշեմ	Ա. Շատրիշեմ	Ա. Գոյախան	1000 »	Ա. Գոյախան	1000 »	32	310	27	60 »	
Ղկէրիկ	Ա. Սարգսյան	Ա. Չուկանանս	2000 »	Խոստովան	2000 »	65	500	-	- »	
Երևինիա	Ա. Չուկանանս	1000 »	-	-	-	13	90	-	200 »	
Խաչաձավանը	-	-	-	-	-	8	70	-	140 »	
Շոյսանձոր	Ա. Շակոր	1500 »	Տրդադամ	2500 »	47	350	35	35	150 »	
Նորշեմ	Ա. Շակոր	600 »	-	-	15	130	-	140 »		
Ասպամբ	Ա. Սարգսյան	500	-	-	20	120	-	150 »		
Աղամազդ	Ա. Սարգսյան	1000 »	Վրշական	1000 »	270	40	40	210 »		

<sup>25</sup> Թաքոյան Ռ., Երգումի նահանջի հայ բնակչության բվաբանակը Մեծ Եղեռնի նախօրյակին: ՀՀ ԳԱԱ, Հայոց ցեղասպանության բանգարան-ինստիտուտ, «Ցեղասպանագիտական հանդես», 2 (1), 2014,էջ 32:

Քարտագիող	Եվրոպի	Եվրոպի	Եվրոպի հասություն կայումամբ	Կարժարարմ հասություն և ժամանակ	Վարժարարմ հասություն և ժամանակ	Տունք հայոց հայոց	Թիվ հայոց	Ուսամոդ- թիվ	Ուսամոդ- թիվ
Ողջի	Ա. Ասուլածածին	3000 նորդին	Արտօնածած ճակա- կայումամբ	Արտօնած ճակա- կայումամբ	Համաձայնադրյալն	150	1350	140	300 թուր
Վարչական կառավարություն	»	2500 »	Աշխատյան «	Համաձայնադրյալն	2000 »	101	950	110	200 »
Ասուլածածին	»	1000 »	Ուժինամ»	»	1000 »	20	200	35	250 »
Եթիվիկո	-	-	-	-	-	7	40	-	400 »
Երևանի մասնակիություն	-	-	-	-	-	8	75	-	150 »
Երևանի մասնակիություն	Ա. Գլորդ	1000 »	Լունյան	500 »	22	240	20	700 »	
Աշխատական մասնակիություն	Ա. Ասուլածածին	2000 »	Մամիկոնյան	1500 »	41	400	50	900 »	
Երևանի մասնակիություն	Ա. Հովհաննես	500 »	Բագրատունյանց	900 »	12	120	8	450 »	
Երևանի մասնակիություն	Ա. Ասուլածածին	2000 »	Լուսինյան	1500	40	380	30	140 »	
Հայոց պատմական մասնակիություն	Ա. Դրաշնուկապատմա	3000 »	Հայկազնյան	2500	98	1300	120	200 »	
Կելի	Ա. Միհևան	2500 »	Վրայան	2000 »	75	800	100	140 »	
Կըշմի	Ա. Միհևան	1000 »	Տիգրանյան	2000 »	23	200	30	6 »	
Բնուդ	Ա. Գլորդ	1000 »	Վահագինյան	2000 »	20	200	30	130 »	
Արդյունավետ սպուտուուր	Ա. Հայություն	500 նորդին	Վաղարշական ճապէ.	500-ի համարանակ.	17	160	25	200 »	
Անվանիչ	Ա. Միհևան	500	Արշակունյան	500 »	18	150	15	150 »	
Էղազեկ	Ա. Թագուման և Բարուդինեմուն	500 »	Արզական	500 »	9	80	10	60 »	
Ընթիկ	-	-	-	-	5	50	-	140 »	
Օղոթի	-	-	-	-	3	25	-	300 »	
Ենիկ Իթորում	Ա. Միհևան	2000 »	Սիրատյան	1500 »	40	300	25	30 »	
Վերին գեղ	Ա. Ասուլածածին	1000 »	Մուշեղյան	500 »	18	150	20	-	
Պայանիս	-	-	-	-	7	60	-	100 »	
Ռուժի	-	-	-	-	2	15	-	140 »	
Խնճումնելիք	-	-	-	-	2	16	-	100 »	

## Աղյուսակ 2

Սպեկ և կիսկիմ զավառակմերի եկեղեցակամ ներուժի վիճակագրություն<sup>27</sup>

Քարտագիող	Եվրոպի	Եվրոպի	Եվրոպի հասություն կայումամբ	Վարժարարմ հասություն և ժամանակ	Վարժարարմ հասություն և ժամանակ	Վարժարարմ հասություն և ժամանակ	Վարժարարմ հասություն և ժամանակ	Թիվ հայոց հայոց	Ուսամոդ- թիվ	
Հոգմուտ գյուղ	Ա. Ասուլածածին	500 նորդին	500 նորդին 1000 պատշտուն	Արտօնած ճակա- կայումամբ	Համաձայնադրյալն	500-ի համարանակ	25	260	30	1200 թուր
Օծուտ	Հայացուղ	»	500 1000	Արյատայմ	-	2	15	-	-	
Գող կամ կյոլ	Ա. Ասուլածածին	-	-	-	500	24	200	25	100 » »	
Սոբորիկ	-	-	-	-	-	35	300	-	-	
Էգէծող	Ա. Ասուլածածին	100 1000	-	-	-	15	120	-	150	
Մարցւաց կամ Մացամձ	» »	1000 2000	Մուշեղյան	1000	40	350	70	-	60	
Կամած	» »	500 1000	Ուժինյան	1000	1000	25	200	25	-	
Կիշմի	» »	» »	Վարդամյան	500	500	30	250	25	60	
Ենիկ իշտառանու	» »	» »	Վարդամյան	500	16	130	15	-	-	
Ղաշանց	» »	» »	Վարդիկյան	500	20	180	17	60		
Թշնամոր	» »	100 500	-	-	-	10	70	-	120	
Սպեր	» »	500 1000	Բագրատունյան	1000	25	230	26	300		
Զորոարենց	-	- 500	-	-	-	10	80	-	50	
Մեզմելոն	Ա. Ասուլածածին	500 1000	Լուսակրոյան	500	19	150	20	150		
Վարշենց	Ա. Ասուլածածին	100 500	-	-	-	13	120	-	120	
Ղիկիր	» »	500 1000	Պարթևյան	500	62	500	25	-		
Չիրաս	-	- 100	-	-	-	10	75	-	100	

<sup>27</sup> Կազմնել է Գ. Մինանճուլյանի վիճակագրությունների հիման վրա:

Բաղադր/գուղ	Եկամուտ	Եկամուտի հասության կավաճախք	Կարժարարմ	Վարժարարմի հասությ և ծախս	Տումբ հայց	Թիվ հայց	Ուսամող թիվ	Ուսամող/ օտար. թիվ
Եկամուտն առաջնային է:	Հայ Ապօպելին նկ.	100 500	-	-	10	80	-	-
Խաչառարքուն	Ա. Ասուլը. Իռապարոշ. Ա. Ասուլը.	1000 1500	Տղոատյամց	1000	27	250	30	-
Կիսկման (Քասապա)	1000 մերժին 2000 պաշտ.	1000 մերժին 2000 պաշտ.	Հայկազամ	1000-ի համապատկոք.	41	400	50	50 թուղթ
Միհամն	»	500 1000	Փոլչամ	200	15	135	17	80 »
Արտադաշն	»	1000 2000	Լուսավորչամ	1500	66	650	60	20 »
Միհամկոտ Վերի	հայ Կաթողիկ	-	-	-	46	300	-	50 »
Միհամկոտ Վարի	»	-	-	-	15	100	-	-
Կրմանձ	»	-	-	-	-	60	450	-
Կրմանձն	»	-	-	-	-	20	150	-
Կապուրիկ	»	-	-	-	-	150	1200	-
Գեղուտ	»	-	-	-	-	75	700	-
Վկմնեմն	»	-	-	-	-	30	230	-
Կամսարուտ	»	-	-	-	-	80	770	-
Մոլմենց	»	-	-	-	-	82	770	-
ճճապաղ	»	-	-	-	-	95	830	-
Կրսակ	»	-	-	-	-	41	350	-
Խամրամադր Վերի	»	-	-	-	-	96	800	-
Խամրամադր Վարի	»	-	-	-	-	63	550	-

### Աղյուսակ 3

Ղերջամ գավառակի Եկամուտական մերուժի վիճակագրություն<sup>28</sup>

Բաղադր/գուղ	Եկամուտ	Եկամուտի հասության կավաճախք	Կարժարարմ	Վարժարարմի հասությ և ծախս	Տումբ հայց	Թիվ հայց	Ուսամող թիվ	Ուսամող/ օտար. թիվ
Բնագոտիչ	Ա. Աստվածածին	2000 մերժ-4000 ներդրություն պաշտոնիցից	Դամամուն գեղջջ Ծաղկոց	3000 համապատասխան	-	1	10	-
Քայլարար	-	50	-	-	-	-	-	10 թուղթ
Խասիկամ գոմ	Ա. Աստվածածին	200 » 500	»	300 »	13	150	13	-
Չորմի	Ա. Փրկիչ	1000 » 3000	»	1500 »	50	550	50	250 թուղթ
Վարդուկ	Ա. Գևորգ	400 » 700	»	700 »	22	250	25	250 »
Գոմձոր	-	50 »	-	-	1	5	-	350 »
Խաչ	Ա. Պարոս Պետրոս	500 » 800 »	Ըստ գեղջջ	800 »	27	300	30	20 թուղթ
Վրարդոր	Ա. Սարգսյան	200 » 500 »	« »	500 »	17	200	20	50 »
Կյուրուղ	-	100 »	-	-	2	30	-	100 թուղթ
Չըսելոց	Ա. Յովհաննես	400 » 800 »	գել.	700 »	35	400	40	15 թուղթ
Ղումադար	Ա. Նշան	400 » 800 »	» »	700 »	30	300	35	50 թուղթ
Քարուղու	Ա. Յովհաննես	300 » 700	» »	600 »	32	300	40	80 »
Սպարայս	Ա. Աստվածածին	1500 » 3500 »	» »	2000 »	70	750	100	-
Կոթեն	Ա. Գևորգ	1600 » 3600 »	» »	2000 »	85	900	100	30 թուղթ
Ապրանձ	Ա. Փրկիչ	400 » 800 »	» »	700 »	35	400	50	50 »
Ծաղկարի	Ա. Աստվածածին	400 ներժ-800 ներժ. պաշտ.	Դամամուն գեղջջ Ծաղկոց	800-ի համագանձան.	45	500	50	15 թուղթ
Բում	-	- 150 »	-	-	5	50	-	20 »
Բառու	-	- 100 »	-	-	3	25	-	50 »

<sup>28</sup> Կազմվել է Գ. Միկամմտյանի վիճակագրությունների հիմնան վրա:

Քաղաք/գյուղ	Եկեղեցի	Եկեղեցու հասությ և Կպավաճք	Վարժարան	Վարժարամի հասությ և համակարգ	Տունը թույլ հայոց թիվ և Ասամող օտար թիվ
Հեղումի	Ա. Հոգիսամբեան	300 » 400 »	Դամամեն գեղջն Ծաղկց	500 »	13 150 25 15 »
Կղզաբուժ	Ա. Կարապատ	400 » 700 »	» »	700 »	30 350 50 10 թույլ
Համամատի	Ա. Խաչի	300 » 400 »	» »	500 »	15 150 20 10 թույլ
Փիրիչ	Ա. Արտէկամոս	1500 » 3500 »	» »	2000 »	70 700 100 40 թույլ
Սանց	Ա. Աստղին	400 » 800 »	» »	700 »	25 350 50 500 »
Համաշամանի	Ա. Աստղամանին	300 » 400 »	» »	400 »	25 250 25 25 թույլ
Բուլը	Ա. Գլորդ	500 » 1000 »	» »	800 »	55 600 70 -
Նսկվելին	Ա. Գլորդ	300 » 600 »	» »	700 »	20 230 30 150 թույլ
Սյու Հեղամի	Ա. Մարգին	100 » 200 »	» »	200 »	4 30 10 80 թույլ
Գոմիս	-	- 200 »	-	-	5 50 - 80 »
Կոլտի	-	- 200 »	-	-	5 50 - 30 »
Էլինի	Ա. Թորոս	200 մելք. 500 »	Դամամեն գեղջն Ծաղկց	500 »	17 200 25 20 »
Գալմինդրդակ	Ա. Գլորդ	200 մելք. 500 նկար. պաշտոնից	Դամամեն գեղջն Ծաղկց	600-ի համագանձակ.	17 200 25 20 թույլ
Միասոտն	-	1000 » 2000 »	Դամամեն գեղջն Ծաղկց	-	1 12 - 50 »
Ղըլմիկ	Ա. Սարգիս	- 50 »	Ծաղկց	-	2 16 - 70 »
Ղարակուտիմիք	-	- 50 »	-	-	2 16 - 150 »
Սամբարա	-	150 » 300 »	Դամամեն գեղջն Ծաղկց	500 »	10 100 15 150 »
Աստորին գոմ	Ա. Սարգիս	300 » 700 »	» »	800 »	27 300 40 400 թույլ
Խարդին	Ա. Աստուածածին	300 » 400 »	» »	600 »	20 200 30 20 թույլ
Վերի Ղազան	Ա. Աստվածածին	- 200 »	-	-	15 130 - -
Վարի Ղազան	-	-	Դամամեն կամուցմ.	-	4 30 7 -
Վշիս	Արթուր Ա. Թորոս	Վարդ	200 ն. 400 նկ. պշ.	Դամամեն գեղջն Ծաղկց	500 »
Խնճորի	Ա. Թարյան	200 400	» »	500 »	20 200 30 150 թույլ
Քարագուլյաք	Ա. Կարապատ	150 400	» »	500 »	17 200 25 700 թույլ

145

#### Միջուսակ 4

Քասախ գավառակի Եկեղեցակամ ներութի վիճակագրություն<sup>29</sup>

Քաղաք/գյուղ	Եկեղեցի	Եկեղեցու հասությ և կպավաճք	Վարժարան	Վարժարամի հասությ և համակարգ	Տունը թույլ հայոց թիվ և Ասամող օտար թիվ
Բնաման Քաղաք	Ա. Աստուածածին	500 մելք. 1000 հկեր. պաշտոնից	Տրդաւայն ճաղար.	համագանձակություն	35 300 28 7000
Ապարն Գյուղ	»	1000 » 1500	Վարդարայան »	համագանձակություն	47 500 40 100 »
Ուլի	»	500 » 700 »	Վահամայան »	»	20 350 35 20 թույլ
Չազպար	»	1000 » 1500 »	Լուսպարչյան »	»	700 » 400 50 20 թույլ
Գոյնոր	Ա. Աստուածածին	1000 » 1500 »	Արամյան ումբ. և Ծաղկ.	2000 »	45 500 70 150 »
Թամալընի	Ա. Աստվածածին	300 500	Խորտկովսկ ճաղար.	500 »	17 350 25 -
Կապան	Ա. Թորոս	300 500	Շորոգովսկ ճաղար.	500 »	9 95 15 30 թույլ
Բժնձան Վերի	Ա. Աստուածածին	1000 1500	Հայկովսկ ճաղար.	700 »	40 600 60 -
» Աստի	»	1000 2000	Արենակյան	1500	70 1200 110 25 թույլ
Արեգակ և Սշամ	Ա. Լշամ Վամբ	2000 2500	Վրիասամ	-	6 180 20 -
Չորոս	Տիգրան	2000 2500	Միջակունյան	1500	80 1300 120 -
» Ա Աստուածածին	Ա. Փոլիկ Վամբ	2000 2500	Պատրիկյան	700 »	25 425 50 -
Շամիշոյ	Ա. Աստուածածին	100 300	-	-	3 30 10 -
Չափանք	-	- 200 նկն. պաշտոնից	-	-	5 40 - 20 թույլ
» Ա Աստուածածին	-	- 150 »	-	-	4 80 - 6 թույլ
Մօ Արայիս	Ա. Թարյան Վամբ	6000 մելք. 4000 »	Ա. Թարյան Վամբ	4000-ի համագանձակ.	270 3000 200 250 թույլ
Մօ Արայիս ի Թորի Հայ	Ա. Աստվածածին	2000 » 3000 »	Արայիս Վամբ	2500 »	130 1300 100 -
Փոքր Արևոսա	Ա. Աստվածածին	1500 » 2000 »	Վահամայան »	1500 »	120 1200 70 150 թույլ
Թինտիս	Ա. Գլորդ	1000 » 1500 »	-	-	15 100 -
Չափանք	-	- 500 »	-	-	6 45 -
Տանձիկ	Ա. Խաչի	100 » 100 »	Արայիս Վամբ	700 »	31 500 40 -
Ղամարկա	Ա. Աստվածածին	800 » 1000 »	Մանուկյան Ճաղար	1000 »	40 700 50 -
Ղողկի ի Կիրճամբ	Ա. Գլորդ	500 » 1000 »	Մեպուհյան	700 »	30 400 41 500 թույլ

<sup>29</sup> Կազմվել է Գ. Միկանճյանին վիճակագրությունների հիման վրա:

Բայազենի և Արաշերտի ներեցական մերութի վիճակագործություն<sup>30</sup>

Քարաքիլու	Եկանդանի	Եկանդանի հասույթ և պահպանից	Կարմիր հասույթ	Վարժարան	Վարժարան Շատկոց	Տառմաքամի հասույթ և ծախալ	Տառմաքամի հասույթ և ծախալ	Թիվ Ռազմութիւն	Օտար. թիվ
Բայազենի	Ա. Կարապետո, Զիրամալոր, Ա. Աստվածածին	2000 նորից, 3000 պաշտոնից	Վիամյամ Շատկոց	2000-ի համաձակությամբ	125	1000	150	150	թաղաթօն կողմ.
Արյունան	Ա. Կարապետո, Զիրամալոր, Ա. Աստվածածին	500 և 1000 պշտ.	Վարժարան	500 »	12	100	15	15	60 թ.
Կրծանի	Ա. Աստվածածին	1000 մերժին, 1500 պշտ.	Հայկացան	2000 »	65	600	70	70	-
Թղում	Ա. Աստվածածին	500 մերժին, 1000 պշտ.	Վարժարան	500 »	31	300	40	40	-
Արտամ	Ա. Աստվածածին	1000 և, 1500 պշտ.	Տիգրաման	1000 »	53	500	50	50	-
Արդիպեն	Ա. Միջան	500 1000	Աշոտան	500 »	27	200	30	30	100 թ.
Ֆուջան	Ա. Աստվածածին	500 1000	Միքայելան	500 »	29	250	37	37	120 թ.
Ղարապազար	Ա. Աստվածածին	500 1000	Տրամաչան	500 »	20	150	25	25	-
Ղոմիկաճախ	» »	500 1000	Խոսրովան	500 »	24	200	30	30	-
Փողի	Արտը Խաչ	500 1000	Գրիշան	500 »	15	120	20	20	-
Վամոց գուղ	Ա. Դովիթաննեն	—	—	—	20	150	10	10	-
Ղարափիշիս	Ա. Աստվածածին	1000 2000	Հայկացան	1500	90	800	60	60	-
Չիրոյի	Ա. Դպրություն	500 1500	Վարդուշան	1000	33	280	40	40	-
Գուղորամ	Ա. Սահմանամուն	500 մերժ., 1500 պշտ.	Սահման ծաղկ.	1000-ի համեզ.	30	250	40	40	-
Ղազի	Ա. Սոնկամբոս	500 1000	Ա. Մելքոնյան	1000 »	15	120	20	20	-
Չորմալու	Ա. Աստվածածին	1000 1500	Լուսադրչան	1000 »	40	350	60	60	-
Երիցու	Ա. Սոնկամբոս	1000 1500	Ղոմինյան	1000 »	30	250	35	35	-
Սամկասար	Ա. Դպրություն	2000 2500	Գորգմբյան	2000 »	80	700	70	70	-

<sup>30</sup> Կապանի է Գ. Միկանօւյանի վիճակագործությունների հիման վրա:

Քարաքիլու/կուռ	Եկանդանի	Եկանդանի հասույթ և կավածք	Եկանդանի հասույթ և կավածք	Վարժարան	Վարժարան Համապատ	Վարժարան Համապատ	Վարժարան Համապատ	Վարժարան Համապատ	Թիվ Ռազմութիւն	Օտար. թիվ
Թղումագ կալս	Ա. Աստվածածին	Երեք խորան ս. Ապոլոն,	2000 2500	Բարդառայուման	2000 »	82	750	80	50 թուր. թիվ	1200
Համասա	Երեք խորան ս. Ա. Յանովիք	500 1000	Արշակունյան	1000 »	100 կարո.	950	70	70	-	-
Արլասպակամ	Ա. Աստվածածին	1000 1500	Արժուունյան	1000 »	80 կարո.	41	350	50	-	-
Խալու	Ա. Գևորգ	1000 1700	Խովարյան	1000 »	47	400	50	50	-	-
Ղայաստիկ	Ա. Աստվածածին	1000 1500	Մավիսյան	1000 »	27	200	29	29	-	-
Ֆառաքերիցու	—	— 500	—	—	11 հայ	280	—	—	-	-
Խաստուր	Ա. Աստվածածին	200 1000	Արագածիան	1000 »	28	250	35	35	-	-
Յանիկ Թեզեն	Ա. Սոնկամբոս	1000 մեր. 1500 պշտ.	Եկիտայան	1500ի համապատ	29	260	37	37	-	-
Նավուկ	Ա. Աստվածածին	1000 » 2000 »	Նոյան	1500 »	65	600	70	70	-	-
Ձկանի	—	1000 1500	Թղրդանյան	1500 »	20	160	27	27	-	-
Խըստը	—	500 1000	Արքանազան	1000 »	19	170	20	20	-	-
Լոր Գրու (Սեղբե)	—	— 1000	—	—	14	130	—	—	-	-
Հավակի	—	— 500	—	—	6	50	—	—	35 թուր.	-
Աշխալի	—	— 1000	—	—	14	125	—	—	200	-
Եղամոս	Ա. Յանովիք	200 700	Արմենական	500	12	100	15	15	90 »	-
Խոշամ	*	200 700	Սարեկան	500	10	90	12	12	50 »	-
Դամի Սեֆեր	—	— 500	—	—	13	110	—	—	40 »	-
Բամուց	Ա. Սոնկամբոս	1000 1500	Պարտույան	1000	30	285	35	35	100 »	-
Դըզու Ղայս	Ա. Աստվածածին	500 1000	Վահագնյան	1000	20	180	20	20	100 »	-

## ԺԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿՈՐՈՒՏՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԸՆՏ ՀՀ ԱՇԳԱՅԻՆ ԱՐԽԻՎՈՒՄ ԴԱՆՎՈՂ ՀԱՅՏԱՐԱՐՎԳՐԵՐԻ

Մինչ Հայոց ցեղասպանության պատճառներին նվիրված բազմաթիվ ուսումնասիրություններ կենտրոնանում են խնդրի ազգային, կրոնական, մշակութային, անգամ քաղաքական գործուների վրա, մեր կարծիքով, հիշյալ եղենագործության վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում կտան հայերի նյութական արժեքների յուրացման, նրանց հարստահարման փաստերը: Ավելին, Ա.Աստոյանի<sup>1</sup>, Կ.Մոնջյանի<sup>2</sup>, Վ.Եղիայանի<sup>3</sup> և այլոց ուսումնասիրություններում այն դիտարկվում է որպես կարևորագույն, վճռական դրդապատճառ կամ դրդապատճառներից առավել էականը: Հետևաբար, ամերաժեշտություն կա շարունակել Արևոտյան Հայաստանում հայերի ունեղրկման հարցերի շուրջ ուսումնասիրությունները, ըստ այդմ, հատուկ ուշադրություն դարձնելով հայերի նյութական կարողության հաշվառմանը, փաստերի և փաստարկների վերլուծությանը և դրանց տնտեսագիտական գնահատմանը:

Մեր կողմից իրականացված ուսումնասիրության հիմքում Հայաստանի Հանրապետության ազգային արխիվի նյութերն են, որոնք, մի կողմից, չեն կարող տալ նյութական կորուստների ամբողջական պատկերը, մյուս կողմից, վկայում են այն մասին,

<sup>1</sup> Անահին Աստոյան, “Դարձ կողովուստը. հայերի ունեղրկումը Օսմանյան կայությունում 1915-1923թթ., Երևան, 2012թ.:

<sup>2</sup> Garabet K. Mourdjian, “Emval-i Metruke” Ottoman and Turkish Republican Laws Pertaining to Armenian “Abandoned Properties,” 1915-1930

<sup>3</sup> Vartkes Yeghiayan, “Armenian-Americans sue Turkey over land claims.” Boston Globe. December 15, 2010. Retrieved December 19, 2010.

թե ինչ ծավալներ են ընդգրկել հայերի ունեղրկման փաստերը: Մասնավորապես, մեր վերլուծությունների համար օգտագործված տվյալները վերցված են ՀՀ Ազգային արխիվի 221 ֆոնում պահպող գործերից: Պետք է նկատի ունենալ, որ արխիվում պահպող գործերը կազմված են միայն Հայաստան ներգաղթած անձանց հայտարարագրերի հիման վրա: Հետևաբար, աշխարհի տարբեր անկյուններում ցեղասպանությունից մազապործ եղած հարյուր հազարափոր ընտանիքների վկայություններն այստեղ ներառված չեն կարող լինել:

Հարկ է նկատել, որ հարստահարվել են ոչ միայն առանձին անհատներ, ընտանիքներ ու համայնքներ, այլև հայերի կողմից հիմնադրված և հաջողությամբ գործող ընկերություններ, Արևոտյան Հայաստանի տարբեր մարզերում և տնտեսության տարբեր ոլորտներում գործող իրավաբանական անձններ՝ ընկերություններ, գործարաններ և գրասենյակներ:

Միայն Կարսի մարզում իրավաբանական անձանց 817 հայտարարությունների հիման վրա տարբեր արժույթները ուսուլվ փոխարկելով, դրամական կորուստները կազմում են 2,329,248 ոուրլի, բռնազրաված անշարժ գույքի արժեքը՝ 702,692 ոուրլի: Ինչ վերաբերվում է նյութերի, ապրանքների արժեքին, ապա ընդհանուր կորուստները (միայն հիշյալ քվով հայտարարագրերով) կազմել են 25,730,896 ոուրլի, իսկ կանխիկ դրամի կորուստները՝ 962,896: Այսպիսով, միայն Կարսի մարզում գործող իրավաբանական անձանց մի մասի (Եղենից հետո Հայաստանում հանգրվանածների վկայություններով միայն) ընդհանուր կորուստները կազմում են 37,009,915 ոուրլի<sup>4</sup>:

<sup>4</sup> ՀՀ Ազգային արխիվ. 221 ֆոն, գործեր N 12,14,15, 73-78, 93,94, 104,108-110, 114, 116, 120, 122-125, 128, 129, 134, 137, 138, 140, 142, 144, 146, 149, 150, 152, 154, 158, 161, 162, 174, 177, 180, 209, 224, 227, 235, 246-249, 251, 252, 256, 259-262, 264-267, 271, 272, 277, 279-282, 284, 285, 287-289, 291-294, 297-301, 306, 308, 314, 317-324, 328, 335, 339, 342, 343, 348, 351, 355-357, 360, 364, 365, 373, 375, 377, 379, 389, 396-399, 401-405.

Բիթլիսի, Վանի, Էրզրումի և այլ մարզերի իրավաբանական անձանց նյութական կորուստների մասին հայտարարագրված տվյալները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Հատկանշական է, որ զործարար աշխուժությամբ հայտնի Մուշի իրավաբանական անձանց նյութական կորուստների մասին տվյալներն ամենահամեստն են. դրամական կորուստները կազմում են 0 ռուբլի, բռնազրաված անշարժ գույքի արժեքը՝ 23,500 ռուբլի: Ինչ վերաբերվում է նյութերի, ապրանքների արժեքին, ապա ընդհանուր կորուստները կազմել են 93,963 ռուբլի, իսկ կանխիկ դրամի կորուստները՝ 38,100 ռուբլի: Արդյունքում Բիթլիսի մարզի Մուշի գավառի ընդհանուր կորուստները կազմում են 164,591 ռուբլի: Նման «համեստ» տվյալներն արդյունք են ոչ թե Արևմտյան Հայաստանում հայերին պատկանող իրավաբանական անձանց պասիվ մասնակցության, այլ այն բանի, որ արխիվում այս մարզի մասով առկա է ընդամենը յոթ հայտարարագիր:

#### Աղյուսակ 1

##### Հայերին պատկանող իրավաբանական անձանց նյութական կորուստները (արտահայտված ռուբլիներով)

Գործերի քանակ, (հատ)	Իրավաբանա- կան ամճ	Կորուստ <sup>5</sup>	Անշարժ գույք գիմ	Նյութերի, ապ- րանքների գիմ	Կանխիկ	Ընդհանուր կորուստ
817	Կարս	2329248	702692	25730896	962896	37009915
27	Բիթլիս	290888	26800	413627	5000	815413
7	Մուշի գավառ	0	23500	93963	38100	164591
36	Վան	82325	12000	419015	33000	689105
138	Էրզրում	816033	0	2903610	99695	4986665
28	Այլ մարզեր	13635	0	404095	180	556966

Նույնը վերաբերվում է Բիթլիս և Վան մարզերին, որտեղ դրամական կորուստները կազմում են համապատասխանաբար 290,888 և 82,325 ռուբլի, բռնազրաված անշարժ գույքի արժեքը՝ համապատասխանաբար 26,800 և 12,000 ռուբլի, նյութերի, ապրանքների արժեքի մասով ընդհանուր կորուստները կազմել են համապատասխանաբար 413,627 և 419,015 ռուբլի, իսկ կանխիկ դրամի կորուստները՝ համապատասխանաբար ընդամենը 5,000 և 33,000 ռուբլի: Արդյունքում Բիթլիս և Վան մարզերի ընդհանուր կորուստները համապատասխանաբար կազմում են 815,413 և 689,105 ռուբլի:

Տվյալների առումով Կարսի մարզից հետո համեմատաբար ավելի շատ տվյալներ կան Էրզրում մարզի մասին, որը ներկայացված է 138 հայտարարագրերով: Սիամամանակ, կասկած է հարուցում այն հանգամանքը, որ անշարժ գույքի և նյութերի, ապրանքների արժեքի կորուստներ ընդհանրապես չեն արձանագրվել, ինչը պայմանավորված է ոչ լիարժեք տեղեկատվությամբ: Հետևաբար՝ ցածր է նաև մարզի հայության իրավաբանական անձանց ընդհանուր կորուստների չափը՝ 4,986,665 ռուբլի:

Կարևոր է նկատել նաև, որ մնացած բոլոր մարզերի իրավաբանական անձանց նյութական կորուստների մասով արխիվում առկա են ընդամենը 28 հայտարարագրեր: Նման իրավիճակում իրավաբանական անձանց նյութական կորուստների մասին խիստ մոտավոր պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է հաշվարկել նիշին կորուստները՝ տվյալ մարզի իրավաբանական անձանց վերաբերյալ հայտարարագրված նյութական վնասների ընդհանուր արժեքը հարաբերելով հայտարարագրերի ընդհանուր թվին (տես աղյուսակ 2):

<sup>5</sup> Իրավաբանական անձանց վերաբերյալ աղյուսակում տեղ գտած «կորուստներ» սյունակը հստակեցված չէ նույնիսկ արխիվում պահպող գործերում, այսինքն՝ պարզ չէ թե հատկապես ինչ տիպի կորուստների մասին է խոսքը:

## Աղյուսակ 2

Արևմտյան Հայաստանի մի շարք մարզերի իրավաբանական անձանց միջին կորուստները

Կարս	45,300
Բիթիս	30,200
Մուշի գավառ	23,513
Վան	19,142
Էրզրում	36,135
Այլ մարզեր	19,892

Այսպիսով, միջին հաշվով, ցեղասպանության արդյունքում յուրաքանչյուր իրավաբանական անձին հասցված նյութական վճար տատանվում է 19 հազար ոուրլուց (Վանի և այլ մարզերի միջին ցուցանիշը) մինչև 45,300 ոուրլի Կարսի մարզում:

Ինչ վերաբերվում է տարբեր մարզերի վերաբերյալ հայտարարագրերի քանակի նման անհամաշափությանը, ապա հակված ենք այն կարծիքին, որ համեմատաբար ավելի շատ հայտարարագրեր են ստացվել Հայոց ցեղասպանությունից փրկվածներից, հատկապես այն մարզերից ներզադրածներից, որոնք առավել մոտ են գտնվել Հայաստանին: Մնացած մարզերից փախստականներն ու բռնահանվածներն արտազարդել են հարևան երկրներ և հեռավոր արտերկիր, որտեղ և ենթադրվում է որոնել հայերի նյութական կորուստների վերաբերյալ վկայություններ:

Վերը նշված կարծիքը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ ոչ միայն իրավաբանական, այլ նաև ֆիզիկական անձանց նյութական կորուստների մասով առկա է գրեթե համարելի անհամաշափություն (տե՛ս աղյուսակ 3):

Թեև ֆիզիկական անձանց նյութական կորուստների վերաբերյալ տվյալներն անհամեմատ ավելի շատ են, այնուամենայնիվ, ՀՀ Ազգային արխիվի փաստաթղթերը չեն կարող ներկայացնել նյութական վճարների լիարժեք պատկերը: Այս-

պես՝ օրինակ, Կարսի մարզի ֆիզիկական անձանց նյութական կորուստների վերաբերյալ հայտարարագրերն ավելին են, քան մնացած բոլորինը՝ միասին վերցրած: Այս մարզում անշարժ գույքից՝ կորցրած կամ բռնազավթած տների գինը կազմում է մոտ 8,947,608 ոուրլի, իսկ կահույքի, հագուստի և սպիտակեղենի, սպասքի գինը կազմում է համապատասխանաբար՝ 5,478,631, 5,215,228 և 1,493,733 ոուրլի: Ինչ վերաբերվում է քանարժեք իրերին, խառը՝ ոսկի, արծաթ և այլն, ապա դրանց գծով կորուստները կազմում են համապատասխանաբար՝ 2,104,467 ոուրլի:

## Աղյուսակ 3

Արևմտյան Հայաստանում ֆիզիկական անձանց պատկանող նյութական կորուստները (արտահայտված ոուրլիներով)

	Կարս	Բիթիս	Մուշի գավառ	Վան	Էրզրում	Այլ մարզեր
<b>Տների գին</b>	8947608	1204940	526650	1252538	1554347	593434
<b>Կահույքի գին</b>	5478631	276356	161542	356517	642277	326704
<b>Հազարամերսության գին</b>	5215228	352383	224619	369681	691457	180057
<b>Սպասքի գին</b>	1493733	266946	98661	148807	204054	54294
<b>Թամկարժեք իրերի գին</b>	2104467	219307	201745	169271	410929	330073
<b>Կամուկ փող</b>	2971713	508149	145425	289684	752027	661756
<b>Պարտասովմեր և արժեքորեր</b>	1012758	72114	12800	88970	131008	153241
<b>Միջին և պարենի գին</b>	8103588	1199847	570368	544731	1939581	361112
<b>Անասունների գին</b>	1993640	491006	285548	144130	474758	97573
<b>Անասունների գին</b>	727584	167740	79922	53025	197273	29247
<b>Բանող անասուն</b>	511833	69269	98002	30024	59705	24663
<b>Ընդհանուր անասուններ</b>	620556	325898	119220	49471	78118	11385
<b>Հարժական գույքի և գործիքների (կառք) գին</b>	1061045	130664	58255	107251	332039	101246
<b>Այլ ունեցվածքի գին</b>	5880334	873777	719804	832708	719899	356082
<b>Ընդհանուր կորուստների ըստ արխիվի</b>	54727073	7091145	3218174	4953269	23272407	5729867

## Հայտարարագրերի քանակն՝ ըստ մարզերի

Կարս	2087
Բիթլիս	273
Սուշի գավառ	162
Վան	248
Էրզրում	402
Այլ մարզեր	94

Նյութական կորուստներում զգալի տեղ են գրավում նաև կանխիկ փողն ու պարտատոմսերը և արժեքորդերը, որոնք Կարսի մարզից տեղափոխվածների պարագայում կազմել են 2,971,713 ռուբլի և 1,012,758 ռուբլի<sup>6</sup>: Նյութական վճասները հաշվառելիս և գնահատելիս կարեռվում է նաև մթերքի և պարենի, ինչպես նաև խոշոր եղջերավոր, մանր եղջերավոր, բանող անասունների արժեքը, որոնք կազմել են համապատասխանարար՝ 8,103,588, 1,993,640, 727,584, 511,833 ռուբլի, իսկ ընդհանուր անասունները 620,556 ռուբլի: Վերջապես, շարժական գույքի և գործիքների (կառք) և այլ ունեցվածքի գինը կազմում է համապատասխանարար՝ 1,061,045 ռուբլի և 5,880,334 ռուբլի: Կարսի մարզից տեղափոխվածների հայտարարագրած վճասներն, այսպիսով, կազմում են 54,727,073 ռուբլի:

Բիթլիսում, Վանում և Էրզրումում անշարժ գույքից կորցրած կամ բռնազավթած տների գինը կազմում է համապատասխանարար՝ 1,204,940, 526,650, 1252538 և 1554347 ռուբլի, իսկ կահույքի գինը կազմում է համապատասխանարար՝ 276355 ռուբլի (Բիթլիս), 161541 ռուբլի (Սուշ), 356516 ռուբլի (Վան), 642276 ռուբլի (Էրզրում): Հազուստի և սպի-

տակեղենի ու սպասքի գծով վճասները հիշյալ մարզերում կազմում են համապատասխանարար՝ 5,215,228 ռուբլի և 266,945 ռուբլի (Բիթլիս), 224,618 ռուբլի և 98,660 ռուբլի (Մուշ), 369,680 ռուբլի և 148,806 ռուբլի (Վան), 691,457 ռուբլի, 204,054 ռուբլի (Էրզրում): Ինչ վերաբերվում է քանարժեք իրերին, խառը՝ ոսկի, արծաք և այլն, ապա դրանց գծով կորուստները կազմում են համապատասխանարար՝ 219307 ռուբլի (Բիթլիս), 201745 ռուբլի (Սուշի գավառ), 169271 ռուբլի (Վան), 410929 (Էրզրում): Նյութական կորուստներում զգալի տեղ գրավող կանխիկ փողի ու պարտատոմսերի և արժեքորդերի արժեքը հիշյալ մարզերից Արևելյան Հայաստան ներգաղթածների պարագայում կազմել են 508,148 ռուբլի և 72,114 ռուբլի (Բիթլիս), 145,425 ռուբլի, 12,800 ռուբլի (Սուշի գավառ), 289,683 ռուբլի, 88,970 ռուբլի (Վան), 752,027 ռուբլի, 131,007 ռուբլի (Էրզրում): Մթերքի և պարենի, ինչպես նաև խոշոր եղջերավոր, մանր եղջերավոր ու բանող անասունների արժեքը նշյալ մարզերում կազմել են համապատասխանարար՝ 1,199,846 ռուբլի, 491,006 ռուբլի, 167,740 ռուբլի, իսկ ընդհանուր անասունները 69,268 ռուբլի և 325,898 ռուբլի (Բիթլիս), 570,368 ռուբլի, 285,547 ռուբլի, 79,922 ռուբլի, 98,001 ռուբլի, 119,219 ռուբլի (Սուշի գավառ), 544,731 ռուբլի, 144,130 ռուբլի, 53,025 ռուբլի, 30,024 ռուբլի, 49471 ռուբլի (Վան), 1,939,581 ռուբլի, 474,757 ռուբլի, 197,272 ռուբլի, 59,705 ռուբլի, 78,117 ռուբլի (Էրզրում): Իսկ շարժական գույքի և գործիքների (կառք) և այլ ունեցվածքի մասով նյութական վճասները կազմում են համապատասխանարար՝ 130,664 ռուբլի և 873,777 ռուբլի (Բիթլիս), 58,255 ռուբլի, 719,803 ռուբլի (Սուշի գավառ), 107,251 ռուբլի, 832,707 ռուբլի (Վան), 332,038 ռուբլի, 719,899 ռուբլի (Էրզրում): Հիշյալ մարզերից Արևելյան Հայաստան ներգաղթածների հայտարարագրած վճասներն, այսպիսով կազմում են համապատասխանարար 7,091,145 ռուբլի (Բիթլիս), 3,218,174 ռուբլի

<sup>6</sup> Աղյուսակների ամփոփ տվյալները հիմնականում ներկայացված են 1914թ. գներով:

(Սուշի գավառ), 4,953,268 ռուբլի (Վան), 23,272,406 ռուբլի (Երզրում): Չանդրադառնալով նյութական վճասների մանրամասներին, նշենք միայն, որ մնացած բոլոր մարզերում միասին վերցրած, համաձայն ՀՀ Ազգային արխիվի նյութերի, դրանք կազմում են 5,729,867 ռուբլի<sup>7</sup>:

Հատկանշական է ոչ միայն այն, որ բոլոր մարզերի մասշտարով նյութական վճասների որոշ քաղաքիչների, մասնավորապես, քանկարժեք իրերի մի մասի վերաբերյալ բացակայում են տվյալները, այլև այն հանգամանքը, որ տվյալ հայտարարագրերում մարդկային զոհերի քանակն ակնհայտորեն չի համապատասխանում իրականությանը (տե՛ս աղյուսակ 5), ինչը բույլ է տալիս ենթադրել, որ նյութական վճասները նույնան անգամ ավելի շատ են, որքան քազմից փաստված մարդկային կորուստները:

#### Աղյուսակ 5

Մարդկային զոհերի քանակն՝ ըստ մարզերի համաձայն  
ՀՀ Ազգային արխիվի տվյալների

Կարս	1135
Բիթլիս	57
Սուշի գավառ	1053
Վան	328
Երզրում	778
Այլ մարզեր	136

Այսպիսով, մեր կողմից ՀՀ ազգային արխիվ հայտարարագրերի հիման վրա կազմված աղյուսակներում արտացոլված են Կարսի մարզի և Արևմտյան Հայաստանի Բիթլիսի, Վանի, Երզրումի և այլ մարզերից Ցեղասպանության տարիներին ներկայիս Հայաստանի տարածք ներգաղթած 3266 ֆիզիկա-

կան և 1053 իրավաբանական անձանց կորուստների վերաբերյալ ամփոփ տվյալները:

Տվյալները, բնականաբար, չեն կարող ամբողջությամբ արտացոլել Ցեղասպանության տարիներին հայ ժողովրդի կրած նյութական և մարդկային կորուստներն ամբողջությամբ և արտահայտել այդ կորուստների ամբողջական պատկերը: Միաժամանակ, դրանք օգնում են մոտավոր պատկերացում կազմել միջին վիճակագրական նյութական կորուստների մասին, որոնք կրել են հայերը Ցեղասպանության հետևանքով:

Մեր համոզմամբ, Ցեղասպանության նյութական կորուստների գնահատման աշխատանքները պետք է համադրվեն տարբեր երկրներում հանգրվանած հայերի հայտարարագրերի, ապահովագրական ընկերությունների, քանկերի և այլ աղբյուրների, ինչպես նաև հայ և օտար փորձագետների աշխատանքներում բերված փաստագրական տվյալների համադրմամբ և մասնագիտական վերլուծությամբ՝ օգտագործելով Ցեղասպանության նյութական հատուցման մինչ օրս ձևավորված մեթոդներն ու մոտեցումները:

<sup>7</sup> 1913 թ. պաշտոնական փոխարժեքը կազմել է 1 քուրքական լիրան=8.54 ռուբլի:

## ՀԱՅՈՅ ՃԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԺՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՁԵՎԵՐԻ ՀԻՄԱԽԱՆԴԻՐՆԵՐԻ ԾՈՒՐ

Օսմանյան կայսրության տարածքում՝ պատմական Հայաստանում ապրող հայ ժողովրդի զանգվածային բնաջնջումը 20-րդ դարի առաջին ցեղասպանությունն էր: Ցեղասպանության քաղաքականությունը և գործողությունները, սկսվելով սուլթանական կառավարողներից 19-րդ դարի 90-ական թվականներին, շարունակվել են հետագա տարիներին և իրենց զագարնակետին հասել երիտրուրքերի և քեմալականների կառավարման ժամանակաշրջանում: Օսմանյան կայսրության և Թուրքիայի տարրեր վարչակարգերի կողմից ծրագրված ու հայ ժողովրդի դեմ շարունակարար իրականացված ցեղասպանական քայլերի գլխավոր հետևանքներն են հայրենազրկումը, հայ տարրի ֆիզիկական և քաղաքական բնաջնջումը, հայության ոչնչացման ուղղված զանգվածային կոտորածները, երնիկ զոտումները, ինչպես նաև հայկական ժառանգության ոչնչացումը և նրա սեփականության բոլոր ձևերի հափշտակումն ու նյութական հսկայական վճար:

Գաղտնիք չէ, որ ցանկացած պատերազմ, ռազմական գործողությունների իրականացում, մանավանդ, երբ այդ ամենը զուգորդվում է տարրեր ազգերի և ժողովուրդների բնաջնջմանը, ուղեկցվում է ոչնչացման ենթակա երնիկական խմբի ունեցվածքի բռնազրավման գործընթացով: Արդի միջազգային իրավունքը նմանատիպ հանցագործությունների կատարման հետ է կապում նյութական պատասխանատվության կրումը, որպես ունեցվածքի վերադարձում և սեփականության այլ իրավունքների վերականգնում (ուստիտուցիա), վնասների և կորուստների փոխհատուցում (կոմպենսացիա՝

տոկոսների համարժեքով և հավելումով), ընդ որում ինչպես ամրող ազգին կամ ազգային խմբին պատճառած քարոյական վճարի հատուցմանը՝ տնտեսական գնահատմամբ: Նյութական պատասխանատվությունները առաջանում է պետության կողմից նյութական վճար պատճառելու հետ կապված իր միջազգային պարտավորությունները խախտելու դեպքում, հետևաբար ցանկացած միջազգային իրավախախտում ենթադրում է պատճառված վճարի հատուցում:

Հայոց ցեղասպանության 100-ամյա տարեկան նախաշեմին ել մարդկության դեմ ուղղված ոճրագործությունը շղարձավ ո՛չ միջազգային իրավական, ո՛չ ել միջազգային տնտեսական դատապարտման առարկա: Ժամանակակից Թուրքիան մինչ օրս չի ճանաչել այն, քանի որ դա ենթադրում է Թուրքիայի նկատմամբ իրավական, քարոյական, հողային և նյութական պահանջների ներկայացում: Հայերի դեմ իրագործած ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետությանը միջազգային իրավական պատասխանատվության ենթարկելլ շափազմաց կարևոր է և հետապնդում է միաժամանակ մի քանի փոխկապակցված նպատակներ ու խնդիրներ: Այս անհրաժեշտ է, առաջին հերթին, կատարված հանցագործության հետևանքները վերացնելու և պատճառված նյութական ու քարոյական վճար հատուցելու, ինչպես նաև ցեղասպանության հանցագործության ընդհանուր և հատուկ կանխարգելման ու պատասխանատվություն կրող և այլ պետությունների հետագա վարքագծի վրա ազդելու համար: Անպատճելիությունը ծնում է նոր հանցագործություններ, ինչի վկայություններն են ժամանակակից աշխարհի տարրեր շրջաններում տեղի ունեցող ողբերգական իրադարձությունները: Միայն ցեղասպանության հետևանքների վերացմամբ կարելի է կանխել նոր ցեղասպանությունները:

Միջազգային հանցագործությունների և, առաջին հերթին, ցեղասպանության կատարման համար պետություններին միջազգային իրավական պատասխանատվության կանչելու հնարավորությունը միջազգային իրավունքում չի վիճարկվում: Հետևաբար, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների համար պետությունները ենթական են միջազգային իրավական (քաղաքական, նյութական և քարոյական) պատասխանատվության, իսկ անհատները՝ քրեական պատասխանատվության ու պատժի:

Հայոց ցեղասպանության համար միջազգային իրավական պատասխանատվության ձևերի և տեսակների հիմնահարցը մինչև օրս շարունակում է մնալ ժամանակակից միջազգային իրավունքի ամենաբարդ խնդիրներից մեկը: Ժամանակակից միջազգային իրավունքի զինանոցում գոյություն ունեցող միջազգային իրավական պատասխանատվության բոլոր ձևերն ու տեսակները կարող են կիրառելի լինել հայերի դեմ իրագործած ցեղասպանության նկատմամբ, ավելին՝ միայն դրանց համադրությամբ է հնարավոր այդ հանցանքով պատճառված նյութական և քարոյական վնասի լիակատար հատուցումը:

Ցեղասպանության համար պատասխանատվությունը դիտվում է ոչ միայն որպես իրավախսայտ պետության պարտականություն՝ կրել հակաիրավական արարքների անքարենապատ իրավական հետևանքները, այլ նաև որպես պետությունների՝ իր միջազգային իրավական պարտավորությունները խախտած պետությանը պահանջներ ներկայացնելու իրավունք<sup>1</sup>: Այսինքն՝ գոյություն ունեցող վնասի հատուցման բազմաթիվ ձևերը մի կողմից ներկայացնում են վնասի լիակատար հատուցման պարտականություն, մյուս կողմից՝ նման հատուցում ստանալու իրավունք: Միջազգային

հակաիրավական արարքի համար պատասխանատվություն կրող պետությունը պարտավոր է միջազգային հակաիրավական արարքով պատճառված վնասի համար լիարժեք հատուցում տրամադրել, ընդ որում վնասը ներառում է պետության հակաիրավական արարքով պատճառված ցանկացած կորուստ, ինչպես նյութական, այնպես էլ բարոյական:

Միջազգային հակաիրավական արարքով պատճառված վնասի լիարժեք հատուցումն իրականացվում է ուստիտուցիայի, փոխհատուցման և սատիսֆակցիայի ձևով՝ կամ առանձին, կամ դրանց համադրությամբ... (Խողվածներ 34-39): Որպես հատուցման հիմնական և օպտիմալ միջոց ճանաչվել է ուստիտուցիան: Փոխհատուցումը գտնվում է երկրորդ տեղում և կիրառվում է այն դեպքերում, եթե ուստիտուցիան ոչ արդյունավետ է կամ կապված է այնպիսի բեռի հետ, որն ընդհանրապես անհամաշափ է փոխհատուցումից ստացված օգտին: Սատիսֆակցիան բնութագրվում է որպես լրացուցիչ, բացառիկ միջոց, որը կիրառվում է այն դեպքում, եթե ուստիտուցիայի և փոխհատուցման կիրառումն անհնարին կամ ոչ բավարար է վնասը հատուցելու համար: Վնասի հատուցման գոյություն ունեցող բազմաթիվ ձևերից, մեր կարծիքով, միջազգային իրավական պատասխանատվության նշանակած ձևերը կարող են առավել կիրառելի լինել հայերի դեմ իրագործած ցեղասպանությամբ պատճառված նյութական և քարոյական վնասի հատուցման պարագայում:

Ուստիտուցիան, որպես միջազգային իրավական պատասխանատվության ձև, մինչև միջազգային հակաիրավական արարքը գոյություն ունեցած վիճակի վերականգնմանն ուղղված միջոցառումների ամբողջությունն է: Ուստիտուցիան իրերի նյութական արժեքների նախկին վիճակի վերականգ-

<sup>1</sup> Ст. Лукашук И.И., Право международной ответственности, М., «Волтерс Клювер», 2004, с. 211.

նումն է՝ այդ թվում նաև բնեղենով<sup>2</sup>: Ռեստիտուցիան միջազգային իրավական պատասխանատվության առավել առաջնային ձևն է, քանի որ հատուցման հիմնախնդիրը լուծելիս, նախ և առաջ առաջանում է մինչև հակաիրավական արարքի կատարումը գոյություն ունեցած վիճակի վերականգնման հնարավորության խնդիրը: Ռեստիտուցիան որպես այդպիսին կարող է ներառել ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական պատասխանատվության ձևեր: Ելնելով նշվածից՝ միջազգային իրավունքի գիտության մեջ առանձնացնում են ռեստիտուցիայի երկու տարատեսակներ՝ ռեստիտուցիա բնեղենով (restitutio in integrum), որը կայանում է նախկին նյութական վիճակի վերականգնման մեջ և ռեստորացիա կամ իրավական ռեստիտուցիա (restitutio in pristinum), որը խախտված իրավունքների վերականգնումն է: Տվյալ տարատեսակին են դասվում, մասնավորապես, ապօրինի բռնազավթման դադարեցումը, օրենսդրական, ենթաօրենսդրական, վարչական և դատական ակտերի անվավեր ճանաչումը և այլն<sup>3</sup>: Պատասխանատվության մասին հոդվածներում ռեստիտուցիային նվիրված է հոդված 35-ը, համաձայն որի՝ «միջազգային հակաիրավական արարքի համար պատասխանատվություն կրող պետությունը պարտավոր է ռեստիտուցիա իրականացնել, այսինքն՝ վերականգնել մինչև հակաիրավական արարքի կատարումը գոյություն ունեցած վիճակը, այն ժավալով, որով այդ ռեստիտուցիան».

- ա) նյութապես անհնար չէ,
- բ) չի առաջացնում փոխհատուցումից ստացված օգտին ակնհայտորեն անհամաշափ քեն»:

<sup>2</sup> Ст'я Левин Д.Б., Ответственность государств в современном международном праве, М., «Международные отношения», 1966, с. 115.

<sup>3</sup> Ст'я Курс международного права: В 7 т. Т. 3. Отв. ред. Н.А. Ушаков, М., «Наука», 1990, с. 237.

Անշուշտ, հայերի դեմ իրազործած ցեղասպանության պարագայում ևս ռեստիտուցիան ունի առաջնային նշանակություն: Ցեղասպանությամբ պատճառված վնասի հատուցման համար սովորաբար անհրաժեշտ է լինում ռեստիտուցիայի բոլոր հնարավոր տարատեսակների՝ ինչպես նյութական (restitutio in integrum), այնպես էլ ոչ նյութական (restitutio in pristinum), համադրումը:

Ցեղասպանության դեպքում նյութական ռեստիտուցիան ներառում է պատճառված նյութական վնասի՝ բնեղենով հատուցումը: Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, ցեղասպանությունը հաճախ ուղեկցվում է հետապնդվող խմբի ներկայացուցիչներին պատճառած լուրջ նյութական վնասով, քանզի վերջիններս սովորաբար ստիպված են լինում լրել իրենց շարժական և անշարժ գույքը (տներ, կալվածքներ, խնայողություններ, արեւբդեր և այլն): Որպես կանոն, ցեղասպանության զոհերի ունեցվածքը կամ բռնազրավորում է պետության կողմից, կամ ոչնչացվում, կամ պարզապես հափշտակվում է ոճրազործների կողմից: Հետևաբար, ցեղասպանության հանգագործության դեպքում պատասխանատվություն կրող պետությունը, առաջին հերթին, պարտավոր է հատուցել այդ հանգագործությամբ պատճառված վնասը բնեղենով, որը հիմնականում ներառում է հանցագործության արդյունքում ապօրինաբար վերցված գույքը ցեղասպանության զոհերին կամ նրանց ժառանգներին և իրավահաջորդներին վերադարձնելը, իսկ վնասված լինելու դեպքում այն վերականգնելը:

Ցավոր, հարյուր տարի անց դժվար է ակնկալել հայերի դեմ իրազործած ցեղասպանության զոհերին պատկանած գույքը վերադարձնելը՝ հատկապես շարժական գույքի պարագայում, քանզի տվյալ գույքի մեծամասնությունը դժվար թե պահպանված լինի: Այս տեսանկյունից, մեր կարծիքով, բնեղենով նյութական ռեստիտուցիան (restitutio in integrum)

դժվար թե հայերի դեմ իրազործած ցեղասպանության համար պատասխանատվության հիմնական ձև հանդիսան: Սակայն նշվածը ոչ մի կերպ կերպ չպետք է ընկալվի իբրև ընդհանրապես պատասխանատվության նման տեսակի բացառում: Հայերի դեմ իրազործած ցեղասպանության գոհերին պատկանած գույքը պահպանված լինելու վերաբերյալ բավարար հիմքերի ու ապացույցների առկայության բոլոր դեպքերում ուստիտուցիայի պահանջ կարող է ներկայացվել: Այլ կերպ է՝ դրված հարցը ուստորացիայի (այսպես կոչված «իրավական ուստիտուցիայի»), այսինքն՝ մինչև տվյալ հանցագործությունը գոյություն ունեցած իրավական վիճակի՝ status quo ante-ի վերականգնման դեպքում: Հենց այս իմաստով էլ ուստիտուցիան հիմնարար նշանակություն ունի հայերի դեմ իրազործած ցեղասպանությամբ պատճառած վճարի հատուցման գործում: Իրավական ուստիտուցիայի ձևեր կարող են լինել՝ ի խախտումը միջազգային իրավունքի ընդունած օրենքի անվավեր ճանաչումը, կամ հակաիրավական կերպով ընդունված վարչական, կամ դատական ակտի վերանայումը: Կարող է նաև որոշակի միջազգային պայմանագիրը դադարեցնելուն ուղղված միջոցներ ձեռնարկելու պահանջ ներկայացվել, եթե միջազգային իրավունքը քոյլ է տալիս դա<sup>4</sup>: Նշված ձևերից ցեղասպանության դեպքում առաջնային նշանակություն ունեն օրենսդրական փոփոխությունները, առաջին հերթին, ցեղասպանության բաղարականությունն ուղղակի կամ անուղղակի կերպով լեզիտիմացնող օրենքներն ու համապատասխան նորմատիվ իրավական ակտերն անվավեր ճանաչելը: Ինչպես ցոյց է տալիս պրակտիկան, ցեղասպանության հանցագործության կատարման դեպքում օրենսդիր մարմիններն ընդունում են օրենքներ, որոնք ուղղակի կամ քողարկված ձևով

<sup>4</sup> Ст'я Лукашук И.И., Право международной ответственности, М., «Волтерс Клювер», 2004, с. 214.

լեզիտիմացնում են ցեղասպանության բաղարականությունը: Նման չըռղարկված լեզիտիմացման դեպքերից են Թուրքիայում հայերի դեմ իրազործած ցեղասպանության տարիներին և դրանից անմիջապես հետո ընդունված օրենքները, մասնավորապես՝ հայերի սեփականության բռնագրավումն օրինականացնող և Թուրքիա նրանց վերադառնալու և բնակություն հաստատելու իրավունքից զրկող օրենքները և այլն: Հայերի դեմ իրազործած ցեղասպանության դեպքում իրավական ուստիտուցիան կարող է ներառել մասնավորապես, նշված իրավական ակտերն անվավեր ճանաչելը, քանզի առանց դրա անհնար է հայերի դեմ իրազործած ցեղասպանությամբ պատճառված վճարի լիարժեք հատուցումը: Նոր օրենքների և ենթաօրենսդրական ակտերի ընդունումը ևս պետք է դիտել որպես ցեղասպանության հանցագործության համար իրավական ուստիտուցիայի դրակորում: Ելնելով կոնկրետ իրավիճակից՝ տվյալ օրենսդրական ակտերը կարող են վերաբերել քրեական օրենսդրության մեջ փոփոխություններ նոցնելուն, ցեղասպանության փաստը չճանաչելու համար պատասխանատվություն նախատեսելուն (Խարայել, Ֆրանսիա), խմբի անդամներին պատճառված նյութական և ոչ նյութական վճարի հատուցմանը նպատակառդպած միջոցներ ընդունելուն, հասարակությունում հակասությունների հարթեցման աջակցմանն ու հետապնդվող խմբի անդամների ռեարիլ-տացիային և տվյալ հասարակությունում վերջիններիս վերաբերնեգրմանը և այլն: Գտնում ենք, որ սա սուկ օրինակելի ցանկ է և կարող է ներառել նաև իրավական հատուցման այլ տարատեսակներ: Անիրածեցն ենք համարում ընդգծել, որ հայերի դեմ իրազործած ցեղասպանության հետևանքով ցեղասպանության բազում գոհեր ստիպված են ապաստան գտնել այլ պետություններում (Միրիա, Լիբանան, Հորդանան, Պաղեստին, Բուլղարիա, Ռումինիա, Հունաստան, Կիպրոս,

Ֆրանսիա, ՌԴ, ԱՄՆ և այլն՝ վերածվելով փախատականների և կորցնելով կապերն իրենց հայրենակիցների հետ։ Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ գտնում ենք, որ որպես իրավական ռեստիտուցիայի տարատեսակ, ժամանակակից Թուրքիայի Հանրապետությունը պարտավոր է և կարող է համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ ուղղված նախնիների բնակության վայրեր ցեղասպանության զոհերի և նրանց ժառանգների ու իրավահաջորդների վերադարձի և վերաբնակվելու հնարավորության ապահովմանը, ինչը, մեր կարծիքով, լավագույն կերպով կանդրադառնար արևմտահայերի հետագա ասիմիլացիան կասեցնելուն և կաջակցեր պատմական հայրենիքում հայկական ազգաբնակչության հետագա վերականգնմանը։ Առանց նման պայմանների ստեղծման, առանց ցեղասպանության զոհերին և դրանց ժառանգներին ու իրավահաջորդներին ավանդական բնակության վայրեր վերադարձությամբ ապահովման, անհնար է տվյալ հանցագործությամբ պատճառված վնասի լիարժեք հատուցումը։

Այսպիսով, Թուրքիայի Հանրապետությունը՝ որպես հայերի դեմ իրագործած ցեղասպանության համար իրավական ռեստիտուցիայի (ռեստորացիայի) տարատեսակ, պարտավոր է, մասնավորապես՝ համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ ուղղված իրենց նախնիների բնակության վայրեր ցեղասպանության զոհերի և նրանց ժառանգների ու իրավահաջորդների վերադառնալու և վերաբնակվելու հնարավորության ապահովմանը, ինչպես նաև անվավեր ճանաչել Թուրքիայում հայերի դեմ իրագործած ցեղասպանության տարիներին և դրանից անմիջապես հետո ընդունած ցեղասպանության քաղաքականությունը լեզվիմացնող նորմատիվ իրավական ակտերը, մասնավորապես՝ հայերի սեփականության բոնագրավումն օրինականացնող և Թուրքիա նրանց

վերադարձալու և բնակություն հաստատելու իրավունքից գրկող օրենքները։

**Կոմպենսացիա (Փոխհատուցում):** Պատասխանատվության մասին հոդված 35-ի բովանդակության վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ ռեստիտուցիան բացարձակ բնույթ չի կրում։ Այն իրականացվում է այն ծավալով և այն չափով, որով այն անհնար և փոխհատուցումից ստացված օգտին անհամաչափ չէ։ Փոխհատուցումը ցեղասպանությամբ պատճառված վնասի հատուցման համընդգրկում ձև է։ Այն հատկապես կարևոր է հայերի դեմ իրագործված ցեղասպանության պարագայում և, ըստ Էռյան, կարող է այդ հանցագործության համար նյութական պատասխանատվության կենտրոնական ձև հանդիսանալ։ Ընդհանրապես, ցեղասպանության հանցագործության պարագայում փոխհատուցումը պատճառած վնասի հատուցման անհրաժեշտ, սակայն ոչ բավարար միջոց է։

Պատասխանատվության մասին հոդվածներում փոխհատուցման վերաբերյալ դրույթները սահմանված են հետևյալ կերպ։ «Միջազգային հակաիրավական արարքի համար պատասխանատվություն կրող պետությունը պարտավոր է փոխհատուցել այդպիսի արարքով պատճառած վնասն այնքանով, որքանով այդ վնասը չի հատուցվում ռեստիտուցիայով» (հոդված 36, կետ 1)։ Նույն հոդվածի կետ 2-ը սահմանել է, որ «Փոխհատուցումն ընդգրկում է ֆինանսական արտահայտությամբ հաշվարկվող ցանկացած վնաս՝ ներառյալ բաց բողնված օգուտն այնքանով, որքանով այն հաստատված է»։ Ինչպես երևում է նշված դրույթների վերլուծությունից, պետությունների պատասխանատվության մասին հոդվածները փոխհատուցման բավական ճկուն բանաձև են որդեգրել, ինչը, մեր կարծիքով, ընդհանուր առմամբ արտացոլում է միջազգային իրավական պրակտիկան և լիովին հիմնավոր-

ված է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ յուրաքանչյուր առանձին դեպքում փոխհատուցման չափի որոշումը պայմանավորված է համապատասխան իրավախախտման առանձնահատկություններով: Ընդ որում՝ պետք է նշել, որ դրամով հաշվարկվող վճարը ներառում է ինչպես բուն պետության, այնպես էլ դրա ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառած վճարը<sup>5</sup>: Ցեղասպանության հանցագործության պարագայում առաջնային նշանակություն ունի հենց ցեղասպանության զոհերին, այլ ոչ թե պետությանը պատճառած վճարը: Թեև հայերի դեմ իրագործած ցեղասպանության արդյունքում հենց Հայաստանի Հանրապետությանն է պատճառվել հսկայական նյութական վճար, որն արտահայտվել է ցեղասպանությամբ պատճառված վճարի վերացմանը կամ նվազեցմանն ուղղված համապատասխան զործողությունների իրականացման մեջ, այդուհանդերձ, փոխհատուցման հարցում հիմնական բեռն ընկնում է հենց ցեղասպանության զոհերին պատճառած վճարի վրա: Անշուշտ, Հայոց ցեղասպանության զոհ պետք է դիտել նախ և առաջ դրա հետևանքով անմիջականորեն տուժողներին՝ զոհվածներին և վերապրածներին: Այնուհետերձ, հայերի դեմ իրագործած ցեղասպանության, ինչպես նաև ցանկացած այլ ցեղասպանության պարագայում տուժող պետք է դիտվեն ոչ միայն այդ հանցագործության անմիջական զոհերը, այլև հետապնդվող խմբի բոլոր անդամները, որոնք կարող են դառնալ տվյալ հանցագործության հավանական զոհ<sup>6</sup>: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայերի դեմ իրագործած ցեղասպանությունը նպատակառողված էր հայ ժողովրդի ամբողջական բնաջնջմանը, այդ հանցագործու-

թյան զոհ պետք է դիտել 1915-1923թթ. Օսմանյան կայսրությունում կամ դրա վերահսկողության ներքո հայտնված տարածքներում գտնվող բոլոր հայերին, որոնց սպառնում էր զանգվածային բնաջնջման վտանգը:

Անիրաժեշտ ենք համարում նշել, որ փոխհատուցման ներական է ոչ միայն ցեղասպանության զոհերին պատճառված նյութական, այլ նաև ոչ նյութական (քարոյական) վճարը, որի տակ սովորաբար հասկանում են հարազատների և ազգականների կորուստը, ցավը և տառապանքը, անձի, բնակարանի կամ մասնավոր կյանքի վրա հարձակման հետ կապված զգացմունքները վիրավորելը և այլն: Միջազգային իրավունքի հանձնաժողովը պատասխանատվության մասին հոդվածների մեկնարանություններում հատուկ ընդգծել է ոչ նյութական վճարի հատուցման հնարավորությունը՝ նշելով այն հանգամանքը, որ ոչ նյութական վճարը կարող է ունենալ դրամական արտահայտություն և կարող է համապատասխան պահանջի հիմք դառնալ:

Պետք է նշել, որ հայերի դեմ իրագործած ցեղասպանության պարագայում հատկապես սուր է դրված ցեղասպանության զոհերի ժառանգների և իրավահաջորդների կողմից միջազգային իրավական պահանջներ ներկայացնելու հնարավորության խնդիրը, քանի որ այդ հանցագործության դեպքում զոհերի մեծամասնությունը ֆիզիկապես ոչնչացվում է՝ բնականարար զրկվելով իր իրավունքները և օրինական շահերը պաշտպանելու հնարավորությունից: Միջազգային իրավունքի հանձնաժողովը, անդրադառնալով նշված հիմնախնդրին, սահմանել է, որ «անձի մահվան հետ կապված պահանջների դեպքում վճարը, որպես կանոն, որոշվում է ժառանգների կամ իրավահաջորդների կողմից վճարների զնահատման հիման վրա»: Ըստ Էության, ցեղասպանության հանցագործության պարագայում հետապնդվող խմբի անդամների ֆիզիկական և

<sup>5</sup> Ст'ю Лукашук И.И., Право международной ответственности, М., «Волтерс Клювер», 2004, с. 217.

<sup>6</sup> Ст'ю Варданян В.М., Уголовная ответственность за геноцид. Афтореферат канд. дисс. Ставрополь, 2000, с. 13.

հոգեկան առողջությանը, ոեզեներացիային, հոգեկան վիճակին վնաս պատճառելը, նրանց ազգականների և հարազատների մահվան արդյունքում բոլոր տեսակի առավելություններից զրկվելն էլ կազմում են բարոյական վնասի հատուցման հիմքը:

Ամփոփելով կարող ենք նշել, Հայոց ցեղասպանության հետևանքով պատճառված այն վնասը, որը ռեստիտուցիայի առարկա դառնալ չի կարող, այսինքն՝ չի կարող վերականգնվել կամ հատուցվել բնեղենով, պետք է փոխհատուցվի դրամական արտահայտությամբ: Ընդ որում, համաձայն ժամանակակից միջազգային իրավունքի նորմերի և ձևավորված պրակտիկայի՝ փոխհատուցման ենթակա են ոչ միայն ցեղասպանության զոհերին պատճառած նյութական կորուստները, այլ նաև բարոյական վնասը: Փոխհատուցման նմանօրինակ ընկալումը միջազգային իրավական փաստարդերում թույլ է տալիս եզրակացնել, որ այն հայերի դեմ իրազործած ցեղասպանությամբ պատճառված վնասի նյութական հատուցման կատարյալ ձև կարող է լինել՝ հնարավորություն ընձեռելով փոխհատուցել ինչպես նյութական կորուստները, այնպես էլ բարոյական վնասը:

**Սատիսֆակցիա:** Սատիսֆակցիան միջազգային հակաիրավական արարքով պատճառած բարոյական վնասի հատուցման ձևն է: Սատիսֆակցիայի նման ընկալումը լայնորեն ճանաչված է ինչպես միջազգային իրավունքի գիտության մեջ, այնպես էլ պրակտիկայում<sup>7</sup>: Պատասխանատվության մասին հոդվածների համաձայն՝ «Միջազգային հակաիրավական արարքի համար պատասխանատվություն կրող պետությունը պարտավոր է սատիսֆակցիա տրամադրել տվյալ

արարքով պատճառած վնասի համար այնքանով, որքանով այն չի կարող հատուցվել ռեստիտուցիայով կամ փոխհատուցմամբ» (հոդված 37, կետ 1):

Թեև սատիսֆակցիայի ձևերի որևէ կոնկրետ ցանկ միջազգային իրավունքում նախատեսված չէ, այդուհանդերձ, նշված հոդվածի 2-րդ կետն առաջարկում է պատասխանատվության ձևեր, որոնք կարող են ներառվել սատիսֆակցիա հասկացության շրջանակների մեջ, մոտավոր ցանկը, մասնավորապես, նշելով, որ «սատիսֆակցիան կարող է արտահայտվել խախտման ճանաչման, ափսոսանքի արտահայտման, պաշտոնական ներողության կամ այլ պատշաճ ձևի միջոցով»: Սատիսֆակցիայի ձևը և ծավալը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կախված է իրավախսախտման բնույթից և ծանրությունից<sup>8</sup>: Երկի թե ոչ ոքի մոտ կասկած չի առաջանում այն հանգամանքը, որ ցեղասպանությունն իր բնույթով և ծանրությամբ ենթադրում է սատիսֆակցիայի ամենալուրջ ձևերի կիրառումը: Պատասխանատվության մասին հոդվածները նախատեսում են սատիսֆակցիայի կիրառման անհնարինությունը միայն այն դեպքում, եթե այն անհամաշափ է վնասին կամ կարող է ընդունել պատասխանատվություն կրող պետությանը նվաստացնող ձև:

Սատիսֆակցիայի որպես վնասի հատուցման ձև, հատկապես կարևոր է ցեղասպանության հանցագործության պարագայում: Ինչպես Հայոց ցեղասպանության, այնպես էլ ցեղասպանությունների այլ դեպքերում, շատ հաճախ պատասխանատվություն կրող պետությունը չի ճանաչում, մխտում է դրա կատարման փաստը, ահա ինչու արդեն իսկ ցեղասպանության փաստի ճանաչման հնարավորությունը՝ որպես

<sup>7</sup> Տե՛ս Լևին Դ.Բ., Ответственность государств в современном международном праве, М., «Международные отношения», 1966, с. 214-215; Василенко В.А., Ответственность государств за международные право-нарушения, Киев: «Вища школа», 1976, с. 213.

<sup>8</sup> Տե՛ս Рассказов Л.П., Упоров И.В., Понятие и принципы ответственности в международном праве //Московский журнал международного права, 2000, №2 (38), с. 43-44.

սատիսֆակցիա, ձեռք է բերում հատուկ նշանակություն: Թեև միջազգային իրավունքում գոյություն չունի հստակ ձևավորված պրակտիկա ցեղասպանության հանցագործության համար պատասխանատվության ձևերի և տեսակների հարցում, ինչը բույլ չի տալիս ներկայացնել ցեղասպանության համար կիրառելի սատիսֆակցիայի ձևերի լրիվ կամ զոնե մոտավոր ցանկը, այդուհանդերձ, ցեղասպանության հանցագործության բնույթը և կուտակված միջազգային իրավական պրակտիկան բույլ են տալիս ներառյալ, որ ցեղասպանության հանցագործության դեպքում որպես սատիսֆակցիայի տարրեր դրսուրումներ կարող են հանդես գալ ցեղասպանության համար անկյունաքարային նշանակություն ունեցող՝ ցեղասպանության փաստի պաշտոնական ճանաչումից գատ, նաև ձևական (ֆորմալ) ափսոսանքի արտահայտումը, ցեղասպանության փաստի ժխտման տարրեր դրսուրումների կանխմանն ուղղված անհրաժեշտ միջոցների ձեռնարկումը, այդ բվում՝ ցեղասպանության ժխտման քրեականացումը, ցեղասպանության մեջ մեղավոր անձանց դատապարտումը, տվյալ մարդկային խմբին պատկանող մշակութային, պատմական և կրոնական հուշարձանների պահպանությանը և վերականգնմանն ուղղված հատուկ միջոցառումների մշակումը, ի հիշատակ ցեղասպանության զոհերի հուշարձանների և հուշակորողների կառուցումը և այլն:

Հայոց ցեղասպանության պարագայում սատիսֆակցիան կարող է ներառել հետևյալ միջոցները. նախ և առաջ՝ Թուրքիայի Հանրապետության կողմից հայերի դեմ իրագործած ցեղասպանության փաստի պաշտոնական հրապարակային ճանաչումն ու ափսոսանքի և ցավակցության արտահայտումը, հայերի դեմ իրագործած ցեղասպանության փաստի մերժման քաղաքականությունից հրաժարումը և անհրաժեշտ օրենսդրության ընդունումը, որն ի վիճակի կլինի համարժեք կեր-

պով հակագողել հայերի դեմ իրագործած ցեղասպանության ժխտման տարատեսակ դրսուրումներին, հայերի դեմ իրագործած ցեղասպանության մեջ մեղավոր անձանց հրապարակային դատապարտումը, ինչպես նաև Թուրքիայի Հանրապետության տարածքում գտնվող հայկական հուշարձանների պահպանությանը և վերականգնմանն ուղղված հատուկ միջոցների մշակումը:

Սրանք ընդամենը սատիսֆակցիաների այն հնարավոր դրսուրումներն ու տարատեսակներն են, որոնք, մեր կարծիքով, կարող են կիրառելի լինել հայերի դեմ իրագործած ցեղասպանությամբ պատճառված ոչ նյութական վճասները հատուցելու պարագայում:

Ամփոփելով նշվածը՝ կցանկանայինք ևս մեկ անգամ նշել, որ միայն Հայոց ցեղասպանության փաստի պաշտոնական ճանաչումը և այդ հանցագործությամբ պատճառված վճասի լիարժեք հատուցումը կարող է պարարտ հոդ ստեղծել Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների նորմալացման համար և նպաստել տարածաշրջանում կայունության ամրապնդմանը: Հայ ժողովրդին և Հայաստանի Հանրապետության համար սա նախ և առաջ պատմական արդարության վերականգնում է: Թուրքիան, դատապարտելով Հայոց ցեղասպանությունը և ճանաչելով մարդկության դեմ այդ ոճի համար իր բարոյական, քաղաքական և իրավական պատասխանատվությունը, նախադրյալներ է ստեղծելու Հայաստանի ու հայության հետ բնականն հարաբերություններ հաստատելու ճանապարհին: Իր հարկան Թուրքիայի հետ խաղաղ գոյակցելու ձգտող Հայաստանի համար, նման դատապարտումն ու ճանաչումը անվտանգության նվազագույն երաշխիք է: Ավելին, գտնում ենք, որ միայն Հայոց ցեղասպանության փաստի պաշտոնական ճանաչումը Թուրքիայի կողմից կարող է ստեղծել բոլոր անհրաժեշտ

պայմանները միասնական Եվրոպական տարածության մեջ վերջինիս համապարփակ ինտեգրման համար, քանի որ Թուրքիան, որն ուզում է դառնալ Եվրամիության անդամ երկիր, միանշանակ ընդունելով 20-րդ դարասկզբին իր նախնիների կողմից կատարված ոճիրը, այդ կերպ կարող է ապացուցել, որ պատրաստ է արժանի լինելու այն ընտանիքի անդամ, որտեղ իսպան մերժվում է մարդկության դեմ կատարված հանցագործությունը՝ ցեղասպանությունը, արժեորվում են մարդու իրավունքներն ու ազատությունները:

## ՃԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՍՏԵՂԾՈՒՄ

### ՀԱՏՈՒՅՄՄԱՆ ՓԱԹԵԹԻ ՉԵՎԱՎՈՐՈՒՄ

Նկատի ունենալով, որ Թուրքիան վաղ թե ոչ ստիպված կլինի ընդունել հայերի ցեղասպանության փաստը, նաև հատուցման և վերադարձի անհրաժեշտությունը, հետևաբար հայկական կողմը պետք է պատրաստ լինի պահանջների փաթեթը ներկայացնելու բուրքական կողմին: Եթե մենք սպասենք, թե երբ է Թուրքիան դառնալու իսկապես ժողովրդավարական երկիր և քաղաքակիրք երկրի պահվածք դրսենուելու, ապա կարծում եմ դեռ եկար պետք է սպասենք: Այժմ ամենահարմար պահն է հանձնաժողովներ ձևավորելու, նրանց աշխատանքները կազմակերպելու և սկսելու համար, ցուցադրելու մեր բոլոր քայլերի և գործողությունների ամենայն լրջությունը, քանի որ ամբողջ աշխարհը գտնվում է հայոց ցեղասպանության հարյուրամյակի տարելիցի նշման արարողությունների ազդեցության տակ, որը կարևոր էր հատկապես նրանով, որ անընդհատ շեշտվում էր ոչ միայն հայոց ցեղասպանության անպատճելիության, այլև ընդհանրապես ամբողջ աշխարհում ցեղասպանություն երևույթի բացառման և, որ ամենակարևորն է, կանխարգելման մասին: Չի կարելի ուշացնել, իինա իսկապես ժամանակն է: Հանձնաժողովները այժմ պետք է ստեղծվեն և սկսեն աշխատել, բոլոր մնացած խնդիրները կարելի է հարթել աշխատանքների ընթացքում: Չատ կարևոր է հանձնաժողովների ստեղծման և կատարվող աշխատանքների մասին տեղեկացնել համաշխարհային հասարակայնությանը՝ անընդհատ տեղեկատվությամբ հարցը ուշադրության կենտրոնում պահելու համար: Սա կարող է

Թուրքիային պահել լարվածության մեջ և դրդել ոչ աղեկվատ քայլերի, որով նա ավելի խոցելի իրավիճակում կհայտնվի և կօգնի գործընթացին:

Քանի որ Հայաստանի Հանրապետությունը 1915 թվականին, դրանից առաջ և հետո իր տարածքում ապաստանել և սատարել է Արևմտյան Հայաստանից գաղթած հայ փախստականների մեծ մասին, ինչպես նաև հաշվի առնելով տարածքային և նյութական մեծ կորուստները, ապա ՀՀ-ն էլ հանդիսանում է իրեն և այդ հայերի կորցրած ունեցվածքի հատուցման ու վերադարձի պահանջատերը:

Հայաստանի Հանրապետությունում և սփյուռքում բավականին մեծ աշխատանք է կատարվել նյութական կորուստների հաշվարկման ուղղությամբ, որի արդյունքում հավաքված և արդեն մշակված տվյալները կարող են օգտագործվել և դրվել նոր ստեղծվող հանձնաժողովի աշխատանքների հիմքում:

Առաջին քայլը, որ պետք է արվի, դա «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՀԱՆՉԱԺՈՂՎ»-ի (ՀՀՀՎՀ) ստեղծումն է, որը արդեն կատարված աշխատանքներին կտա պաշտոնական տեսք և շարունակելով գործընթացը, ստացված պահանջատիրական փաթեթը վերջում կուղարկի բուրքական կառավարությանը: Հայաստանի Հանրապետությունում ահենի քանակությամբ փաստեր և փաստարդեր են հավաքվել, որոնք պետք է հաշվառել, մշակել, հաշվարկել և համակարգել:

Երկրորդ հանձնաժողովը դա «ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՈՒՆԵՑՎԱԾՔԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՀԱՆՉԱԺՈՂՎ»-ն է (ԵՇՈՒՀՎՀ), որը Հայ Առաքելական եկեղեցու, Թուրքիայի Հայոց պատրիարքարանի և Կիլիկիո Հայ կարողիկ եկեղեցու միացյալ ուժերով կզրադի հայ եկեղեցուց խլված ունեցվածքի հարցերով: Հայ եկեղեցին իրենից խլված եկեղեցիները, շինությունները, կալվածքները, իոդերը վերադարձնե-

լու համար մեծ աշխատանքներ ունի կատարելու և պետք է օգտագործի Թուրքիայում կրոնական փոքրամասնությունների իրավունքները ուսնահարելու փասով, դրա վրա սևեռելով համաշխարհային հասարակայնության, կրոնական կազմակերպությունների, Հռոմի պապի ուշադրությունը:

Որպես ցեղասպանության հետևանք՝ ունենալով շատ մեծ սփյուռք, որը առավելագույնս պետք է ընդգրկված լինի Հայաստանի Հանրապետության կողմից հատուցման և վերադարձի բոլոր փաստարդերի մշակման գործում և, որ շատ կարելի է, որպես առանձին ուժ պետք է ունենա պահանջատիրական իր փաթեթը: Այս պատճառով, երրորդ հանձնաժողովը պետք է ստեղծվի սփյուռքում գործող հայկական կազմակերպություններից, որոնց մի մասը (օր. Հայ դատի հանձնախումբը) շատ փաղուց զրադկում է ցեղասպանության հարցերով: Կարելի է օգտագործել արտասահմանում արդեն գործող հայկական խոշոր և ազդեցիկ կազմակերպությունները՝ նրանց հիմքի վրա ստեղծելով նպատակային հանձնաժողովներ: Դրանցից առաջինը «Եվրոպայի հայկական միությունների ֆորում»-ն է, որը Եվրոպայում գործող հայկական կազմակերպությունների միացյալ գործողությունների արդյունքում կարող է իր ներդրումն ունենալ պահանջատիրական փաթեթի ձևավորման գործում: Երկրորդ և ամենամեծ կազմակերպությունների միությունը կարող է լինել ԱՍՆ-ում գործող բոլոր հայկական կազմակերպությունները, որոնք միավորվելով, ամենակարևոր ուժերից մեկը պետք է հանդիսանան և իրենց շուրջը համախմբելով աշխարհի մնացած երկրների և Եվրոպայի հայկական կազմակերպություններին՝ ստեղծեն մեկ ազդեցիկ և հզոր կազմակերպչական ուժ Թուրքիայի ժխտողական քաղաքականության պատճեշը քանիելու և հատուցում իրականացնելու համար: Կազմակերպչական քայլերի արդյունքում ստեղծված «ՀԱՅԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱ-

ԴԱՐՁԻ ՀԱՍՏԱԿԵՐՀԱՅԻՆ ՄԻԱՑՅԱԼ ՀԱՆՉԱԺՈՂՈՎ»-ը (այսուհետ «ՀՀՎՀՄՀ»), օգտագործելով իրենց երկրների ազդեցիկ կազմակերպությունների, կուսակցությունների, ինչպես նաև կառավարությունների աջակցությունը ավելի արդյունավետ կրաքարձնի իր պահանջատիրական փաթերի ձևավորումը և հատուցումը իրականացնելու գործընթացը, իսկ հետագայում նաև իր՝ «ՀՀՎՀՄՀ»-ի կողմից ստեղծած «Հատուցման ֆոնդի» միջոցով, կիրականացնի հատուցման բաշխումը ցեղասպանության զոհերին և նրանց ժառանգներին: Սփյուռքի կողմից ներկայացվող պահանջները ավելի ազդեցիկ կլինեն, որովհետև լինելով այդ երկրների ներկայացուցիչներ՝ նրանք կօգտագործեն այդ երկրների կողմից՝ Թուրքիայի ազդեցությունը և հզորությունը տարածաշրջանում նվազեցնելու ցանկությունը: Իհարկե, ինչպես նշեցի, պետք է հզորացնել այդ կազմակերպությունները, միավորելով դրանք, ստեղծել ավելի գործունակութ, ներգրավելով տարբեր երկրների պետական և հասարակական կազմակերպությունների ազդեցիկ հայ գործիչներին և դեմքերին: Հասկանալով գործընթացի բարդությունները, անհրաժեշտ կլինի այդ աշխատանքներում ընդգրկել տարբեր երկրների հայի հասարակական, գիտական, քաղաքական, դեմքերի, հայտնի իրավագետների, ցեղասպանության հարցերի մասնագետների և նրանց օգնությամբ համակարգված գործողություններ իրականացնել, տեղեկացնելով այդ կատարված աշխատանքների մասին, հատկապես արտասահմանյան հանրությանը՝ մամուլում, միջազգային տարբեր ֆորումներում պարբերաբար զեկույցների, ինչպես նաև իրապարակումների միջոցով՝ օգտագործելով նաև դիվանագիտական ուղիները: Պետք է ձևավորել բոլոր երեք հանձնաժողովների աշխատանքները համակարգող խորհուրդ՝ հանձնաժողովների դեկանակարներից ՀՀ նախագահի կամ վարչապետի գլխավորությամբ: Պարզ է, որ հանձնաժողովները իրենց մասով կաշխա-

տեն արխիվային փաստարդերի հետ՝ միմյանց փոխանցելով անհրաժեշտ ինֆորմացիան, իսկ ավելի միշտ կլինի բոլոր տվյալները փոխանցել նոր ստեղծված «ՀԱՏՈՒՑՍԱՆ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՍԱԿԱՐԳՍԱՆ, ՄՇԱԿՍԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» (ՀՎՏՀՄՀԿ), (կամ Հատուցման տվյալների միասնական բազա - ՀՏՄԲ) որտեղ կկենտրոնացվի, կմշակվի և կհամակարգվի ունեցած արխիվային փաստարդերը և ստացված տվյալները: «ՀՎՏՀՄՀԿ»-ը կարող է ստեղծվել Ցեղասպանության բանգարանի արխիվի բազայի վրա և պետք է հագեցված լինի ամենաժամանակակից էլեկտրոնային հաշվողական համակարգերով: Ցուրաքանչյուր ամսվա վերջին միավորելով արդեն մշակված ինֆորմացիան՝ տվյալ պահի դրությամբ, հանձնաժողովները կարող են իրապարակել հատուցման չափերը՝ ըստ տարատեսակների, մինչև վերջնական տվյալների ձևավորումը: Արդյունքում արդեն ձևավորված հատուցման վերջնական տվյալների փաթեթը, ըստ տարատեսակների, կոնկրետ հաշվարկներով, իրավական և պատմական հիմնավորումներով արդեն ներկայացնել բուրքական կառավարությանը:

Բոլոր հաշվարկները ՀՎՏՀՄՀԿ -ի կողմից միավորելուց, համակարգելուց և հաստատելուց հետո, ուղարկել ՍԱԿ-ի համապատասխան հանձնաժողովին: (Հնարավոր է նաև ՀՀ-ում, ԱՄՆ-ում, Եվրոպայում իրապարակելուց բացի, դիվանագիտական ուղիներով ուղարկել բոլոր երկրներ): Համոզված պետք է ասեմ, որ նյութական փոխհատուցմանը զուգընթաց պետք է անընդհատ պնդել նաև 1920թ. նոյեմբերի 22-ի Սովետների Թուրքիայի հետ կնքած պայմանագրի նկատմամբ Վիլսոնի հանրահայտ արքիտրաֆային որոշման կատարումը, ըստ որի Հայաստանի Հանրապետության կազմի մեջ պետք է մտնի համարյա ամբողջ Երգրումի վիլայեթությունը, Վանի և Բիրլիսի երկու երրորդը, Տրապիզոնի վիլայեթության մեծ մասը և Տրա-

պիզոն նավահանգիստը: Այսպիսով՝ Հայաստանը կունենա ելք դեպի Սև ծով: Հայաստանին վերադարձվող տարածքը կկազմի համարյա 100 հազար քառակուսի կիլոմետր, և ամրող Հայաստանը կունենա 160 հազար կիլոմետր քառակուսի տարածք: Իսկ ինչ մնում է հայկական մնացած տարածքներին, որոնք պետք է հանձնվեն Հայաստանին, այդ տարածքների հարցը պետք է լուծել միջազգային իրավունքների սահմաններում, առանց դրանք Հայաստանին անմիջապես միացնելու պահանջի (Արա Պապյանի ասուլիսից):

Անհրաժեշտ կլինի ներկայացվող փաթեթներում ընդգրկել հատուցման տարրեր ուղղություններ: Հատուցում պետք է պահանջել ոչ միայն ունեցվածքի կորստի համար, այլ նաև կյանքից զրկելու (հատուցել զոհերի ժառանգներին), վճարի համար, որ հասցել է առողջությանը, ազատության կորստի, ինչպես նաև մասնագիտական ու տնտեսական զարգացմանը խոչընդոտելու համար:

Որպես ցեղասպանության զոհեր հանդես են զալիս ոչ միայն նրանք, ովքեր զոհվել են ցեղասպանության տարիներին, այլ նաև.

- ովքեր բռնի տեղահանվել են իրենց բնակավայրերից, ամբողջությամբ բռնելով իրենց ունեցվածքը,
- բռնի աշխատել են բուրքական իշխանությունների համար,
- ենթարկվել են բարոյական և այլ զրկանքների ու հետապնդումների,
- զրկված են եղել կրթություն ստանալու, մասնագիտական ունակությունները զարգացնելու հնարավորությունից և այլն:

Ավելի արդյունավետ կլինի հատուցման գործընթացը կազմակերպել ստեղծելով միջազգային խորհրդակցական հեղինակավոր կազմակերպություն, ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱ-

ԴԱՐՁԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՃՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ (ՀՎԱԽՀ), որի աշխատանքներին կմասնակցեն պետական հատուկ հանձնաժողովի ներկայացուցիչները, միջազգային իրավունքի և ցեղասպանության հայտնի մասնագետներ, ամրող գործընթացը միջազգային իրավունքի նորմերին և սկզբունքներին համապատասխան իրականացնելու համար:

## ՀԱՏՈՒՑՄԱՆ ՖՈՆԴԵՐԻ ՍՏԵՂՇՈՒՄ

Հատուցման ֆոնդերը պետք է ստեղծվեն, դեկավարվեն և վերահսկվեն անմիջապես հատուցման հանձնաժողովների կողմից: Քանի որ հանձնաժողովները աշխատելու են տարրեր ուղղություններով, ապա պահանջատիրական փաթեթը ներկայացնելուց հետո, հետագայում հատուցում իրականացնելու համար պետք է ունենան իրենց կողմից ստեղծված և վերահսկվող հատուցման ֆոնդը: Հատուցման ֆոնդերի ստեղծումը պետք է կազմակերպել հետևյալ կերպ՝ անհրաժեշտ է ստեղծել երեք ֆոնդ, որոնցից առաջինը՝

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՖՈՆԴ»-ը (ՀՀՀՖ-1), ցեղասպանության արդյունքում ունեցած կորուստների համար, Հայաստանի Հանրապետությանը՝ որպես պահանջատեր, որտեղ ստացված ֆինանսական միջոցները կտրամադրվեն ցեղասպանության զոհերի և նրանց ժառանգների փոխհատուցմանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացմանը:

Երկրորդ ֆոնդը «ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՖՈՆԴ»-ն է (ՀՀՀՖ-2), որը ստացված ֆինանսական միջոցներով կիրականացնի հատուցում՝ ցեղասպանության զոհերին կամ նրանց ժառանգներին, կենդանի մնացած զոհերին՝ միանվագ վճարների և նրանց սոցիալական և առողջական վիճակը բարելավելու համար պարբերաբար վճարների

տեսրով, կամ ժառանգներին՝ միանված վճարների տեսրով, որպես փոխառուցում: Ստեղծված հատուցման ֆունդերը ՀՀՀՖ-1 և ՀՀՀՖ-2 պետք է իրենց տրամադրության տակ ունենան բոլոր անհրաժեշտ փաստարդերը ու ցուցակները՝ հաստատված հատուցման հանձնաժողովների կողմից:

Երրորդ ֆոնդը՝ «ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՖՈՆԴ»-ը (ՀԵՀՖ) պետք է զբաղվի հայկական եկեղեցական ունեցվածքի վերադարձի և տնօրինման հարցերով:

Գործընթացը, ինչպես նշեցի, կարող է շատ երկար տևել, քանի որ պահանջվում է մանրակրկիտ և քրտնաշան աշխատանք: Թուրքիան բացառելով ցեղասպանության փաստը՝ միևնույն է պետք է վերջ ի վերջո ընդունի այն՝ քրոավելու համար երիտրուքական հանցավոր պատմական ժառանգությունը: Իսկ հայկական կողմը, իհարկե, պետք է հետևողական լինի, քանի որ չի կարելի բողնել, որպեսզի բուրքերը դառնան իրենց զոհերի (ունեցվածքի) ժառանգության տերերը, իհարկե բացառելով քրուքական կողմից խնդրի պատմաբարոյական հատուցման հարցը՝ քափված հայկական արյան համար, որը ընդմիշտ կմնա անհատուցելի՝ չհատուցված:

«ՀԱՅԱԿԱՆ ՀԱՍԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՖՈՆԴ»-ը պետք է ստացված ֆինանսական միջոցները ուղի նաև տարբեր երկրներում ուսումնական և մշակութային ծրագրերի իրականացմանը, օգնելու համար հայկական համայնքներին, նրանց սոցիալական խնդիրների լուծման, կրթական օջախների զարգացման, թերթերի ու գրքերի հրատարակման գործում, նպաստել տվյալ երկրում ապրող հայերի առավել ներգրավմանը տվյալ երկրի տնտեսական և հասարակական կյանքում:

Ինչպես «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՖՈՆԴ»-ը, այնպես էլ «ՀԱՅԱԿԱՆ ՀԱՍԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՖՈՆԴ»-ը պետք է զբաղվեն նաև բուրքերի կող-

մից բոնագրավված ունեցվածքի՝ շենք-շինությունների, հողերի, կալվածքների և այլ ունեցվածքի վերադարձի և դրանց հետագա տնօրինման խնդիրներով, որոնց շահագործումից, վարձակալությունից կամ վաճառքից ստացված միջոցները պետք է ուղղվեն Հայաստանի Հանրապետության տնտեսության, սփյուռքի հայ համայնքների զարգացման խնդիրներին, շնուռալով նաև Թուրքիայում ապրող հայ բնակչությանը, ամեն կերպ նպաստել նրանց ապրելակերպի բարելավմանը:

Հասկանալի է, որ հայկական եկեղեցական ունեցվածքի հարցերով կզբաղվի «ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՖՈՆԴ»-ը և հայկական պատրիարքարանը, որը ամբողջապես տնօրինելու է հայ եկեղեցու ունեցվածքի վերադարձի և հետագա օգտագործման գործընթացը:

Հայկական երեք ֆոնդերը համատեղ պետք է զբաղվեն նաև Թուրքիայում ցեղասպանության տարիներին ապրող հայերի բուրքական և արտասահմանյան բանկերում և ապահովագրական ընկերություններում ունեցած ավանդների հայտնաբերման խնդիրներով, իսկ ստանալուց հետո դրանք վերադարձնելու ավանդատերերին կամ նրանց ժառանգներին: Վերջիններիս բացակայության (ավանդատովի և նրա ժառանգի մահվան) դեպքում այդ գումարները ուղղել Հայաստանի Հանրապետության կամ հայկական սփյուռքի կարիքներին:

Բոլոր երեք ֆոնդերը առավել արդյունավետ աշխատելու համար պետք է համագործակցեն միմյանց հետ, հավանաբար ունենալով երեք ֆոնդերի դեկապարման համատեղ խորհուրդ, որը կկոորդինացնի և ավելի նպատակային կդարձնի ֆոնդերի կողմից իրականացվող բոլոր աշխատանքները: Պետք է համագործակցել Հայաստանի Հանրապետության և այլ երկրների համապատասխան մասնավոր և պետական արխիվային ֆոնդերի հետ, ըստ որի արդյունքում ստացված ցուցակներում ընդգրկված զոհերի և տուժողների թիվը, ամենայն հավանա-

կանությամբ, անընդհատ կարող է փոփոխվել, ավելանալ: Կատարվող աշխատանքների ընթացքում ի հայտ կգան բազմարիվ նոր փաստեր, փաստաբորբեր, նոր անուններ և անհրաժեշտ կլինի անընդհատ ճշտելու եղած ցուցակներն ու տվյալները: Ենթադրում են, որ հիմնական պահանջատիրական փաթերը թուրքական կառավարությանը ներկայացնելուց հետո էլ, հանձնաժողովները դեռ կշարունակեն իրենց աշխատանքները, քանի որ ամրող աշխարհով մեկ սփռված հայերի, տարբեր միջազգային կազմակերպությունների և անհատների մոտ գտնվող ցեղասպանությանը վերաբերող փաստարդերը բազմարիվ են և նրանց հավաքագրումը հեշտ չի լինի: Կատարված լրացուցիչ աշխատանքների արդյունքում անհրաժեշտ կլինի նոր, լրացուցիչ պահանջատիրական փաստարուղը մշակել և ներկայացնել թուրքական կողմին:

Հատուցման հանձնաժողովները համատեղ, ֆոնդերի միջոցով պետք է կատարեն ներդրումներ՝ օգնելու համար Թուրքիայում ապրող հայերին, իրականացնելով տարրեր ծրագրեր մեր հայրենակիցների վիճակը հնարավորինս բարելավելու համար, քանի որ Թուրքերից բարեփոխումներ ակնկալելն անհմաստ է: Հատուցման երեք ֆոնդերի ստեղծումը հիմնավորում են այն փաստով, որ, իմ կարծիքով շատ դժվար կլինի կազմակերպել ինչպես միասնական հանձնաժողովի, այնպես էլ միասնական ֆոնդի աշխատանքները: Գործ ունենալով օրիգինալ փաստարդերի հետ, առանձին հանձնաժողովները և նրանց ֆոնդերը կաշխատեն գերազանցապես իրենց հետարքքրող հարցերի շրջանակներում, քաշառելով պահանջների կրկնությունը հատուցման վերջնական փաթերում: Այս դեպքում նսեմացված չի լինի նաև հայկական սփյուռքի մեկությա պայքարը և նրա դերը Թուրքիայի կողմից ցեղասպանության ճանաշման, ցեղասպանության համաշխարհյան ճանաշման և Թուրքիային հատուցում պարտադրելու

ջանքերը իրականություն դարձնելու գործում: Ինքնուրույն գործընթացը կրաքարացնի նաև սփյուռքի ազդեցությունը ամրող աշխարհում, որը իր հերթին կոգնի Հայաստանի Հանրապետությանը ուժեղացնելու իր ազդեցությունը և դերը միջազգային հարաբերություններում: Ինչ վերաբերում է Հայ եկեղեցու ունեցվածքի հատուցմանը, ապա այս հարցը ամրողապես և առավելապես գտնվում է եկեղեցու իրավասության շրջանակներում, այս պատճառով առանձին հանձնաժողով և ֆոնդ ունենալու անհրաժեշտությունը բխում է ինքնըստիճրյան:

Սակայն իմ մտահոգությունը պետք է հայտնեմ այն մասին, որ թուրքական կողմից հատուցում սպասելը դեռևս անհրաժեշտ է: Հասկանում եմ նաև, որ հատուցման համար անհրաժեշտ կոնկրետ փաստեր, հիմնավոր փաստարդեր հավաքագրելը, որոնք ընդունելի կլինեն թուրքական կողմի համար, շատ դժվար է: Նրանք ամեն կերպ կխանգարեն գործընթացին և կասկածի տակ կդնեն ցանկացած ներկայացվող փաստաբուլը: Կարծում եմ պետք է գտնել այնպիսի ինքնատիպ լուծում, որը կատարի թուրքական կողմին փոխշահավետ պայմաններով հատուցում իրականացնել: Օրինակ՝ քանի որ ամրողապես և հավաստի հիմնավորումներով փաստեր հնարավոր չեն ներկայացնել 100 տոկոսանոց ճշգրտությամբ, ապա առաջարկում են ինքնատիպ լուծում: Այն պահանջները, որոնք ամրագրված են սեփականությունը հաստատող հավաստի կոնկրետ փաստարդերով, ներկայացնել առանձին փաթերով: Մնացածի համար որպես հիմք, որոշիչ, կատարվող հաշվարկների համար ընդունել ցեղասպանության՝ աշխարհում արդեն ընդունված գոհերի թիվը՝ 1 500 000-ը, կատարել հաշվարկ՝ ներգրավելով այդ աշխատանքներում նույնիսկ բոլոր մասնագետներին, և որոշել հայկական նահանգներում 1915 թվականին յուրաքանչյուր հային բաժին ընկնող միջի-

նացված սեփականության, ունեցվածքի չափը, վերածել այն արժույթի, որի նկատմամբ կիրառելով արժույթի փոխարժեքի փոփոխության գործակիցը անցած 100 տարվա ընթացքում, ստանալ հատուցման համար պահանջվող վերջնական միջինացված գումարը, որը բազմապատկելով 1 500 000-ով կստացվի հատուցման ամբողջական թիվը: Այս վերջնական թիվն էլ չնայած չի լինի 100 տոկոս ճշգրիտ, բայց որպես ավելի արդի, ինքնատիպ որոշում, փոխհամաձայնեցված հաշվարկների արդյունք, կարող է ընդունվել քուրքերի կողմից: Սա իհարկե չի վերաբերում կոնկրետ հիմնավոր փաստաթղթերով հաստատված մասնավոր, ինչպես նաև եկեղեցական ունեցվածքին:

Հատուցման հաշվարկի համար որպես հիմք կարող է ծառայել նաև այլ որոշիչ:

## ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ

### Վաղիմիր Հարությունյան

ՀՀ ԳԱԱ Մ. Քորանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն,  
ՀՀ ԳԱԱ բղբակից անդամ,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր:

### Գևորգ Կիրակոսյան

ՀՀ ազգային ժողովի աշխատակազմի քածնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ:

### Արթոր Թամազյան

ՀՀ ազգային ժողովի աշխատակազմի վարչության պետ, տնտեսագիտության թեկնածու:

### Անահիտ Ասոռյան

Մատենադարանի արխիվային բաժնի ավագ գիտաշխատող:

### Աննա Մակարյան

ՀՀ ԳԱԱ Մ. Քորանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող:

### Թարուլ Մանասերյան

«Այլընտրանք» հետազոտական կենտրոնի տնօրեն, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր:

### Թամարա Հարությունյան

ՀՀ ԳԱԱ Մ. Քորանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու:

### Արման Քերոբյան

ՀՀ ԳԱԱ Մ. Քորանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու:

### Արմեն Բաղրասարյան

ՀՀ վարչապետի աշխատակազմի փորձագետ, տնտեսագիտության թեկնածու:

### Սերգեյ Լազարյան

ՀՀ ԳԱԱ Մ. Քորանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող:

**ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ  
ԿՈՐՈՒՏՏՆԵՐԸ ՖԵԴԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ  
ԵՎ ԴՐԱՆՀ ՀԱՏՈՒՅՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Գիրական հոդվածների ժողովածու – 2015

Հրատ. խմբագիր՝  
Էջաղբումն ու ձևավորումը՝

Ա. Ռովակիմյան  
Մ. Համբարձումյանի

Հրատ. պատվեր № 641  
Չափսը՝ 60×84 <sup>1/16</sup>, 11.5 տպ. մամուլ:  
Տպաքանակը՝ 150:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,  
Երևան, Մարշալ Բաղրամյան 24: